



Forest

9
1978

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



* * *	Կակձալի կորստա մը
Ռ. ԱՐԱՄԵԱՆ	Մեռած քաղաքի պարիսպների տակ
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Բանաստեղծուքիւններ
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Կորստած փամփաշտ...
Ա. ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Վայրի ծառերու մէջ
»	»
»	»
»	»
Ն. ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ	Փողոցը
Փ. ՆԵՐԱՆԵԱՆ	Այցելուքիւն...
»	»
* * *	Անուարը վերաբերումներ...
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Հեքի Մուր եւ Հայաստանի Քանդակագործութիւնը
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Բ. Փափագիւնի «Թատերադրութեան արուեստը»
Ե. ԶԱՐԵՆՅ	Խեղկատակ
»	»
* * *	Գրադարանի զանօժեր
* * *	Մշակութային լուրեր

Բազին

ԱՄԱՍԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 1978 ՎԵՐՆԱԿՆԵՐ



Առաջին իսկ պատմությից ես զգացի, որ դեպի, եղելուքեան ու դրամէ գրի առնելու ժամանակների մէջ ոչ մի տարածութիւն չկայ, ու ես ահաւայ անցած օրերին նայում եմ ոչ թէ իբրև հետո մի անցնալ, այլ՝ միաձույլ երէկ ու այսօր, այնքան մօտ, որ յառաջ դիպչում եմ դեմքիս, պատի նման կանգնում, բարձրանում իմ աչքի։ Մի օրս ցանկութիւն առաջացաւ եւս գրելու եւ կամ մի կերպ եւս երէլ այսքան մօտ, կիպ կպած պատմութիւնը, որպէսզի ինչ-որ տարածութիւն ստեղծուի իմ ու այդ ժամանակի միջև։

Երեւի այդ տարածութիւնը իրստ անիրաւի է, երեւի եենց այդ տարածութեան մէջ են տեղադրուում կարօտը, ափսասանքը, անհնազանդան անցեալը ներառնանցանքու ուժը, որով այն դառնում է հոնը, միայն հոնը, պահպանելով ժամանակի բնականրական պատկերն ու մթնոլորտը։ Այս տարածութեան շնորհիւ է հնարաւոր դառնում ամէն մի *բարեւ* հասցնել համայնպէս յայտնութեան աստիճանին, ամէն մի *ցտեսութիւն*՝ կրօնական մարմնի ու ոլորտութեան։

...Երբեք տա է եղել գրողի նպատակը, այսպէս հասնել է դրան. անցեալը կանգնած է մեր կողքին ու տարածութիւն չկայ նրա ու մեր միջև։

ՌԱԳԱՅԷԼ ԱՐԱՄԵԱՆ
(«Երական թերթ», 1978, թիւ 31)

ԿՍԿԾԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ ՄԸ...

Մեր նախորդ թիւով արտած Ռաֆայէլ Արամեանի մահուան լուրը, ինչպէս կ'ընթացրուէր, իրական բոթ մը կզու բայր անոնց համար, որոնք հետեւած էին անոր ստեղծութիւններուն։
Նկարին մօտ արտագրուածը հասուած մըն է Ազաւնիի «Ճամբաների կողմեր» ս-

նաև պատմաւածքներու հասարկին մասին ստորագրած Ռաֆայէլ Արամեանի գրախօսականին՝ «Կրնաւաւած փորձումքիւմ, զուսպ սն», բնիւղէլու, խորացնելու, պատկերելու նաև ի՞նչ կարգութեան մասին վկայող գրութիւն մը, որուն երեսուցէն միայն մէկ շարքով էր, «Գրական քերթ»ի յաջորդ թիւին (32) մէջ կարգացելը իր մասունն գոյթը, Հայաստանի գրողներու փառաբանն եւ Անահիտ Մահիկեանի ու Դուրիթ Յովհաննէսի հրատեղանքի մտնող խօսքերուն հետ:

«Նշանաւոր գողը, երազալի մարդը, մեր ընկերը, մեր բարեկամը» սգրացող երկուստորգ բունտանդին խօսքէն միայն կրցանք կտահել, որ Արամեան յանկարծամահ կրած է. «Պատկէց Բնիւղ»՝ այլևս ելքեք չարք-նամալու համար»:

Իր սաղանդին լիութեան մէջ հոգին գործած Ռ. Արամեան Համաշխարհային երկրորդ պատերազմի փոթորիկով ատրիներուն սկսու երկիւր Հայաստանի մասունքին մէջ եւ վաթսուհարան իրականներուն արդէն կը համարուէր նորայայտ արձակագիրներուն ամէնէն ու շարքու գէթերէն մէկը, որ կը շարունակէր երկինք տնայէն՝ ինչպէս սկսած էր, սամնց փողի ու թմրուիչ, բտտին ու բանին հանդէպ սամեկով անպակաս երկիւրորդութիւն մը:

Երեսուն ու սեւիկ տարիներ գրականութեան մէջ շնչած Ռաֆայէլ Արամեան հրատարակած է միայն չորս հատորներ՝ — «Ռուբիկնամ եղբայրներ» — 1954, «Զբաւրած ձիեր» — 1963, «Ով գարնամալի» — 1965, «Մեռած Բաղաթի պարիսպների տակ» — 1970:

Հրատարակուած այս գործերը երկրորդ անգամ յիշատակեցինք ո՛չ թէ յիշգրութեանց մէջ աւելի ամուր տեղ մը տրուածներու համար սնունց, այլ ընդգծելու համար Արամեանի ներքին կենսապայտեան ակնբախ մէկ պիտը, — խտապահանջութիւնը իր անձին հանդէպ, անխառն գրագէտի պատասխանատուութիւնը:

Մեր հայրենիքին մէջ գրողը նիւթապէս քաշուելուց զործան մըն է եւ Ռաֆայէլ Արամեան անսնցմէ չէր, որոնք շարունակ հրատարակչական տահարեղութեան ենթակայ եղան, ամէնուն կողմէ ընդունուած ու յորդուած գրողէս էր ան եւ կրնար աւելի թիւով հատորներ հրատարակել. չհրատարակեց, որիչ խօսքով՝ նիւթական հնարաւորութիւններու հաշտին շղիջեցու հարպուել, սակիտքով որդիներեական գրականութեան անողնական վիճել, մնաց պարտութեան սրբողին սահմաններուն մէջ, երիտասարդական արձակի միւս սերունդին պէս, Հրանտ Մաթեոսեան, որ միայն երկու հատորի հեղինակ է տակաւին:

Ռաֆայէլ Արամեանի գրական միւս յատկանիշը մտապահան ցուցադրութիւններէն շղայթակղելու իր ամբողջութիւնը կրտ: Հինին պէ՞ գրուելու կամայական խողեր շարքեց, անոր վրայ նորին դասարարը կրտ իր մտասեւեռուցը, որուն հրատարականին տակ ձեւաւորեց իր յատպայն էջերը, օտակոյ գանսնք խտութեան փնտտուած արժանիքով եւ կենդանորար շնչառութեամբ:

«Ռուբիկնամ եղբայրներ»՝ շարունակականութեան տենդ, «Զբաւրած ձիեր»՝ թուրմութեան հրայոր, «Ով գարնամալի»՝ ձայնական սաք հարապատութիւն, «Մեռած Բաղաթի պարիսպների տակ»՝ խորհուրդի ձգողութիւն:

Հեքիաթէն եկած մարդիկ, հեքիաթայող արիւններ, հեքիաթային համ մը՝ բնութեանն ազբերացած, ասանդ դարձած սրբութիւններու շարք, աւանդութիւն դարձող նոր սուրբերու պաշտամունք, ո՛վ դարձանով:

Ռաֆայէլ Արամեանի յիշատակին առիթով՝ լա՛ւ ըսած էր խառնուածքային նոյն երակէն արիւր գրողէս մը, Սերո Խանգաղեան:

«Ով գարնամալի»՞մ մեր գրակաւարեան մէջ մի՞ գարնամալի գործ է: Զարմանալի, բայց ոչ գարնացնող: Զարմացնելը արուեստ չէ, արուեստը գարնամալիի մէջ է: Արտեանը մեկ չի գարնացնում, այլ մեր հայ կիսաթի հին ու նոր պատմութեան ու սգու գարնամալի էջեր է բացայայտում ժողովրդի աղբիս:

Սերո Խանգաղեան, Ռաֆայէլ Արամեան: Մէկ սերունդով հեռու իրարմէ, այլ՝ գաղափարական բովանդակութեամբ սրբա՛ն մօտ իրարու, հողեկնց, բարեկամ:

Անցնող տասնամեակին ու տարբեր ասիւթներու՝ մեր ծաւուլին ներած չափով կրտսերէն պզտիկ արտասուցաներ կատարած ենք, աւագէն՝ ոչ: Այդ պարագը պիտի կատարենք ի մտայ. մինչ այդ պիտի սղէինք, որ ընթերցողը կրկին անգամ կարգայ իր վերի ասղերը, որոնք լրիւ կը բնորոշեն Ռաֆայէլ Արամեանի աշխարհը, արուեստը:

Ողբացելու գրողէսին հետագայ էջերուն տպուարութիւնը աւելի ամբողջական դարձրնելու համար՝ մեր յաջորդ թիւին մէջ պիտի խմբենք իր գրական խորհրդածութիւններէն կարգ մը էջեր, որոնք մնայուն բաներու մասին կը խօսին ու վարակիչ են դարձեալ:

Ռ. Ա Ր Ա Մ Ե Ա Ն

...Նա տակ էր, թէ ամէն ինչ յիմարտիւնն է, որ հայրենիքն եղած-չեղած մի հաշիւ է, հայ լինելն էլ մի բան չէ: Ինքը պնդել էր, որ մեծ բան է, դժուար բան է, եւ ընկերը համաձայնել էր դժուարի հետ, ու երբ համաձայնել էր, այն ժամանակ ինքը յայտնել էր, թէ գերազանց է դժուար սպիտակ դասի լինել, քան հեշտ սպիտակ տանց սպիտակում. յետոյ տակ էր, որ ընկերը եթէ վարձի հրատարակել հայ լինելուց, մէկ է՝ ատարները նրան իրենց սպիտակ չեն համարի:

Ռ.Ա.Ս.Յ.Ն. ԱՐԱՄԵԱՆ

(«Անդրամիկի գիւնուորք», էջ 234)



ՄԵՌԱԾ ՔԱՂԱՔԻ ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՏԱԿ

ՄԵՌԱԾ ՔԱՂԱՔԻ ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՏԱԿ

Եղելուքիւն է. երբ քարոզիչ, հարտարող, դեղարար, երգասաց ու խաղարկու էր երեսում պարիսպների տակ, պահնորդներն աւետալուր ձայնարկում էին եւ բացում դարպասները, իսկ բան է՝ քշնամի, նետահարում էին:

Եկել, կանգնել եւ աւերում քաղաքի պարիսպների տակ, բայց ոչ ոք չի ձայնում, չի բացում դարպասները. գոնէ քշնամի կարծէին, գոնէ նետահարէին, միայն քէ պահնորդներ տեսնէի աշտարակների վրայ, միայն քէ կեանք լինէր այս մեռած, խորտակում քաղաքում:

Այսպէս եւ մտածում յանկարծ՝ ինչպէս ամէն մի կայի հետ է պատահում, նոյնիչով ետ եւ գնում սողնակներն, ու դարպասները բացում են իմ առաջ, եւ որպէս պատարագիչ, քարամնայիտ, շինարար, որ դուռ է բացում հարաւ քառու դէմ, երգիկ ասողերի դէմ, ներս եւ մտնում քաղաք: Ապրող, աղմկող կեանքը յարդում է չորս կողմից: Տրդատ հարտարարիտն է գրօնում Սարգիս կազմողի եւ Զուկիկ քրջաշէնի հետ, Աստղիկը կաշեգործների մագաղաք է պատուիրում, պարոն հաշեքեպի կազակից Շանուշն իր դստեր՝ Մամախարունի հետ բազմիք է շտապում: Ես բարեւում եւ նրանց, յետոյ շուկայում պարսկական նշապաջ շալեր եւ ընտրում, հնդկական համեմունքներ գնում եւ մաքսատանը վէճի եւ բռնում հոռուների, արարների, յայների ու հրեաների հետ: Քարամնայարայի մօտ մի անհաստ երգում է իր հօր գերեզմանով. «Հարատացէ՛ք, մարդիկ, հարատացէ՛ք, — ասում է նա, — երկու օր առաջ ես սպանեցի իմ հօրը, որ նրա գերեզմանով երդուեմ, հարատացէ՛ք»:

Աշխարհում արդեօ՞ք կայ մի ուրիշ մեռած ֆազա՞, որ այսպէս կեն-
գանանայ, կեանքով լցուի իր սրբիներին հանդիպելիս եւ շքեղօրէն ցուցա-
դրի այն, ինչ հազար սարի առաջ է եղել, ինչ մեռել, լսել ու աւերուել է
հազար սարի ի վեր: Գիտեմ, քանի դեռ այստեղ եմ, պարիսպների տակ,
ֆազա՞ք սպրեւել է, եւ մեռնելու է միայն, երբ գնամ, հեռանամ: Եւ ո՞րք
պիտի գնամ, ինչո՞ւ պիտի հեռանամ, երբ այստեղ, այս ֆազա՞ում է աւ-
ւել՝ ով լեւում է իր հայրենիքը, նա ազ՛աւանջում է իրեն եւ հայրենիքը:



Կիսակործան եկեղեցու պատին արեւի ժամացոյց կայ, որ մի ժամա-
նակ ֆարաւանների գայն ու գնալն է ճշել, օրն է բաժանել, բայց հիմա լսել
է: Ընկել է նրա մետաղեայ ձողը, եւ մարել է պահերը ցոյց տաւոյ սառե-
րը: Պատի միւս ծայրին յախտեմութեան մի խորհրդանիշ է փորագրուած,
նա ամէն օր ծիծաղում է արեւի ժամացոյցի վրայ, ծիծաղում՝ ու սաւում է.

— Ուզում էիք բաժանել յախտեմութիւնը. ուզում էիք հերքել ինձ:

— Այդ ե՞րբ, — հայցնում է ժամացոյցը:

— Այն ժամանակ, երբ դեռ ֆարաւաններ էին գալիս ու ֆարաւաններ
էին գնում մեր ֆազա՞ից:

Ու ժպտում է արեւի ժամացոյցը, գոհ, որ յախտեմութիւնն իր խօսքը
հաստատելու համար վկայակաշում է ժամանակը:

Այսպէս, կիսակործան եկեղեցու պատին ապրում են արեւի ժամա-
ցոյցն ու յախտեմութիւնը եւ հերքելով միմեանց, հաստատում ժամանակ
ու յախտեմութիւն:



Ասում են մի օր այս կողմերով հովիւ է անցել, եւ ուշ է եղել, եւ տա-
րածամ, ու հովիւր պռակել, քնել է պարսպի տակ: Եւ կէս գիշերին եկեղե-
ցիներից մէկում լսուել է եղիւայի ձայնը. «Արքնացէ՛ք, արքնացէ՛ք, պա-
րբսպի տակ արքայ է քնել, գնացէ՛ք ու ներս բերէ՛ք»: Արքնացել է ֆահանան,
շապկանց ելել է դուրս ու տեսել, որ պարսպի տակ մի հովիւ է պառկած,
վերադարձել ու քնել է, եւ լսուել է այնժամ եղիւայի ձայնը.

«Արքնացէ՛ք, արքնացէ՛ք, պարսպի տակ արքայ է քնել, գնացէ՛ք ու
ներս բերէ՛ք»: Եւ նորից ելել է ֆահանան ու տեսել, որ հովիւ է պառկած
պարսպի տակ, վերադարձել ու քնել է: Լուսադէմին կրկին լսուել է. «Արք-
նացէ՛ք, արքնացէ՛ք...», եւ ֆահանան չի արքնացել: Եւ պարսպի տակ քը-
նած արջան ելել ու գնացել է իր գառների հետ:

Հիմա եւ յանախ եմ մտածում չքազապրում հովուի ու ֆազա՞ի մա-
սին, որ թռանց արքայ մնաց, լսեց, մեռաւ. ամայացաւ:

Այս գրայցը ուք հարիւր տարի առաջ է եղել :

— Անցնողին անցեալ կ'ասեն ու կը մտածանան : Թող քո երկիրն ու արի մեզ մօտ՝ Բիւզանդիա : Ձեր երկրից քանի՜ քանիսն են եկել ու արժայ դարձել :

Հոռուք բաց է անում ոսկու քանկը : Ջուղիի բրջաշէնը, նա ով քաղաքի դուռն էր բրջներս բարձրացրեց, ժպտում է :

— Ինչո՞ւ ես ամբաստանում այն, ինչ խորտակուելու է : Ձեք լինելու, ջնջուելու, կարչելու էք աշխարհից : Ձեր խելքն ու շնորհքը խառնէք մերին, ինչպէս շատ անգամ խառնել էք արիշներին : Անհատաների առիւծը քաթն արդէն բարձրացրել է ձեզ վրայ :

— Հոռու, առիւ լու է առիւծի կեր լինեմ հայրենիքում, քան թէ աղուէսի շուքի տակ ապրեմ : Սա իմ վերջին խօսքն է, բարով ես եկել եւ քարով գնաս :

— Դու գիտես, բայց յիշիր՝ ասումս է նաեւ . շրջող աղուէսն առիւ շատ բան գիտի, քան ինձ առիւծը : Դարեր կ'անցնեն, ու կը մտածուի քո երկիրն ու դու : Սա էլ իմ վերջին խօսքն է, քարով մնաս :

Այս գրայցը դարեր առաջ է եղել, իսկ ես նստել ու գրում եմ այսօր, գրում եմ հայերէն, այն լեզուով, որով մի ժամանակ պարսպի վրայ արձանագրեց իր մեծագործութիւնները Ջուղիի հարսաբաւտար . «Դուռն եւ բրջներս կառուցեցի ես՝ Ջուղիի հարսաբաւտար» : Իսկ Բիւզանդիան իր հայ քաղաքներով ու պատմութիւններով անցել, գնացել է :

Անցնողին անցեալ կ'ասեն, բայց չեն մտածանայ :

Մէջքը կտրած մի կամուրջ իր վրայով քաղաք մտած ու քաղաքից ելած քարաւանների հաշիւն է անում՝ հազար, երկու հազար, երեք հազար . . . տասն հազար . . . յետոյ խառնում է հաշիւն ու պատմութիւններ է մտաբերում : Փշաքաղում է կամուրջը, եւ դրանից մամուռն առիւ է բարձրանում : Մոզէսները ծաղկած քարերի վրայով սողում են միջեւ փլուածքի եզրը, յետոյ ելնում են խարխուղ բազրիքի վրայ, ուր մի ժամանակ, հազար եւ կամ ինն հարիւր տարի առաջ մի խումբ գեղջուկներ են նստել : Նրանք գաննք էին բերել քաղաք, եւ երբ երեկոյեան շուկաները փակուել էին, եկել՝ շարունել էին բազրիքի երկայնքով, ոտները կախել ցած, ու ինքնամտաց հրճուանքով նայել նոր գնած կարմիր մուսակներին : Ու հենց այդ ժամանակ կամուրջով անցնելիս է եղել մի ազատանի, որն այնպէս, կատակի համար, հարցրել է .

— Հիմա երբ բոլորը կարմիր ու նոր մուսակներ էք հագել, ինչպէ՞ս էք տարբերելու, թէ որք ո՞ւմ ոտքն է :

Սակ ու գնացել է ազատանին, իսկ գեղջուկները մտքի մէջ են ընկել, շփոթուել եւ չեն կարողացել որոշել, թէ որք ում ոտքն է, միջեւ իջել է մուրը, երեսացել է գիշերապահն ու հարցրել, թէ ինչո՞ւ մտածող են եւ ինչո՞ւ չեն ելնում տեղից, չեն գնում իրենց գործին : Պատմել են գեղջուկներ խոստովանել, որ չեն կարողանում ջոկել, թէ որք ում ոտքն է : Գիշի

պահն, ուրախացած գեղջուկների միամտութեան վրայ, առեղ է ձեռքի փայտն ու հարուածել է սրանց ստեփին: Յաւից ամէն մէկն իր ոտէն ետ է քաշել, բռել է առից ու կազարով համբայ ընկել:

Մէկ էին մտնակներն այն ժամանակ, բոլորն էլ կարմիր ու նոր, բայց ցար մէկ չէր. եւ հիմա էլ մէկ չէ...



Շարժէ՛ք քարերը, որ չմամուկալեն:

Այդպէս ենք արել. քարը քարին ենք դրել, քարը տաշել, գարդանախշել, յետոյ էլ եւ սրն ենք դարձրել ու բարձրացրել ենք դէպի երկինք: Քարերի վրայ գրեր ենք քողել, Աստուածամայր, Քրիստոս, խաչելուք-լսն փորագրել: Շարժել ենք բոլոր քարերը, որ չմամուկալեն, իսկ յետոյ...

Մաքրէ՛ք բոլոր ընկած քարերը, մամուտի տակից գրեր, քանդակներ, գարդանախշեր կ'երեսան:

Յետոյ մաքրել ենք բոլոր քարերը. կարդացել երկարագիր պատմութիւնները, օրինակել գարպերը, ու...

Գետից այն կողմ մամուկալած քարեր, պատեր, սյարխալներ կան, մամուկալած կախաներ, եղջերուներ, քրիստոսներ, աստուածամայրներ, եւ չկայ մէկը, որ շարժի ընկած քարերը: Իսկ նրանք դանդաղօրէն, դար-դարի հոռից մամուկալում են. ձայնը քարերի թանձրանում, խլանում է: Պատմութիւնները խամրում են հաննականաչի տակ, գարդանախշերը թաղում հողի մէջ:

Սիրտս նչում է.

— Շարժեցէ՛ք քարերը, իրար վրայ դրէ՛ք, դէպի երկինք բարձրացրէ՛ք, որ չմամուկալեն:



Այստեղ խեցեգործներ են եղել եւ այն հողից, որից Աստուած մարդ արարեց՝ նրանք սափոր, կուժ, կարաս, խնոցի եւ շատ ուրիշ բաներ յօրինեցին, ու իրենց ստեղծածի արարիչներն եղան եւ որտեղ ուզեցին՝ այնտեղ ունկ կայցրին:

Հիմա այս մեռած, աւերած քաղաքում բրուաներ չկան եւ ոչ ոք չկայ: Հողը ծածկում է կոտորում խեցամանների կտորներով՝ ջնարակում, քրծած, սեւ, կարմիր, նախշաւոր կտորներով, ու ես ժողովում, գիրկս եմ առնում այս մասունքները, եւ հողը քաշում է ինձ:

Գիտեմ, ինձ հետ քաղաք կը բերեմ այս ամէնը ու յետոյ ծանօթներ կը գան, եւ ես ամէն մէկին մի կտոր խեցի կը տամ, որ նորից խեցամանների կտորները շքան անեն, ինչպէս դարեր առաջ բրուաների շինած սափորներն են շքեղ երկրից-երկիր:

Անիի փշուր-փշուր եզամ փառքն ու համբան եմ հիմա բերում ու ծան-

բացել եմ, եւ հոգը փառում է ինձ: Ես լսում եմ. հասաչում է Անին, տնփում է Անին, եւ ինեցիները գարկում են միմեանց, զնգզնգալով հարցնում իրար.

— Քեզ ո՞ր բնութիւնն արարեց:

— Ինձ այն բնութիւնն արարեց, որի գործառնը շուկայի ճանապարհին էր:

— Իսկ ի՞նչ:

— Նա, ով միայն սպասեց էր կերտում:

Հին-հին փառքերից են խօսում նրանք ու բնութեան մասնադրուներ եւ անեցիները շրթնահետքեր կան նրանց վրայ, եւ հասաչում ու սպասում է Անին իր կտար-կտար եղած փառքերի միջից:



Եղբայրքիւն է. հին, շատ հին ժամանակների գրոյց: Ամէն անգամ, երբ աշնանամուտին ջրաղացներն արեւածաղից-արեւածագ ազուն են աղացել, լեռներից լջել են չորս ծերունիներ՝ պապ, որդի, քոս, ծոռ, եւ ծոռը բոլորից տարեց է քուսացել, բոլորից ներմակ, ու մօրուքը քուսել է գետնին:

Նրանք անցել են գիւղերի, փայտների միջով, եւ սրբապատկերների նման դէմքերը միշտ դէմքերը ժողովրդին, ելել են լեռները, մինչեւ միւս աշնանամուտը, մինչեւ ջրաղացները նորից աղմուկեն, եւ ազուն ու լոյս աղան:

— Եթէ ազուն չէ՛ք ունենում, ի՞նչ է՛ք ազուն, մարդիկ:

Ու ջրաղացպանները երկրի ընդունաւած կարգով պատասխանել են.

— Լոյս:

Եւ ժպտացել են ծերերը, ուսապարկերը լոյսով լցրել ու գիւղերի, փայտների միջով, սրբապատկերների նման միշտ դէմքերը ժողովրդին, ելել են լեռները, մինչեւ միւս աշնանամուտը, մինչեւ ջրաղացները նորից աղմուկեն, եւ ազուն ու լոյս աղան:

Գետի ափին, փարձառների տակ մեռած փայտի ջրաղացներն են: Հիմա նրանք լսել, փլատակուել են, բայց ինձ քուսում է, քէ նորից եկել են չորս ծերերը՝ պապը, որդին, քոսը, ծոռը, ու հարցնում են.

— Եթէ ազուն չունէ՛ք, ի՞նչ է՛ք ազուն, մարդիկ:

Ու մեռած ջրաղացպանների փոխարէն, մեռած ջրաղացները լսակարծ ազմկում են.

— Լոյս:

Սիրտս լցում է հպարտաբեամբ, ու սրբապատկերների նման դէմքով դէպի ինձ դարձած, բայց լեռները գնացող ծերունիների հոտից եւ ձեռքով եմ անում, ու նրանք, որ ջրաղացպաններից բացի ոչ մէկի հետ երբեք չեն խօսել, լսակարծ ժպտում, եւ շնորհում են.

— Օրհնեալ է աշխարհը հայոց, այնտեղ դէռ լոյս են ազում:

Յ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հրաշքներու մի սպասեր այս առաւօտ:
 Ներսըդ ոչինչ կը փոխուի:
 Այս հեղուկ ու յարափոփով կացութիւնը,
 որ կը տանէր քեւեաներու մէջ ներհակ,
 հիմա արդէն կը փարանայ.
 հիմա արդէն լուսնափայ է,
 ցաօք կու տայ
 յօգերուդ ու ոսկորներուդ:

Այս առաւօտ, պիտի դիտես,
 փայտը հին տուններուն եւ
 սնդրադառնաս,
 քէ անոնք, որ այս բոլորը կատուցած են,
 վաղուց չկան՝

Իրենց փարքամ կանանոցով, ծաղիկներու
 պարտէզներով: Ձեզուններուն տակ անոնց,
 կարտեղու դատապարտուած
 ազատ մարդիկ կը բնակին
 միմիայն ու ծերունիներ:

*
 **

Այս փողոցը անսպասի չվերածուած
 պէտք է երթայի:
 Տուէք տարբեր ինքնուրիւն մը,
 որ ես եւս մեկնիմ հոսկէ...
 Տումարներուն
 եւ տուրքերու տումներուն վրայ,
 արձանագրուի անունս նաեւ:
 Անձկու թիւներու
 այս եղանակէն
 ազատագրուի՛մ:

Հեքթորը ինչպէս,
 ես չեմ ուզեր
 այս իշխաւու դատաւարտուած
 Տրովպայիմ
 առջեւ մնալու դատաւարտուիլ :
 Տարբեր վայր մը անուանեցէք, որ երթամ...



Կարծես կրկին լեզ կը հրեն խաւարին մէջ :

Այստեղ խոնար մթաթիւն է :
 Ռոմախայլերու
 արձագանգներ կան մարդ :
 Սանդուխները վար սահող,
 կարծես կ'ըլլան բռնուններու
 անհանգիստ քեւեր :

Բացուածք մը .
 լոյս մը կարմիր
 դամակի պէս վար կ'իյնայ ու կը կորսուի :

Խեղացնոր արագութեամբ
 մեպընթացներ կ'անհետանան
 մարմիններու, կառայցներու
 անտառին հտին,
 եւ կ'արձակեն պատռոզ սուլոցներ :

Այն՝ ինչ ճայն է թրթռացող...
 Ահագանգ մը, որ նման է
 կախարդական բառերու,
 որոնք կը բանան դուռը ներքին
 երագներու ու վախերու :

Աստիճանները ոլորացտոյտ
 կ'իյնան կարծես
 եւ կը դիտես
 ինչ յարկէդ վար այն անդունդը,
 որ կը խորանայ եւ լեզ կը կանչէ :

Այս կորուստը չէ,
վերադարձ է հաւանաբար :
Ատիճաններն այիճներ են մութին մէջ :



Քաղաքի որոշ մէկ շքանին մէջ,
տուներ են ասոնք :

Բարձր ձեղուններ,
կղմիւտրներով ծածկուած տանիքներ,
որոնք կը թափին վար դանդաղօրէն :
Չորցած փեղկերով պատուհաններ տախտակէ :
Պատշգամներ եզրիքներով ռհաւոր :

Հոն՝ պատերուն վրայ բարձր,
արեւը իր անցքը գծած է :
Ահարեկած է քամին
անձրեւի
կաթիլները միամիտ :
Մարդիկ անցած են
եւ խորհրդաւոր
բուսցած է ներսն ինկած ամէն ինչ :

Աչքեր դիտած են կեանքը փողոցի,
գայն լրտեսած են, ապա քայքայուած :
Այնտեղ ձեւեր կազմուած են,
Ծաղկած են ապա ու լսած քամին,
այլանդակուած են ժամանակին հետ,
ամչցած են իրենց մարմինէն
եւ սպասած գիշերին, որ
գիրենք ջնջէ,
տանի հոն՝ ուր ձեւեր չկան :

Հիմա պարսպ ու վտանգուած
տուներ են միայն .
փրուգումի ձայներն տրդէն կը մտնեն
եւ... օտար չեն :

Ս. Փ Ա Ն Ո Ս Ե Ա Ն

ԿՈՐՍՈՒԱԾ ՓԱՄՓՈՒԾՏ...

ԵՐՐՈՐԳ ԳԼՈՒԽ

Տասնորհինգ տմբաներէ ի վեր անաբանց կախ-պատերազմը կը շարունակուէր: Ջրբուխի ճախարհին վրայ ո՛չ մէկ նսրութիւն: Հակառակորդներ իրարու՝ Միջնաբերդն ու Բլրամբոցը հրաբխային լուսայ կը ժայթքէին անպարտ, երբ Տէրգ գինադուլը պատմութեան յանձնուէր էր, Թագուելով յիշորութեան դերեզմանոցին մէջ, ուր նորանոր դիակներ անհոգակոյտ կը մընային: Ո՛չ յոյս կար վերջի եւ ոչ ալ լո՛յս. մարդիկ կէս դարով ետ էին ինկած, ուր օրհնեալ քարեւդարամբը պատիւ կը վայելէր խրճիթ-տնակներու մէջ, նորնջենիներու բուրուէտ կանաչին դիրկը նստած եւ երբ մարդիկ կ'երգէին «Ապու Զալա՛ւի» կամ «Եա՛ Միջանա» տողերը...

Այդ խելօք, բարի ժամանակները չկային այլեւս. անոնք ալ անցած էին, պատմութեան լուսանցքին վրայ գրոշմուած...

Տէր եւ տիկին Աղայեանները կը վերադասնային այցելութենէն ծանօթ ընտանիքի մը, ուր պարոն Արմենակ պարտութիւն կրած էր նարգէի խաղին մէջ եւ արամագրութիւնը՝ արամագրութեան պէս էր սնանկացած վաճառուկանի: Մութը կոխած էր փողոցները եւ լուսութեան մէջ քայլերը կը արփէին արձագանգի պէս: Տիկին Սոնա կ'աճապարէր.

— Քեզի կ'ըսէի՝ շուտ ելլենք, իսկ դուն քո՛ւ տիւ-շէշդ կը փնտռէիր. ապուշ դէմքդ մէյ մը տեսնէիր...

— Հասկցա՛նք. տունը քանի մը քայլի վրայ է, դուրսը չինք մնար:

Հեռուար փողոցի մը վրայ համադարկ մը կը ճաթուէր. լսուեցան պոռչատըններ. ձայն մը սկսաւ հայհոյանքներ տեղացնել: Ապա համադարկեր, գամբախ ունոցով արուարձանէ արուարձան արձագանգեցին: Հրացան մը ճչաց ճիշդ տիանջի տակ: Տիկին Սոնա կը քայլէր վաղք կեղծելու պէս եւ սիրտը բռնեց. վախի ու սարսափի մթնոլորտ մը փողոցին մութը թանձրացուց: Կրողակը, որ դէշիւր-ցերեկ կը գործէր գինեալներու հաշուին, աղօտ լոյսի շղթա մը նետած էր մայթի լայնքին: Ամայի փողոցին մէջ միակ շունչը կը թուէր սնիկա, երբ Աղայեանները մէկ-մէկ կոխելով շեղքը՝ վրայէն անցան...: Ու մէկէն պայթում մը զզրգացուց շուրջի շէնքերը. տեղ մը ջարդուփշուր եղան աղակիներ: Հնարովի հլուանդատար կատք մը ձայնը կը ձգէր հեռուէն. պարոն Արմենակ մութին մէջ խաչակնքեց երեսը. Սոնա ոտքը նստած էր իրենց շէնքին մուտքէն ներս՝ սիրտին արտիւր ափելով:

— Աստուած երեսնիս նայեցա՛ւ, — կրցաւ ըսել Արմենակ:

— Ծա՛ւս մի սրբանար. փի՛ղջ փառէ, որ աստիճանները գտնենք, — Սոնա շջմեցաւ, երբ լոյսը երեւան հանեց զոյգ մը ոտքեր. պղտիկ աղուն էին, — ծօ՛, լակոտ. ի՞նչ կ'ընէիր ուշ ասեն դուրսը:

Կարոն էր. ներս սպրդած էր փողոցէն, երբ տեսաւ ծնողքին գայր: Քրտնած եւ շնչատ կը թուէր. պատասխանը փախաւ շնչաբղէլուած հեւքին հետեւ: Միայն կրցաւ կմկմալ.

— Հողի՛ւ փախայ կրտկոցներու ստիկէն... Երարո՛ւ ինկան...

Հիմա, որ կ'աճապարէին վեր սասիճաններէն, գուրքը, հետուն համագարկերը շառցան, արձագանդի պէս լեցուցին թուրը: Յարձակո՞ւմ մը ետ մղելու կ'աշխատէին զինեալները, թէ զիրար կը մաքրէին, յայտնի չէր: Գուռը արագ բացաւ տիկին Սոնա եւ ներս ինկան երեքը մէկ: Կարոյի հօր պէմքը լոյս արձակող լուցկին շատ տժգոյն բրաւ.

— Մտը ո՞ւր է, — խորխափելով մտաւ խոհանոց. մտը յանկարծ մտա մը լոյսով պարոն Արմենակին շուքը դարձուց գերբնային ու հրէշաւոր անողնութիւն մը, պատին վրայ:

— Լուցկի՛ն տուր, լոյսը վառեմ լամբին, — տիկին Սոնա պէաք չունէր լուցկին ուղելու էրիկէն: Գիտէր, որ պատկերասփիւռին վրայ դրած էր տակեր. ափով գտաւ գոյն ու անով վառեց լամբը:

Գուրքը սրկուած լուսթիւն մը ինկեր-մնացեր էր աշտմ, երբ լամբին լոյսը կը պլպլար երեքի պէմքին վրայ: Սաղաղ այդ պահը տիկին Սոնային մտածել տուաւ մեծ տղուն մասին:

— Ի՞նչ եղաւ այս տղան, — արձագանգելու պէս՝ կնոջ միտքը կարգաց Արմենակ:

— Չաւէնենց տունն է, — Կարօ կրցած էր հանդարտեցնել շունչը եւ իր նախկին համարձակութիւնը դտած, աւելցուց անտարբեր, — այս գիշեր խոշոր հարսանիք մը պիտի ըլլայ. չքնանա՛ք, հա՛...

Կարօ գրադումի համար դրաւ առջեւը պարտիւճներուն հաւաքածոն եւ ալիւս տարուեցաւ անով: Տիկին Սոնա մտաւ խոհանոց: Բան մը ուտելու էին: Միրտ չբրաւ կէսօրուան լաբիան տաքցնել: Գրաւ թէ յիկը օճախին վըլայ, անոր հոգը նուազ էր, քան կերակուրինը: Սօսիլ կ'ուղէր.

— Չորս կողմերնիս մերիններէն մէկը չմնաց. դացին ուրիշ չըջաննուրու մէջ տուն գտան. եկեղեցիին դանդը մինչեւ իսկ վախը ունի հնչուել-ըօզանջելէն. բարի-լոյս, գիշեր-բարի ըսող չմնաց... մնացին ու շառցան զինեալ ու զինամթերք մեր շուրջըստը... Ատաւած չընէ, եթէ կրակ իյնայ մթերանոցի մը մէջ... Կը խորհի՞ս, պարոն ա՛Սղալեան, թէ ի՞նչ պիտի ըլլաս. օ՛ղը պիտի թռչիս կամ տունը գլխուդ եւ տակը մնացողը՝ մենք...

Արմենակ Աղալեան նստած էր բազմոցին եւ անիմաստ ժպիտ մը կը խաղար պէմքին: Տիկին Սոնային համար անոր պէմքը կը նմանէր շինովի գլմակի մը, երկու կայծկլտուն աչքերով, սուղլատեան պիտով, վրան իջած սուր քիթ, ներքեւը՝ կլտաբաց բարակ երկու շրթունքներ, լաւ յարգարուած այտերով: Գլմակ մը, որուն վրայ բնաւ երեւան չի գար արտմութիւնը.

— Իրաւո՛ւնք ունիս, մատաւ. տո՛ւն մը դտնենք, կ'ելլենք կը կորսուինք հոսիէ, թէեւ ամէն տեղ նոյնն է, քանի որ ճակատը որոշուած-ճշդուած տեղ մը չէ... Թէ՛յի՛ւ մտիկ տուր. ետա՛ց-թափեցաւ...

Մէկը կը բարձրանար սասիճաններէն: Երկուքն ալ գտան քայլը ծանօթ, մտերիմ: Մեծ տղան էր, որ կը բարձրանար: Բանային անցաւ կղպանքին մէջ:

— Վերջապէ՛ս, կու գաս, Անդօ. քիչ էր մնացեր մամադ մութ աշխարհ գրկէր զիս ետեւէդ: Ո՞ւր էիր. բան մը լսեցի՞ր...

Տիկին Սոնա ընթրիքի սեղանը պատրաստելով ալ գիտցածը հաստատակ ուղեց.

— Որտե՞ք կային Զուէնենց . ընկերներդ հո՞ն էին՝ Սազոն, Գէւոն, Նշանը, միւսները...

Անդօ նստեցաւ Բիւնտէր-տիւանին, սրուն վրայ փօքը եղբայրը կը խաղար իր գանձերուն հետ ու շոյեց անոր դիտուն մազերը .

— Մոյրսականին պէս . միայն, աղբքը այսօր պահակութեան կունչը-ւած էին . տուներնին մէկը չկար : Զուէնին հօրեղբայրը եկեր էր :

— Քոյրերը չմոռնանք, — քիթին տակէն հեղնեց Կարօ :

— Լսէ՛ դուն, — սաստեց մայրը, որ թէյ կը լեցնէր դաւաթներուն մէջ, — հօրդ պէս, պարագութիւններ դուրս տալով պատիւ չես տար սրածրատթեանդ : Անշուշտ թէ քոյրերը կային եւ ծնողքը . կրկնելը՝ բթամտութեան նշան է երկուքիդ քով :

Անդոյին միայրը գրողած կը թուէր : Անկախ տեղի ունեցած սովորական խօսակցութենէն, ան կ'ուզէր լսածէն պարպուիլ : Զուէնին հօրեղբայրը կ'ըսէր՝ բաւ .

— «Այս խմորը դեռ շատ քուր կը վերցնէ . ելը չկայ . խառնողները դըրսեցի են, մեծերը, որ սաքրաննի խոզր իրենք իրենց մէջ, առանձին-առանձին կը խաղան, ամէն մէկը իր նախասիրած քարերը առաջ բռնելով, համաձայն անձնական շահին՝ Շահ ու Մաք կ'ընէ ինքնիրեն» :

— Այսինքն՝ ոչ ոքի, — մէջ լնկաւ Կարօ, սրամտութեան փաստը ապուղելով մօրը, որ բթամիտ կոչած էր զինք : Հայրը չէր հասկցած տղոց միաքը .

— Ինչպէ՞ս :

— Շատ պարզ է . ես ու դուն մեծերէն ենք . բանք, թէ մաման ալ մեծերէն մէկն է . ամէն մէկս իր տալեւ գրած է ստթրանձի տախտակը : Իմ սիրած քարերս ճերմակներն են, մամայինը՝ դեղինները, ջուկդ՝ սեւերը... Կը քչես սեւ զինուորդ . կը շարժես դիմացի քարը այնպէս, որ դերի իյնայ սեւին եւ կը ջարդես զայն . յետոյ առաջ կը բերես սպան՝ սեւը . դիմացէն կը բռնաս բերդին դիմացը եւ, հո՛վ, սեւ սպաղ կը թռի դէպի բերդը ու կը դրաւէ զայն... Այսպէս կ'ընես, մինչեւ որ դէմի քարերը մէկիկ-մէկիկ կ'իյնան . կը գոհես թաղուհին, կը կզղիացնես թաղաւորը... եւ «Շահ ու Մաք» կը սրտաս դուն քեզի : Անդին մաման ես իր քարերուն կու տայ նմանաձեւ յաղթանակ մը . ես ալ կ'ընեմ նոյնը : Եւ քանի որ դէմ դէմի չենք խաղար՝ քու սեւդ, մամայի գեղինը կամ իմ ճերմակներն են յաղթական եւ, միեւնոյն ատեն՝ պարտուած, մէջտեղը կ'ունենանք ոչ յաղթական, ոչ պարտեալ...

— Այսինքն՝ թնճուկ, ո՛ր կոզմէն ալ որ դիտելու ըլլատ :

— Հա՛, մամ . ծայր ու պոչ չունեցող խճճուած կծիկ, քիչ մըն ալ բարբոսնած ածասկէն, որք քակել չես կրնար . մեր խելքը չի հասնիր զայն քակել...

— Հա՛ ետ՛, ճակատներ չկան . տեղքայլը կսիւր դրաւելու, յաղթելու չի ծառայեր, այլ՝ արիւնաքամութիւն միայն կը բերէ ժողովուրդին :

— Պատե՛, լաւ հասկցար, պարոն ա՛՛Աղայեան . միայն թէ՛ չես կրնար բ՛րննել մեր անձնական վիճակը, իրական արիւնաքամութիւնը... : Օ՛Ք, դրլխացատ նորէն բանեց . շո՛ւտ ընթրեցէք . ժամանակ չունի՛մ...

Տիկին Սոնտ պատաս մը բան դրաւ բերանը եւ այգպէս ալ սպասեց, որ միւսները վերջացնեն ընթրիքը, որ բազկացած էր թէյէ, խաշուած հաւկիթէ, կարագով ու տնուշով համեմուած . կանչուած էին սեւ ու կանանչ ճիթապուղի պնակներ եւ արցակ մը հաց :

Անդրանիկ սեղան չնստեցաւ արդէն : Ան իր ընթրիքը բրած էր Զուէ-

նենց : Կարոյին բտրով՝ Ձուէնին քոյրերը հաճոյք կը պայտին եղբորը հետ սեղանը բաժնել միտանին, ալ ինչո՞ւ մտման կը ստիպէր իրեն բան մը զնել բերանը : Բայց Կարան եւս բան չգրած բերանը, երկարեցաւ մինակէր-բազմացին վրայ եւ մեծ աչքերը զայսուեցան . քանի տաւ ու նետեց զինք երազնեբոս աշխարհը, ուր միայն պարպուած փամփուշտներ կը հաւաքէր գետնէն ու աղահօրէն գրպանները կը լեցնէր, շրայածի ժպիտ մը դէմքին վրայ խաղցընելով . . . : Անպան երկարեցաւ միւս աիւտնին վրայ . յայնտ չէր եւ միտալուսին մէջ կը ճանձրանար . յորանջեց եւ գիշեր-բարին կէս մնաց բերնին մէջ :

Տիկին Սոնա հարձեցով հաւաքեց սեղանը, պնակեղէնն ու աւելցուքը տարաւ խոհանոց . բայց աշամագրութիւնը բարբոսին փճացած էր գլխացուտին տողաւակէն : Հին պտտմութիւն էր այդ գլխացուտը եւ ամէն անգամ, որ կրնար գտնուուէր անկէ, Արմենակ աչքերը կը յառէր գետին, չհամարձակելով ուղիղ նայիլ Սոնայի երեսին, ուր անէծքի եւ թշնամանքի խտնն դրացում մը կը զարկացնէր արհամարհոտ արտայայտութիւնը :

— Ետքէ՞ն ստատկացաւ, — բտւ. կծու, ամուսինին նայելով :

— Ո՞վ, — Արմենակին հարցումը կանխադրացումէ չէր վար : Խորհեցաւ, թէ կտրու էր սիրտըր եւ ինք սչինչ կը լսէր : Պրկուած ծանր լուսթիւն մը կ'իշխէր գոտոր : Ատուրարսլ մը կ'երեւէր փոքրիկ պտտուհանի վերին անկիւնէն :

— Այլէն ասաջ հարցուը ի՞նչը, սրո՞ւն կրնամ ասլ գործած սճիրիւ պատասխանը . գլխացուտ է ստատկացոր :

— Է, ի՞նչ բնենք . շյամասէիր :

— Թուրքէն աւելի գէշութիւն բրիր ինձի . մինչեւ կեանքիս վերջը պիտի չմտնամ բրածդ :

— Օհօ՞ . նարէ՞ն սիրտը հին աւետարանդ կարդալ դիտուա :

— Գործած սճիրիւ կնիքը մնաց վրաս . կը տատապեցնէ պիս ու ես կը դարմանամ, թէ ինչո՞ւ մնացի կայուած քեզի, երբ հարար հոգի գեո կը շտրունակեն շտրջո դաւնալ . . .

Արմենակ նախանձատութեան բարակ պայցումի մը կրակէն ալուսցը ունեցաւ ներսը, սակայն պայլի չբտու, ալլ բտու .

— Ատիկա ինձի կը հարտրտցնէ, քանի որ դուն կը մնաս ամենազեղեցիկը տեսած կրնելուս մէջ եւ հաւատարմութեանդ վրայ վտահ եմ :

Շոյուեցա՞ւ Սոնա էրկանը վերջին բառերէն . դուցէ . կին էր վերջուպէս : Պատասխան չտուաւ Արմենակին : Ալլ լեցուեցաւ շարութեամբ, դէմքին վրայ աճեցաւ կարմիր երանուր, որ բարկութեան եւ արհամարհանքի խտնն պայցումէն ծնունդ առու, երբ Արմենակին աչքերուն շողէն դատեց անոր քծնանքը գիշերային մերձեցումին : Սոնա բտու չսիրեց էրկան քծնելու այդ կերպը : Արտոնութեան անդիր տոմս մուրալու պէս էր մտակցման այդ քծնանքը, մինչեւ իսկ, երբ պաւակները չկային կամ շատ էին փոքր ու բնակարանը չէր նստած մէկ սենեակով տան մը վրայ :

— Ի՛նչ, մտամ Սոնա . ի՞նչ պիտի պատահի, երբ հարանիք բլլայ այս գիշեր . . .

Տիկին Սոնա, որ գլուխը բնամ-նստած էր զիմացը եւ յիշողութեան ալիքներէն պիտի տարուէր զէպի ես, ամուսնութեան տարիին, որ կողի մը կը թուէր անցեալին մէջ, բտու հեզմանքով .

— Մէկ ու կէս տարի է, գիշեր-ցերեկ մէջն ենք հարանիքներու : Արդէն ալանջներդ վարժուած են այն օրէն ի վեր, երբ հոս եկանք : Փամփուշտափամուսմի հարար տեսակ վայելքով մարդիկ հաշտուած են կատարուած ի-

լուսաթիրաններու հետ... Կնոջ մը երկունքի ցուերէն ազատման ճիշտ, նշանադրէքի պարզ արարողութիւնը, պատկի պայտը հարսնեկաւքին անցքը, մեռելակառքով յուզարկաւորութիւնը, ցոյցերը, տունը, Քուսթպոլային խաղերը փառաբանում են միշտ բուն կրակոյներով: Մարդոց ի՞նչ փոյթ, որ համարսելէն նախքան է վախէն մանկածին դեռտարի հարսը, որ գոտում-գոշում արձանազոյ յուզարկաւոր կրակոյնի դեղակը հանած է աչքը հանդիսատես երիտասարդին, կամ ո՞վ հաշիւ պահանջած է սրտազամը կանգնած եւ ցոյցով հետաքրքրուող աղջկան սիրտին միտում փամփուշտին հետեւանքներով... Այս օրերուն ալ հետաքրքրուող չկայ. ուրեմն, հարստնիքները տեւակածի բնոյթն ունին... ամէն հարսանիք մեկբարուսին չ'ունենար, պարսն ա՛՛նալեան, կամս՝ անպոյ դղեակներու... ալլ՝ մահի մտաթեղ անցք:

— Կ'ըսէի ուրիշ բան եւ ահա ինչի տարիք պարզ հարցումս, — նեղուրտեցու Արմենակ, որ կրցած էր սիկարէթ մը շնորհքով վասել եւ այժմ մուխը կը դրկէր դէպի հասկնալ շուրջ կիներ: Թէեւ Սոնա շատ լաւ հասկցած էր մարդուն միտքը, որուն վրայ պիտի կեռէր խօսքին մաղիւնները.

— Երբ հարսնիքը սկսի, ամէն անգամուն պէս՝ դուրսը կ'առնես ու կ'իջնես վարիններուն ախար ու կը կապուիս մտորիդ: Դրացուհին մեղմէ չէ եւ կը խորհիմ գոհ կը մնայ քեզի կեր տարով...: Վաքժուած ես արդէն մտուր փոխելուն մէջ. իսկ մինչեւ նման պահ մը, մախը անկողինդ. լսար պիտի հանգցնեմ:

— Դեհ, հանցուր, որ ապտախիք լեզուէդ. չես ուզեր, մի՛ ուզեր. արդէն ե՞րբ ուզեր ես որ. չեմ ու չու՞մ աշխարհ բռներ է. գուն կին չե՛ս, ալլ՝ հրեշտակի կերպարանքով՝ սատանայ, — պարսն Արմենակի շեշտը լուրջ երանդ չունէր. անկիրք ըլլալուն՝ կորանցուցած էր արիւնտղ սրութիւնը. ի՞նչ արժէք պիտի ներկայացնէր բութ զանակ մը թոյլ-անպիբի կաշիի մը վրայ քսելով: Տիկին Սոնա հեղինակ ունէր միշտ նման արտայայտութեան դէմ.

— Կ'ըսեն՝ Աստուած միշտ մարդուն մէջ մուրաղ մը սրակաս կը թողու, որպէսզի մարդը Աստուած չզղայ ինքզինք: Դուն ալ քնացիր եւ գտիր այդ մուրաղը երազիդ մէջ...

Լսար հանցուց: Արմենակ երած-երկնցած էր մահճտակային վրայ. քունը չէր գար. կը սպասէր, որ կինը մոռնար աչն՝ ինչ կ'ըսէր լսարի մէջ... ու մօտենար: Սոնա, մութին մէջ, շաղրտեց ապոյ վրայ նետուած ծածկոյնները. յետոյ՝ կեցու կանդնած պահ մը. ի՞նչ կը մտածէր այդ երկվայրկեանին. կ'աղօթէր: Արմենակ թերահաւատօրէն կը դիտէր անոր հասակը մութին մէջ, բայց կ'երերար քունը աչքերուն, ուր յայտ դիտակ մը դարձած էր... Սոնա մէկէն նստեցաւ իր անկողինին մէջ, սալարկին փառուած, ու գլուխը բանած՝ մնաց այդպէս արձանացած...: Ո՞վ եւ ո՞ւր, ե՞րբ էր սկսած գլխացուր առաջին անգամ...

Ու մէկէն լսեց մարդուն խաղաղ խեղդուած սուրցին ընդմէջէն:

— Ի՞նչն էր, ա՛յս էրիկ ըլլալիքը, որ իրեն տուաւ ա՛յս ցար, օճի նման դալարուող ուրեցին շուրջ, ահա երեսուն տարիներէ ի վեր...

Տիկին Սոնա լաւ կը յիշէր դէպքը. այդ կը պատահէր երկու ամիս ետք պատկի արարողութենէն, երբ ինք ուշացնաց ինկեր էր թեւերուն մէջ դինք շնորհաւորողներուն...

Թէեւ կը խոկար Արմենակ, բայց քունը ծանր չէր. զգա՞ց, թէ կինը կ'անիծէր զինք. դուստղ ու խեղդուած բառեր փախան բերնէն, որ գուցէ չունեցած բարկութենէն ծնան: Հուանարար երազ կը տեսնէր ու քունին մէջ

կ'ապրէր դէպքին ա'յն տեսարանը, որուն յիշողութիւնը մտալիւում կ'աւա-
ջացնէր Սոնայի մօտ ալ՝ մ: Դեռ հը շարունակուէր անընթացիւնը բաց պա-
հելով աչքերը, որոնք աւելի պայծառ հը տեսնէին մութին մէջ, անցեայր շար-
ժապատկերի վերածող միտքին լուսարձակով:

Ազայեանները նենդամտօրէն խարած էին նորահար Սոնան: Վերջին
պահուն, երբ պոտիին տակ փետայ Արմենակէն կ'առնուէր ւէր եւ խոստո-
վանանքը ու Սոնա՝ քարը սրտին, հը յանձնէր իր աշան, Արմենակին երկու
մեծ քոյրերը փոխադրել հու աային վարձուած տունին գոյքերը իրենց բնա-
կարանը, որուն մէկ սենեակը հը կահաւորուէր հարս ու փետային համար:

Ուշագնաց Սոնան փոխադրեցին հան, ուր ան աչքերը պիտի բանար, ինք-
զինքին գալով: Գլխուն հաւաքուած կիներուն Սոնա նայեցաւ անդրչիրիմէն
վերադարձողի եւ անցած ժամանակներուն անտեղեակ պլշած աչքերով: Ա-
զայեան Ադին վհուկի դէմք ունէր այդ պահուն. անոր մատները հը փորձէին
քակել պոտիին քոյր Սոնայի գլուխէն: Այդ սեւ, նենց մատները թուեցան
պիշատիջ թռչունի մաղիլներ, հեքիտթի աշխարհին մէջ պատմուած սեւ թըւ-
չունին, որ հը հանէր մարդոց աչքերը, կուրցնելով մութ աշխարհին բնա-
կիչները...: Սոնա ինքզինքին գալով՝ տեսաւ այդ մաղիլանման եզունդները
ու ճշաց եւ կրկին մարեցաւ, ինկաւ բարձին: Իր թմրած ուղեղին անթեւ լա-
րերը, սակայն, հազորգէին պիտի իրեն Ադին: Ազայեանին կոնիչի նմանող
ճշան իտքը, թէ իրենց հարսը ինկնաւոր էր, մանկուց ի վեր:

— Աղբի՛ եւ, աղջիկներ ու կիներ, տեսա՞ք. եօթը պորտերնին չորնայ,
որ շար ոգին մեր տունը քշել տուն. հրեշտակի տեղ՝ շար սատանայ մը
փաթթեցին մեր գլխուն... Էամա՛ն, Էամա՛ն...

Արմենակ կանդամ էր դրան մէջ՝ փայտանման չոր ու անշարժ. չէր
կրնար ըմբոսել, թէ ինչպէս քոյրը հը համարձակէր անէծք կորդալ, փար-
կաբեկել շուշանի պէս մաքուր Սոնան, որ իր կիներ էր ալլիւս՝ աւետարա-
նով ու խաչով նուիրականացած...: Թէեւ տեղեակ էր վերջին պահուն քոյ-
րերուն ու ծնողքին խաղած գերին, սակայն ան չէր սպասեր կեղծիքի երե-
ւան ելլելուն այդքան շուտ. հը յուսար մնալ առանձին, Սոնային հետ առ-
նուաղն ամիս մը...: Ծնողքն ու քոյրերը հարամեր էին իրենց մեկրալուսի-
նը...: Սոնան իրաւունք ունէր եւ մարիլ-իյնալը իր ձեռքը չէր. գուցէ ինքն
ալ անցընէր նման ապգնայ մը...: Մէկէն հերստեցաւ. խոյացաւ քրոջ վը-
րայ, թեւէն քաշեց ու շարտեց հեռուն:

— Կորուէ՛, — պուաց խեղդուած ձայնով, — չի բաւեր տունը շրջե-
ցիք գլխուն, հիմա ալ փակեր էք աղբուկի պէս ճիտին՝ հոգին առնել կ'ու-
ղէք...: Ո՛ւր է մայրը. կանչեցէք, թող աղջկան հոգը տանի...

Ուշքի բերել աշխատող սրտցաւ կիներ, անոնք, որ ներկայ եղած էին
պոտիկ տարտողութեան՝ ջուր հը սրտէին Սոնայի երեսին, մեղմ ապտակներ
կ'իջեցնէին անոր աշտերուն, հոտեր կ'անցընէին քեթին տակէն: Մոնուում կար
նեքուր, օդը հը պահէր, ճիչերը բարեբանեան հը թուէին. մէկը հը կանչէր.

— Տիկին Մարիցա՛. Մարիցա քոյրի՛կ, ո՛ւր ես, քեզի կ'ուղեն:

— Քա՛, մայրը չ'երեւիր. անանցմէ մէկը չկայ. գոցեր են...: Ի՛նչ
անտիրա մարդիկ են եղեր:

— Հիմա՛ հոս էին, քա՛. ո՛ւր կորան. մէջտեղ չկան:

— Քա, ո՛վ հը գիտանայ տունը շեղուէն թափուած թոյնին: Մեղք
եղաւ աղջկան, հագա՛ր տիտս. սակիի նման աղջիկը մէկ օրէն թոտեցու-
ցին. բերնէն դեռ մօր կաթը հը հոտի...

Արմենակ անձրկեր-մնացեր էր Սոնայի գլխավերեւը. չէր համարձա-

կեր ձեռք գտցնել հարսին. հարսը լեզու կ'ելլէր թաղը: Քշել ուզեց ներկայ, անպէտք, արտազանց կիները, սրունք յծեք շինելու տեղ՝ ա՛չք կը հանէին, անոնց ըստ թեւերոյ գանձնք քշելու պէս:

— Կը խնդրուի դո՛ւրս ելլել սենեակէն:

Երան չուզելու պիտի, ետ-ետ նայելոյ, թէ մի դուրսէ Սոնան կը բա- նար աչքերը, երբ դուրսը շարժիլ սկսու երանքը վերադասածի պէս: Երան դուրս բոլորը. ներսը կը մնային դրկից տատմէր Խաթունը, Արեւիկ Աղայ- անն եւ Արմենակ, որ սկսու ծառայութիւններ մատուցել տատմէր Խաթու- նի պահանջներուն: Սոնա բացած էր աչքերը. կը դուրս, թէ ինչպէս պատու կիներ կը շփել իր մարմինը, որ հետզհետէ իր վարդապոյն մարմար երանդը կը ստանար: Արեւիկ Աղայեանի մէջ բանաստեղծական սիրտը կը բարստէր. բարբի պտուղ չէին Աղայեանները, սակայն, Արեւիկ տեսու հարսին հրեշտա- կանման գէմքը, որ աչքերը երկու մէկտ աղերու կը նմանէին. Սոնա դիցու- հի մը պէս ահա երկնցի էր անկողինին վրայ: Բարձրացուց իր նայուածքը ու աչքին տակէն դիտեց երբայրը. զգաց նախանձը, որ բարձրացու սրբունին մէջէն. չարութիւն չկար այլ զգացումին մէջ, այլ միայն այն խոտփը, զոր մէկը կ'ունենայ, երբ ուրիշ մը գտած կ'ըլլայ անպին գանձ մը, որուն քուե- լով պիտի անցնի ինք, բայց պիտի չվայելէ դայն երբեք:

— Աղջիկը բան մը չունի. ասոցջ է՝ սուքին եղունդէն մինչեւ գլխուն մագին ծայրը: Չսպասուած անտիկնալ մը կրնայ եղած ըլլալ պատճառը իյ- նայուն, — տատմէր Խաթուն տեղեակ չէր եղելութեան:

— Տո՛ւնը... տո՛ւնը, Խաթուն մայրիկ. վարձուած ու ետ արուած, երբ խեղճը կը սպասէր հոն երթալ եւ ահա հո՛ս է բերուած, — Արմենակի աչքերը լայ կը սկսէին, ձայնը թրջուած էր արցունքէն...:

Արեւիկ հանեց հարսանեկան շորերը Սոնայի վրայէն, հազնիլ տուաւ դիշերային շարքանման զգեստը — այս բաները պիտի ընէր, խորհեցաւ, փեսան դուրսէ եւ, լոյսին նայելով՝ ըսաւ.

— Իրիկուան համար պէտք եղած ընթրիքը եւ լ'նչ որ պէտք է գիշե- րային ժամանցի վերաբերեալ՝ կ'ունենաք մէկ ժամէն. բարբ'ն վայելեա, եղ- րայր: Խաթուն Մայրիկ, ինծի պէտք պիտի ունենա՞ք, ես կ'երթամ:

— Ո՛չ, աղջիկս. ես ալ դորձ չունիմ այլեւս. հարսնուկս շատ լաւ կը դուրս ինքզինք. թողունք, որ իրենք՝ հարս ու փեսայ ազատ մնան, — ելաւ անկողինին վրայէն, ժպտեցաւ Սոնային, ախով խփեց անոր աչակին, որ դը- րտած էր ծիրանեղջյն երանդը եւ Արեւիկին հետ դուրս գնաց: Դրան մէջ մա- տով նշան ըրաւ Արմենակին, որ հետեւեցաւ իրեն, — այս դիշեր չմտենաս իրեն. ջիղերը թոյլ են. ցնցումը զօրուսը եղած է, բարդութիւն կը ստեղծ- ւի...:

Տունը դերեպմտոցի պէս լուս էր: Աղայեանները, նախապէս տոնուած որոշումին վրայ, հարսանեկան խրախճանքը պիտի կատարէին Գլաւին մէջ, քանի մը փոքր անպին, իրենց բնակարանէն: Հարսին փիճակը պատճառ մը չէր եղած չեղեալ նկատելու խրախճանքը. պիտի բռնէին ներկաներուն.

— Հարսն ու փեսան, սեպեցէք, մեղրարունի գացին, դուք եւ մենք կրնանք քէՔ ընել:

Արմենակ ետ եկաւ Սոնային մօտ: Սոնա նայուածքը յարած էր առաս- տապին. չիջկոց գայն, մինչեւ անպամ երբ փեսան ծունք դրաւ անկողինին եւ ուզեց պայնել ճակատը, իրեն վերաւորում խղճմտանքի եւ զղջումի խոտովանութիւն.

— Ներէ՛, Սոնա. ես լուր չունիմ. երկու՛քս ալ խորուած ենք:

Առանց նախաձեռք իջեցնելու աստատագէն, Սոնա լացաւ ու ձայնը երկրաց .

— Մարդ ըլլայի՛ր, չէին համարձակեր խորեւ քեզի . ջիւղ ու սկիւրէ գուրի մէկն եւս դուն . կ'ատեմ քեզ մինչեւ դերեգմանս . . . : Հեռացի՛ր մօտէս, կը ճշամ, որ մարիմ ու սաակիմ եւ այլեւս բոլորիդ երեսը չտեսնեմ . . . : Գնա՛, հեռացի՛ր, հեռացի՛ր, — աչքերը գոցեց եւ կողերը մէկ-մէկ մարդաբլիս դրուտորեցին սյուսերուն վրայէն . լամբին լոյսը շողալով լոյ կու տար դրոտուող կայլակներուն մէջ : Արմենակ կրցաւ պալով կու տալ կայլակներէն մէկը, որ շատ էր աղի : Սոնա ժամանակ չունեցաւ այսը խելելու անոր պագէն, ու սաստկացուց լացը :

Արմենակ ելաւ դուրս . նստեցաւ մութին մէջ ընդունարանին . մնաց այդպէս երկա՛ր-երկա՛ր ժամանակ, կեղծ հազով, օՓով ու փնջալով, սրպէսպի դգալի ընել տար իր ներկայութիւնը տան մէջ : Սոնա կը լսէր մարդուն հանած ձայներուն պզտոր արձաղանդը եւ թմբիրը հեռոյճեակէ քունը կը հրմշակէր արդէն թոյլ մարմինին վրայ : Երբ Արմենակ բացաւ դուռը ու նստեցաւ անկողինին, Սոնա խաղաղ քունի մէջ էր . . . : Այդ եղաւ հանդուստացող պատճառը, որ փեսան թողուր հարսը եւ երթար մասնակցիլ հարսանեկան խրախճանքին : Այս արարքը բերնի ծամոց պիտի դառնար քաղաքին մէջ . . . :

Տիկին Սոնայի յիշողութեան մէկ պատին ամբօրէն կախուած կը մնայ չլմորիկ նախաձեռքի մը դժած մէկ նկարը, որուն գոյները շատ են վառ, անդունաթափելի : Այդ նկարը կը ներկայացնէ Արմենակին հինգ քոյրերը, թրուչալ չար ոգիներու պէս, անպէմ ու անկերպարան, սպիտակ սաւաններու մէջ փաթթուած՝ օձի, դեւի, վճուկի եւ գիշատիչ թռչուններու ուրուսողճերով : Ու նկարին տակ անջինջ մատիտով գրուած է մեծատառ՝ ԻՄՍԱԿԵՐՄ :

Սոնայի տալիքը ոչ թէ Ազամի կողորհրէն արդիւնաբերուած Եւանքէին, միտով ու սկիւրով, այլ՝ սեւ կաշիներու մէջ ծրարուած ճարտագունդերու կը նմանէին, հաստկաչափ երկարութեամբ լեզու էին, ուժանիւթ հայթայթող անդուլ ջաղացքներու պէս աղմկարար, ու աշխարհ բերուած էին, որպէսպի աղային ու ծամծամէին ինչ որ բարի եւ առաքինի բան կար իրենց հարսին մէջ, սկիզբի օրէն իսկ :

— Կի՛նդ ցաւադար է, կղբայր . չլուսած, չտեսնուած բան է, որ աղջիկ մը հարսնութեան օրը իյնայ-մարի . ամէն աղջիկ կը թողուրայ այդ օրը փեսային առջեւ, քուկը՝ մարմրեցաւ-գնաց . բերնի ծամոց դարձանք դուսդրացիին, քաղաքին, աշխարհին :

— Քոյրս իրաւունք ունի, կղբայր . մարիլը հասկցանք, բայց շարաթներով տկար եմ ըսելով պատկիլը ո՛չ քու գործիդ կու դայ եւ ոչ ալ մեր հաշիւին . դինք հանը՞մ բերնք դլուխնուս, հը՞ :

— Քա, չըսե՞ս, թէ ասած աղջիկը լուսնոտ բլլալով գաւակ չ'ունենար, կ'ըսեն . ունենայ ալ՝ եօթ ամսական կը ծնի եւ աշխարհ չ'մտած՝ կը մեռնի :

— Իսկ չբեր կնոջ աչքը գուրսը կ'ըլլայ . անմախ թռչուն կը դառնայ . դիակ, թէ ոչ մէկ բոյնի մէջ հաւկիթ կը ձգէ . Արմենակին ականջը ծակ ըլլար՝ օդ կը կախէի, որ ըսածս մտահան չընէ :

Այսպէս, քոյրերը կ'առնէին Արմենակը իրենց միջեւ ու իրարու բերնէն խօսքը խելով՝ իրենց լեզուին տակ կ'աղային Սոնային սկիւրները, որովհետեւ երկու ամսուան մէջ միտ չէր մնացած անոր մորթին տակը . . . : Մօրանց երթալը արգիլած էին իրեն . քոյրերը չէին համարձակեր դալ Սոնային այցելութեան . մայրը երես շունէր աղջկան աչքերուն մէջ նայելու . Գահարիկ ամէն օր կը գզգզէր աիկին Մարիցային սիրտը, որովհետեւ քոյրը

նեռեալ տուած էր գժոխքի կրտկներուն մէջ, սղջ-սղջ այլելով զինք :

Արմենակ Ազգայեան տունը մնաց խրատձանքին յաջորդ օրը միայն : Իր փեսայութիւնը նմանեցաւ շնորհազգիւում պաշտօնի եւ Սոնա անոր առջեւ փակեց յարի եւ ցանկութեանց բոլոր գուռները . . . գուռներուն վրայ Արմենակին թակոցները մնացին անարձագանց : Եթէ պատահեցաւ, որ կիտարաց եղաւ մէկն ու մէկը, անոր բացուածքին մէջ դառաւ սաստուղ ու արհամարհոտ զէմքը մերժումին :

— Մինչեւ չգանես տուն մը եւ զիս չազատես քոյրերուդ ճանկերէն, քեզ ներս տանել չկայ ու չկայ . . . : Տնային կարմնքի տակ աննկր քեզի կը ցուցընեմ . . . : Գնա՛, փառացները չըջէ՛. արդէն քու գործդ այդ է եղած :

Եւ փեսայ Արմենակ իր մեզբալուտինը անցուց փառացները չըջելով, յաճախորդներ փոխադրելուն մէջ գանկելով իր մխիթարութիւնը : Կառքը կը բանեցնէր առտուան շորս ու կէսին, կէսօրները կը դոհանար ճաշարանի մը մէջ ժամ մը անցընելով եւ երեկոյեան ուշ առնն տուն կու գար թթուած-փքուած զէմքով : Քոյրերը դարձնակալ կը սպասէին իր գալուն, որ բանեցընէին իրենց ստիւր չունեցող երկար լիզանները :

— Ամբողջ օրը անկողին կը մնայ կինդ . ձեռքը բանի մը չի գպցներ, — կը գանգատի մէկը :

— Այսօր քոյրը եկաւ . փակուեցան ներսը ժամերով . ի՞նչ բսին, չբսին, մէկս լուր չունեցաւ . անպայման մեր միտք ծամեցին, գլուխնե՛րը թաղածս, — գրպարտել կը սկսէր երկրորդը :

— Երկու ամիսը անցաւ . արեւի երես չտեսաւ կինդ, գուռը ամուր կը կզպէ եւ պատուհանին առջեւէն ետ չի գար . . . : Անցեալ օր մեր Գարեղինը կ'անցնէր պատուհանին տակէն . երեսը ժպիտ կար . չհաւնեցայ անոր զէմքին գոյնը : Ո՛վ զիտէ ի՞նչ խոստացաւ կինդ անոր, որ ինծի չնայեցաւ բնու . աչքը դեռին՝ անցաւ-անց մօտէս, — կը բամբասէր միւսը :

— Քա՛, ի՞նչ պիտի խօսէին . շա՛տ-չատ պաղ մը տուաւ, պաղ մը առաւ . այդ Գարեղինը սուրբին մէկը չէ արդէն, գիտեմ, կը ճանչնամ զինք : Եղբր՛ս, պատուհանին ճաղերուն լու նայէ, չըլլայ թէ մէկ-երկուքը հանուած բլբան . . . : Կը տեսնես, օր մըն ալ տղան ներս կ'աննէ, կը պառկի հետը, — թոյն կը թափէր վերջինը, Աստղիկ :

— Կը բաւէ միտք ծամէք . նախանձէն ամէն մէկդ գլխուս սեւ օձ էք եղեր-փաթթուեր . գացէք դուք ձեր լաթերը նախ լուացէք :

Կը բարկանար Արմենակ եւ սրաւոր զէմք բնուումով՝ կը դարնէր սենեակին դրան, թէ ինքն էր, որ պիտի մտնէր ներս՝ անձանթի պէս անհամարձակ : Սոնա ծուրբէն կը նստէր անկողինին վրայ եւ Արմենակ անոր զոպը կը թափէր դրպաններուն պարունակութիւնը՝ օրական շահը :

— Համբէ՛. ես ժամանակ չունեցայ կարգի դնելու, — կ'ըսէր եւ երբ Սոնա սկսէր համբել, իր զէմքը կը քակէր սուզին գիմակը, բարակ ժպիտ մը աշուհեցնու կը ծաղկէր ու ձայնը կը դառնար շոյանք, — նախապէս, վատկածո իրենք կ'աննէին, թէ ես մտիտդ եմ ելեր, կը մեղքոյային վրաս, կ'ուզէին պահեն, զիս կարգեն : Կարգուած օրս՝ տունի վարձքը՝ հարկուր ոսկին չկար : Ի՞նչ ըրին, չգիտցայ . . . :

Սոնա կը շարունակէր համբել ու կարգի գնել՝ մէկնոցները անխամ, հինգնոցները, տասնոցները գոտ-գոտ խնամքով՝ յղկելով ծալքերը : Երբ պատահէր քսանբահնոցի, այն առնն պատիւ կ'ընէր աչքի տակէն նայել մարդուն, որ նշանածի պէս էր դեռ, կը ժպտէր : Ինք կը սրստէր յօնքերը կատ-

ւայեղի նման, որ շան մը համարձակութիւնը ի դերեւ հանելու պիտի ծառայէր :

Կը պատահէր, որ Արմենակ զրգաններով կը կրէր պիստակ, կտոր մը անուշեղէն, զօգն ի գոլ, աշոյէս, որ քոյրերը չտեսնէին եւ վրլլուկ չբարձրացնէին: Արդարանայու համար կ'ըսէր ցած, զուսին կողմը նայելով .

— Փրարով կամ աււիով չեմ կրնար բերել, կը խլեն ձեռքէս :

— Ազէկ որ զրգան ունեցեր ես, զուցէ քաջութիւնդ ալ հոն կը պահես, — կը հեղնէր Սոնա :

Թէ այնուհետեւ, մինչեւ ուշ գիշեր, Խոնջ կը խօսէին երկուքը առանձին, մնալով դուրս գլխի, չէր յիշեր, մանուշակ պտտերազմի այս օրերուն, երեսուն տարիներ ետք: Ամէն բան կը թուէր մասն ըլլալ անցեացին թանձր փարտոյւրին ետեւ, մոսցուած . սակայն չմոսցուեցաւ ամարդի արտաքին հեռքը, Սոնայի զլխացուին զէտքը: Այս ալ մէկ սերիչ նկար է, միշտ կախուած յիշողութեան զիմացի պատին: Երբ Սոնա կը յիշէ այդ նկարը, ուք զունեց արտայայտութիւններով պտակերուած են զէմքերը տալերուն, սրանք չըջագոտած են Արմենակը, աշոյէս՝ ինչպէս սոխած մատակ գոյլերը փրատուր արուն կը խոծոտեն: Այդ նկարին տակ, Սոնային ծանօթ միայն, մակաղութիւն մը կար՝ Մեղսակիցները, գոր գոց ըրած էր :

Սկիզբները Արմենակ կը ստէր . չէր կրնար խոստովանիլ, թէ անկարող էր եղած բանանալ Սոնային յիշոյ: Ահա երկու ամիս է, որ ան կը մնար մօրմէն ծնած անարտա աղջիկ . թէ՛ ինք խոստում տուած էր շահածով նոր աուն փարձել եւ հոն փոխադրուել ետք միայն ունենայ իրական մեղրալուանային ամիսը: Մինչդեռ, քոյրերը ամէն օր կը կախուէին օձիքէն, թէ՛ «կի՞նդ յու՞թեան նշաններ ցոյց չի տար, չբեր է, եկուր ես ըրէ, նոր աղջիկ մը սա, որ ճայիթ-ճայիթ քեզ վառակ ծնի...»: Վաթսուներկեցիքուր օրը Արմենակ աուն եկաւ կէս զիշերին, խոծած էր ու սեւ ամպ գարձած: Քոյրերէն երկուքը կարծէք ճամբուն կը սղոսէին, մէկէն թուոն նստած տեղերնէն ու կախուեցան ուսերէն . անրնական երեւոյթ էր Արմենակին պարզած վիճակը . մէկուն հետ կուտած կը թուէր . օձիքը մէկ կողմ ծած, կուրծքը կիտարաց, մազերը խռիւ էին, բերնին անկիւնը փրփուրի կտոր մը չորցած-մնացեք էր... :

— Խոնջ կայ, Խոնջ պատահեցաւ, ս՞ուր էիք մինչեւ հիմա, կուտեցա՞ք մէկուն հետ, — երկու մեծ քոյրերը ամբողջ հետաքրքրութիւն էին կտրած եղբորը զլխուն . անար լութիւն պահելը կը զրգուէր իրենց մէջ բանտուած շար սղին, որ զրհէր կը փնտսէր, հայհուայեքի ու անէժքներու տիկերը պարպելու համար ոչ ու ձախ՝ Եօթը պարտին :

— Ըսէ՛, եղբայր . սրս՞ւ հետ կուտեցար, — կը պնդէր սյրիացածը :

— Խոնջն էր պատճառը . գուն խելք մտրոյ ես . պատուի՞ց գորան, հը՞, ըսէ՛, խօսէ՛ նայինք, — մեծ քոյրն էր՝ մասհագրածի պէս :

Կախուեր էին ճիտէն, քաղքեցիին օձիքէն, փէշերէն եւ աշոյէս ալ հանեցին Արմենակը անբնական հունէն: Այդ պահուն ներս եկաւ մայրը զիշերանացով: Հայրը չկար . ան աշխարհեան պայսած էր ծովեղերեայ Հարստի մեծ քաղաքը բնակող մէկ բարեկամին: Մայրը տեսնելով ապուն վիճակը, սկսաւ ոչք բարձրացնել: Արմենակ պատաց վրան .

— Գո՛ւն լո՛ւ . մեռել չկայ տան մէջ, որ ճայից զլուխը ձգեցիր: Իսկ հիմա ինձի բէք, մեղմէլ գրտ, զուրսի մարդերէն ս՞ի ունի մեր տունին գոյրսի գրան բանալին :

Աղչած՝ երեքը նայեցան Արմենակին . անակնկալ հարցումէն սչինջ կը

հասկնային: Առաջին աչքը վար կախույր եղաւ Առաջիկ, այբխոսած քոյրը, որ հաղիւ մէկ տարի ապրած էր ամուսինին հետ եւ ահա մօրանց կը մնար հինգ տարիէ ի վեր: Կ'ըսուէր, թէ տն ճաթեցուցած էր ծարպը, որ չէր դիմացած կնոջ լեցուն թափած թոյնին եւ կըրտաւթեան:

Աստղիկի հա-գործով, հօրենական տան մնայուն հիւրը եղաւ պարտն Գարեգինը: Սոնա զինք տեսաւ առաջին այցելութեան, Ազալեաննեց. հիւ-նասցնող նայուածք ունէր, սրմէ խորհեցաւ ու վախցաւ: Աստղիկի ետեւէն եկած էր, թէ զուգարկութեան պիտի վերապրուէր տնոյ ծանօթութիւնը հայր Արքայանին հետ, յայտնի չէր: Գարեգին ծօտիվութիւն ցոյց տուաւ անեղինբուն բուրբին հետ եւ Աստղիկին ոչ-աղջիկ բլլալը զուցէ տախթ մըն էր, որ տն աւելի համարձակօրէն կատակներ րնէր հետը, կտակածէ զարս մնարով: Աստղիկ կ'ետար ու կ'եփուէր ինքն իր մէջ, կիրքին ալիքը կ'աղպէր զինք, երբ պարտն Գարեգինին ձեռքը կը զոյէր իրեն կամ նայուածքը քիչ մը... յարագելով խրուած կը մնար իր աչքերուն մէջ: Եւ ահա կը ծնի վարձութիւնը: Գարեգինը ճամբու գրած մէկ պահուն, ասանձին, արտաքին գըրան սեմին, Աստղիկ անոր կ'երկարէ բանային.

— Կրնայի՞ք, պարտն Գարեգին, օրինակ մը հանել տայ սա բանայիէն. հաս մըն է, կը վախնանք, որ կըրտուէրու սրտապային, ասանց բանայի՞ մնանք...

Իր ուին ու բանային օրհ մը մնային Գարեգինին ձեռքին մէջ.

— Սիրո՞վ:

— Մերո՞ր':

— Ես այ անեցի կը համարուիմ. կընամ հաս մըն ալ քոյս ունենալ, — փորձաքարի պէս կը հարցումը: Աստղիկ աշխարհիկ կնոջ մը խնդուքով էր, որ պատասխանեց.

— Չհամարձակի՞ք:

— Որ այդպէս է, չեմ գար այլևս, — կրակոս էին աչքերը. Աստղիկ հարեցաւ.

— Ո՛չ, ո՛չ. զուտը միշտ բաց է ձեր առջեւ...

Գարեգին բաց թողուց կնոջ ձեռքը: Մեղաւոր սիրոյ դաշինքը կնքուած էր իրենց միջև: Եթէ առիթներ պակասեցան, Աստղիկին հնարամտութիւնը ստեղծեց զանոնք, երբեմն տունը ասանձին մնալով կամ անեղինբուն ներկայութեան, անկիւններ շահապարծելով: Իրենց յարաբերութիւնները չզարկեցան նոյնիսկ երբ Սոնա հարս եկաւ հան:

Տնային կալանքի դատապարտուած Սոնա, ինքզինք զերծ պահելու համար տալերու հետաքրքիր ու գիտամնաւոր այցելուէն, ինքնակամ կը կզոյէր ներսէն զուտը ու կը զրոյէր ձեռագործով, եթէ չէր տարուած իր գծրախտութեան վրայ ափսոսացող միտքերէ կամ չէր ինկած յուզումի աշխրնբուն մէջ, որոնք զինք կը շարձէին անկողինին վրայ, որ յաճախ թմրիրը ասա-դաստ կը բանար քնարեկ հսկերուն առջև:

Ինքնակամ, Աստղիկ՝ հսկողի գերը վրան ասնելով, տախթ կու տար անեղինբուն, որ քիչ մը օգ ասնելու համար, անոնք երկար տեսլութեամբ այցելութեան երթալին քաղաքի հետաւոր թաղերու ծանօթ բնտանիքներուն: Կու գար Գարեգին, ծրարիրն տեղեակ, րնգուանարանի սեմին կը զրկուէին լեկեայն. Աստղիկ կը քաշէր Սոնայի գրան արտաքին կեռը, կը ցնցէր զուտը, որ կզոյտած էր. ապա կը զնէր կեռը, սրգէսպի Սոնա բանասուած մնար ներքը ու քաշելով Գարեգինի ձեռքէն, կը տանէր խորքին սենեակը:

Հայր Ազալեանի կիրակնօրեայ նարտախոյի մնայուն րնկեր բլլալով,

Գարեգին շահած էր Աղայեան ընտանիքին համակրանքն ու սէրը, կը համարուէր սուրբ աղայ. խաղի ժամանակ Աստղիկին հայրը դինք կը կոչէր՝ հայհայտու պէս՝ մեր փեսայ, ահա Քեզի ախ շէշ...: Սկիզբները ոչինչ կ'ըսէր մեր փեսան. ետքէն, անկառ անգլխատկոյրէն վկայութիւն մըն էր, հասկընայի միայն Գարեգինին եւ Աստղիկին միտքին մէջ: Մտնա, իր տաննձուլութեան մէջ, երբեմն, ամայտցած ու խորհրդաւոր տան խորքերէն փոխուելի եւ թխտոյի պատը ձոյներ կը լսէր ու կը մերտարէր դաննք ականջի եւ խոնջացած միտքի գիւրապղծութեան: Ոչ մէկ անգամ փորձ ըրաւ փակ դրան ձօտենալ եւ ականջը կամ աչքը կտրել կղպանքի ծակին դէմ: Կնաջական բնազդը դեռ կական զիճակի մէջն էր. նախապայտցումն ու կատկածը ճանկեր չէին նետած դեռ անոր հոգիին մէջ, այլ՝ ծուարած վախի եւ ամօթի զրախնութեան մը տակ: Չէր կրնար բմբունել շեշտուած շարութիւնը տալերուն. հինգէն մէկը, Արեւիկը, որ զբսեցի կը համարուէր, սուսով-սեղով, չէզոք համակրանք մը կը տածէր իրեն հանդէպ: Երկու պատիկ տալերը կը պահէին վերտպահ զիրք մը, երբ երկու մեծերը յարձակուածի անցնէին: Մտնա արգէն շատ քիչ անգամ կը գիմարուէր անձնապէս անոնց զրահը, որ միշտ իր ետեւէն նեթուած կ'ըլլար, Արմենակը իրբեւ ծանր հրեամանի գործածելով: Եթէ Անիկ տալը տան մէջ վերելի գիւրքերէն կը քարկածէր դինք եւ իր թոյնը միշտ պատրաստ ունէր ակոյտին տակ, Մտնա ականջալուր կ'ըլլար անոր օձային Փշչոյններուն, հեռուէն լսողի պէս: Իրեն համար հանելուկ մըն էր, սակայն, Արմենակի ուրի ջրոջ բացարձակ կատարութիւնը եւ պահակ շունի պէս, մամային տունին մէջ անոր նստած մնալու զպղանիքը: Հաջան շան պէս, ան էր, որ կը խածոտէր դինք, բզկաւելով պատիւով պահած իր տանը շարտաձայն աղջկայ մարմինը: Ննջատենեակին պատուհանին երկաթեայ ձողերուն տուած ամէնօրեայ իր քննութիւններն ու գուրքէն նետուած անոր խոր-խոր նայուածքները թէ՛ կը նեղէին Մտնան եւ թէ՛ կը նախապատրաստէին անոր մէջ քառաժանիք ստեղծութիւն մը, որ սակայն արատալայտ իլ չէր կրնար, ամօթխածութենէն զոտուելով:

Ու Մտնա կը գիմարուէր Արմենակի ցանկութիւններուն, սրոնք կը մնային կրտորական զիրքի մը վրայ: Արմենակի համար երկու ամիսը անցած էր՝ նշանածը ամէն օր աչքի տաջեւ ունենալու միտքաբութեամբ: Կիրակիները նոյնպէս, գուրս կու գային իրարու հետ, նշանուածներու պոռչաւոր հեռաւորութիւնը յարգած ըլլալու լըջութեամբ: Երբ քոյրերէն մէկը ուզէր բնկերանալ իրենց կամ մայրը իր գունդ-կորը հատկով տաջեւ լոյնոր, եկեղեցի երթալու պէս, Արմենակ բռնիքը կը մտնար եւ Մտնա ետ կը շրջուէր ու կը մանէր ննջատենեակը.

— Ես ետ կեցայ գուրս էլլալէ. գուր տաննձինն զայցէք:

Արմենակ սաքի կը մտար, մինչ մայրը կամ քոյրը, ցուցադրական, կը նեղէին իրենց վզաշալը, լուշակը կը քակէին եւ, նստելով՝ կ'ուսէին, կը փրուէին հնգկահաւի պէս, սպա մէկէն կը պայթէին թարախտած վէրքի նման Արմենակի գէմքին:

— Դուն մտ'ըզ ես. ցիցի պէս կը կենաս, երբ օտարին աղջկը մեր տունին մէջ իր էլը կը քէ: Ես՝ մենք, ես՝ իր կօշիկին կրունկը. ամօթ քեզի, կատուեցար իր վարախքին, մոտցար քոյր եւ մայր: Փո'հ չար ստատնային. արամազրութիւննիս բոյրովին փճացաւ իր երեսէն:

— Մամա, գո'ւք ալ ամէն անգամ փէշէն կը կտրուիք. ի՞նչ է, նշանուած աղջկինի՞՞ պէս, կը վախնաք. ձեզեք քիչ մըն ալ շունչ տունէ խեղճը:

— Հը՞, խե՞ղճ է եղև. մեծցեր-պղտիկցեր է խեղճ ըսածը. բոյրիս

դեռք կը տանի՝ ծաղաւ կը բերէ, ինչպէս քաւ ալ սանձդ քաշեր, քեզ իր ստար կտակեր է :

Սոնա կը լսէր ներսէն, կը փղձկէր, մազձր կ'եւէր, կը բարձրանար, պիտի պտտիկարք սակայն կը գտակէր, կը խեղդէր ներքին ցաւք : Ու մէկէն սրբեւոյժ աչքերք, գոռքս կ'եւէր սենեակէն, կը մանկը Արմենակին թելը ու կ'ըսէր .

— Քույ՛ն :

Արմենակ Սոնայի թելին հպումէն իսկ կը հիպնոսանար եւ մարգամեքենայի պէս կը շարժէր ակզէն, տի ի բերան ձղերոյ մայրն ու քայրերը :

— Քո՞, տես՞ք շամշցածք ի՞նչ խաղ խաղցաւ մեր գլխուն, — զընդիկ-կար մայրն էր : Ազճիկնեքէն մէկը մազեղ ջուր բերելու . մայրը կրնար մարիլ-երթալ :

Դուրսը, Սոնա կը հրամայէր .

— Մորս'նցս ստը պիս նախ, ետքէն ս'ւր սը կ'ուզես . . .

Ամէն Կիրակի աշտպէս կը սկսէր ու կը վերջանար տարածան եւ Արմենակ Ազալեան կը ներկայանար հյու-հնապոսիկ ծառայի վերոյ . ան ս'չ զսճ էր եւ ոչ զժգոճ իր ստանձնած դերէն : Կնոջ եւ անեղիններուն միջի, դրական եւ բացասական հասանքներու ենթակարգ՝ լաւ հաղորդիչ բնութիւնէն իր վիճակը, անկարան էր, շուտ ազդուող, բայց բնաւ ինքզինքը այրելու չտիր . հաստատակամ էր միայն իր ներքին, ստամոքսային պէտքերուն մղումին մէջ . անձնատէր էր եւ Սոնա զինք հասկցաւ ստաջին օրերէն, երբ Արմենակ զբարձրէն անուշեղէնի շերտ մը թուղթի կտորոյ կը հրամայէր իրեն : Կիրակ-նօրեայ պտոյտներու ժամանակ, Սոնայի մօտ կը շտանային փաստերը նման հոգեկան եւ Ֆիզիքական մղումներուն : Կը սթղար Սոնա անկէ, սրմէ իր մէջ կը հասունանար արհամարհանքը .

— Դպրոցին մէջ, սորվեցուցին մեզի գոյութիւնը երկու տեսակ մարգու, որոյ լեցուած է աշխարհք . մարդ կայ՝ կ'ուսէ ապրելու համար, մարդ ալ կայ՝ կ'ապրի ուտելու համար, այս վերջինին գասին կը պատկանին ախտին եւ անատին բոլոր կենդանիներք . . . :

Նստած կ'ըլլային անուշափառութիւն մը սրահին մէջ, ուր շատ գոյգեր կ'այցեյէին, ստամոքսային գրասնքին հաճոյք պատճառելու համար : Արմենակ մէկի տեղ երկու պնակ կ'ապապէր իրեն համար, երբ Սոնա կը հրէր կէս մնացած սնակը մէկկի : Լեցուն բերանոյ Արմենակ կ'ըսէր .

— Լա՛ւ խօսք է, թէ եւ ես տարբերութիւն չեմ գտներ առաջինին եւ երկրորդին միջեւ, երկուքն ալ աշխարհ մտած են ապրելու համար . իսկ լաւ ապրելու համար լաւ ուտելու է :

— Իմ մեծ-մեծ հայրս քիչ ուտելոյ ապրեր է իննսուն տարի, — կը հեղձէր Սոնա եւ տլելու չէր նայեր անոր ուտելու ձեւին, սրովհետեւ կը յիշէր խոպունոցի կենդանիները, սրոնց այցելութիւն տուած էին գոլոցային շրջապատի մը տախտակ . կը յիշէր Վահանին խօսքը, որ կ'ըսէր — խող ըստածդ տարակրանութիւն է՝ ապրակրանութեան մէջ . մարդոց մէկ տեսակը ստանց կը նմանի :

Կիրքոյ ապրկանած, սոյսրութիւններէ եւ բարբերէ խոյս տուած մարգոց մէկ տեսակն ալ կայ . բնական կոչումը անոնց՝ սրիկայութիւնն է : Պարսն Գարեղին կը պատկանէ՞ր այդ գասին : Ասպիկ Ազալեանին համար Գարեղին վնասուած սիրահարն էր . բնաւ զինք սրիկայ պիտի չկոչէր, այլ՝ բնականութենէն քիչ չեղած-չահասած էրիկ մը, որ կը փոխարինէր ստաջինը, անոր թոյած բայր գոցելոյ : Իր կիրքէն, Սոնային հանդէպ անուցած

նախանձէն կուրցած, զայն փարկարեկելու շարութեան մզումին մէջ, Աստ-
ղիկ Աղայեան պիտի շանդրադառնար, որ սիրահարին աջիւ կը բանար զազա-
նի արահետներ, ուրկէ որ մը կընար քալել Գարեգին, հասնելու համար Աս-
եան ունենալու ցանկութեան: Մանուսանդ՝ որ ան կը ճանչնար Արմենակը...

Այդ կը պատահէր Երեքշաբթի մը, պատկազրութենէն մէկ ու կէս ա-
միս ետք: Լուսն օր մը, ամսուն ՆՅին: Կը թուէր, թէ Գարեգին հաշուի չէր
առած օրուան եւ ամսաթիւին ճախարդ քնտրութիւնը:

Գարեգին ունէր Աստղիկին յայանութիւնը, թէ իրենք ասունը պիտի
չըլլային երեկոցեան վեցէն մինչեւ իննը — հիւրութեան պիտի երթային:
Փարեգին հաշուի առած էր Արմենակին բացակայութիւնը եւ սիրահարին միւս
յայանութիւնը, թէ հարսը ասունը պիտի մնար, զինք հետեւին պիտի չտա-
նէին, անոր ներկայութենէն չէին ախտօժեր:

Չմեհնամուտ ըլլալուն, ժամը վեցուկէսին, իրազային այդ կտորը ա-
մալի էր եւ մութի մէջ մնացած, էլեկարական լամբին կուրսութեան պատճա-
ռով: Փարեգին սպասեր էր կէս ժամի չափ, ստուգելու համար Աստղիկին
ըսածը: Անկիւնէն բամբակեցու ու քալեց արագ, աջիւ ետեւ նայելով: Սեղ-
մեց ախտները, կարգէրն ձայնը խրոցնելու պէս. դուրը բացու ու ինկու
նէր: Սոցքը անցաւ՝ սաքի մասններուն վրայ կոխելով: Տունը մութի մէջ
էր. բնդունարանին վրայ բացուող, բայց զոց գրան արտաքին նիզը չէր դըր-
ւած. ինչո՞ւ. բանալիի ծակէն կ'երեւէր լոյսը ներսին. մի՞թէ արթուն էր
Սաննա. զույգ զուրք փակ չէր. հրէ՞ք, թէ տա ի զգուշութիւն՝ թակէր
զայն...: Անտիկնալ մուտքը կընար ճշարու ստիթ տալ, իսկ Գարեգին կ'ա-
ճապարէր մինչեւ հոգ յաջող էր անցած, որովհետեւ ծանօթ էին աղպակնե-
րը իրեն. անծանօթ աղպակ մըն էր Սանայի հոգին: Բնու չէր խօսած հետը
եւ ոչ ոյ գիտէր անոր արամապրութեան, Փիղիքական փխրամութեան մա-
սին որեւէ բան: Հանելուկ մըն էր Սանային նկարագրերը: Բայց կիբքին բոցը
կը սկսէր այրել զգուշաւարութեան բարբ սիւները. հաղար քայլ աննիչէ ետք,
թքած էր հագաբեմէկերորդին վրայ. պիտի մանէր ու զբաւէր բերդը, որ-
քանով ալ որ զօրացուած ըլլային անոր պարխապները: Վճառ էր, ձեռքը
տարու բանակին:

Սննա ձեռագործի վրայ ծուած՝ լսել կարծեց արտաքին գրան փակուի-
լը. զույգ խարկանք էր, չըրտատացաւ ու շարունակեց զործը: Ընդունարա-
նին գորդին վրայ կոխուած, անլսելի կարծուած սաքերու ձայնը կրկին որել
տուաւ Սանայի լսողութիւնը, որուն ուժ կու տար նախազգացումին վեցե-
րորդ զգոյսարանը: Զեռքէն ձգեց անզնապարծը եւ սաքի ելաւ. մի՞թէ Ար-
մենակն էր եկողը: Մոեցաւ եւ ստուգեց մահճակալի տակ պահած զէնքը.
բարձին տակ ունէր սուր, խոշոր մկրաս մը եւ դաշուճակերպ գանակը: Ա-
սունը կը պահէր Արմենակին գրահները զսպելու մաքով, քանի որ ըմբանած
էր անոր փոխկոտորութիւնը: Հոտահելով ունեցած զէնքերուն եւ կնաջական
գեռ անկերպարան խորամանկութեան, Սննա յառաջացաւ դէպի զուրք ճիշդ
այն պահուն, երբ Գարեգին կը ձեռնէր գրան բանակը:

Գուրք մէկէն բացուեցաւ:

Սննա եւ Գարեգին գիրար գտան դէմ գլխաց:

— Ա՛հ, զո՞ւք էք, պարսն. ինչպէ՞ս ներս մտաք. ո՞վ տուաւ ձեզի բա-
նային, — լուրջ էր Սննա եւ այդ չոր սճր սպրդեցուց դէմքը:

Գարեգին ժպտեցաւ. քայեց գէպի ներս, երբ Սննա ետ-ետ կ'երթար,
հետաւորութիւն մը պահելու համար: Յառաջանալով մէկտեղ՝ Գարեգին,
կ'ըսէր.

— Բանալին դո՛ւն եւ տուած . չե՞ս յիշեր . պատուհանէն նետեցիր , որ դամ քաղաքիս թաղուհիին տեսութեան . . . : Մէկ հատիկ եւ ամբողջ քաղաքին մէջ զեղեցկութեամբդ եւ ո՞վ է քու աչքդ . մեղքնալիք արարած մը , որ կէս մարդ է . . . : Աստղին տեսնելուս՝ կրակ ձգեցիր մէջս . եկայ , որ կրակը մարեա :

— Դո՛ւրս , անպատկաս սրիկայ . դո՛ւրս կորէք . . . : Դեռ կը դրարտէք ալ , որ ես եմ բանալին տուողը . մտան ինչո՞ւ ձեզի բանալի պիտի տայի :

— Որովհետեւ մարդը մարդ չէ , կը հասկնա՞ս , — իր քայլերով , յուշիկ , մտածուած՝ կը քշէր Սոնան զէպի անկողինը , որուն մէկ քայլ էր մնացեր : Կը բռնէր վերջին գրահով գոնեկ ու նետել ցանկութեան գոհը անկողինին վրայ . . . :

Սոնա կ'արածար ընելիքը . ուժը պիտի չբռնէր անոր . բանուէլէ ետք ադատու՞մ պիտի չունենար . պիտի խայտասակուէր : Բարձրն սակի գէնքերը կրնային արիւնոտ ոճիւրի մը տեղի առլ . կը խայտասակէր իր անունը , ողջ կամ մեռած . խտասութեան զիմակը վառ ատու եւ ժպտեցաւ . խնդրելու պէս , բառ .

— Աղջիկ եմ զեւ . կ'անպատուէք զիս , մեղքեցէք . . .

Գարեգին կարծեց , թէ սրսը զիրին էր ատած արգէն .

— Դիտէի , որ այդ այդպէս էր . . .

— Ո՞վ ըստւ , — Սոնա կը շարունակէր ժպտով թմրեցնել զիմացինը :

— Մարդէկ ըսած եմ . եւ քանի որ ան է բողբոջ , ուրեմն , համաձայն է ինձմով քեզ տիկնութեան զիրքին բարձրացնելուն , սիրելիս , պաշտելիս . քու զեղեցկութիւնը մայեղից կամ դրախտ ելլելը մէկ է ինձի համար . . . :

Գարեգին բռնեց Սոնայի թեւը եւ աղեց քաշել կուրծքին : Կը խորհէր՝ այս ինչքան զուրին որս էր եւ ինք կ'երեւակայէր հեքիաթային խոչընդոտներ , անանցք արգելքներ : Սոնա իրեց թեւը . կը ժպտէր սակաւին եւ քովն էր մահճակալին , վերջին խօսքը եզաւ .

— Քանի որ մարդս բաժն է , ան երկու ականջով էջ մըն է . չարժեք իր պատիւը պաշտպանել զահողութիւնով . միայն , խնդրեմ , նստեցէք աթոռին , դէմքերնիդ գէպի դուռը , սրպէսպի կարենամ մերկանալ . . . : Ամօթ է ձեր առջեւ հանուիլը . . . :

Գարեգին կը թուէր , թէ բարձրացած էր եօթ երկինքները : Նստեցաւ ցոյց արուած աթոռին , դէմքը՝ գրան : Սոնա ծռեցաւ . . . :

— Աչքերնիդ դոցեցէք , որ անպուշտութիւնը չունենաք հանուիր տեսնելու . երբ անկողինին վրայ երկնամ , կը ձայնեմ՝ եկէ՛ք . . . :

Սոնա ծռած էր եւ երբ բարձրացաւ , մահճակալին տակէն հանած էր միս ծեծելիք օթակ մը . մօտեցաւ իր սրտաւը զողնալ ուղղղին եւ այլեւս չմտածեց հետեւանքին : Օթակով զարկու մարդուն գլխուն , որ անշարժացաւ : Ռճիւր մը գործած բլլայալ ստակումը ետքէն էր , որ պատեց իր կութիւնը . ինկաւ անկողինին վրայ . պիտի յար , սակայն երկվայրկեան չտեւեց հոգեկան թուրութեան պահը : Լարեց ուժերը եւ աթոռը մարդով քաշքշել սկսաւ : Ձեռնակասքի պէս էր աթոռը : Մութին մէջէն հանեց միջանցք : Դուռը կղպուած էր ու քրտինքը կը հոսէր մարմինին բոլոր ծովտախրեքերէն . ինչպէ՞ս բանար դուռը . ցանկարձ յիշեց , թէ Գարեգին գուռը բացած ու ներս մտած էր : Մտանքչտեց անոր զրոյանները . . . : Վերջապէ՛ս . ամէն մատուցութիւն մէկէն սրբուեցաւ մէջէն . ո՛չ միայն կը դպար եւ ոչ ալ խղճահարսութիւն . . . : Բացաւ գաղտաղտի դուրսի դուռը , դրսիս հանեց եւ դիտեց փողոցը . ամայի էր ու մութ : Աթոռը , բեռով զէմ բբաւ գրան եւ ուշադնայ մարդուն մարմինը շրջեց զէպի մայթը . փորձեց կանախով գայն կաթնցնել պատին : Մութին մէջ

անցորդը պիտի կարծէր, թէ զինոյ մը վրած էր պատին տակ, առն մտնելէ առաջ: Սոնա եւ փախաւ ոթնասով զկտի ներս: Իր միակ մասսեւեւումը եղաւ ուշքի բերել Գարեգինը: Սոչոր թառ մը ջուրով լեցուն, առած՝ ետ զնայ վաղելով, դուռին մէջէն շարսեց պարսնակութիւնը մարդուն երեսին. սարսեց, որ սն շարժէր: Ազատով լնքն իր բրածէն, Սոնա փակեց կղպոնքը եւ բանալին ձեռքը՝ սնցաւ ննջատենեակ: Գիշերապղեսար ջուր կտրած էր. այս անգամ մերկացաւ բարբառին, շիկեց մարմինը պաղ ջուրով, քրտինքին հոտը կորսնցուց օտար բոլոյնով, հազաւ նոր գիշերապղեսարը եւ իր ամբողջ պայտջթը, տակաւթիւնը, սիրը պարպեց մէկ բասով:

— Սրբկա՛յ:

Պարսն Գարեգին ինքզինքին դարով՝ դարմացաւ, որ նստած էր սրտին տակ, վրան-գլուխը թըջուած, անձրեւէ բննաւած հաւաքբարի սէն: Նոյեցաւ երկինք, ամպի կտոր իսկ չկար երկինքի երեսին: Ելաւ սոքի. անցարդներ քովէն սնցան անուշազիր: Նայեցաւ ժամը, եթաւէն չկար դեռ: Քալեց՝ զինովի թոյլ ստրբը շարժելով: Ամբողջ ստրբի մը հիւանդ պատկածի թմբութիւն կար մարմինին ամէն մասին մէջ: Քայելով՝ հետզհետէ պայծասացաւ յիշողութիւնը. թքաւ դեռինք:

— Գլուխս հարիւր քիլօ կը կշռէ. դրաւ կու գամ, որ լաւ ձեռ կերած ըլլալու եմ. բայց ո՞վ կրնայ ձեռած ըլլալ զիս, — ուները թօթուեց եւ առանց ուշ դնելու իր վսայ-դուրին, մտաւ խմբարան մը, — ես պէտք է խմելով ասեմ սրբկայութեանս անխոստանակ պարտութիւնը:

— Է՛յ, կարաս՛ն. շիշ մը սւիսկի:

Եւ ահա խմանութեան այլ զիշերը ինդարով, լարով եւ երբեմն երգելով ասեմ անխոստանակ պարտութիւնս:

մէր խոռոխիւուն բանալիին պտտութիւնը: Հետաքրքրուած բանալիով՝ ձեռքը խաթեց զբարձրները, ախտ՝ս. բանալին չկար:

— Կը տեսնե՞ս, բարեկամ. բանալին կորսնցուցած եմ. հող չէ, առնը հաս մը եւս սնիմ:

Բարեկամը՝ բարեկամ էր Արմենակին: Քսան օր ետք, երբ սն եւ Արմենակ զիշերը խմանութեան յանձնած էին իրենք զիրենք, բարեկամը պատմէր պիտի հերթաթի նմանող այդ առասպելը:

— Գիտե՞ս, Արմենակ, եղբայրս. կ'րտեն՝ «կեսուք քեզի կը խօսամ, հարսա, դուն հասկցիր»:

Արմենակ աւելի կռահած էր, քան ըմբռնած ընկերոջ խօսքերուն տակ պահուած միտքը: Զգալիութենէն, առն դալու պահուն՝ քակած էր օձիքը, մէկ կողմ հրած փողկապը եւ մտղերը զղղղած, այնպէս կարծել տալու, թէ կրտած էր մէկու մը հետ, բանալին պտտաւտով:

— Զեզի կ'ըսեմ, ո՞վ տուած է բանալին...:

Ատողիկ կը յիշէր ըսած ըլլալ Գարեգինին, թէ բնուելու պարագային, բանալի ինդերը նետելու էր հարսին ճիտին: Ատանց նայելու եզրօրը տէքերուն մէջ, բոսւ:

— Ո՞վ պիտի ըլլայ որ. կենդ տառարնէ իրիկուն պտտուհանին ասջեան է. ի՛նքը տուած կրնայ ըլլալ...:

— Քա, սրտ՛ն, — զարմանք կտրեցաւ մեծ քոյրը:

— Ի՞նչ գիտեամ. հարցուր եղբորդ...:

Մայրը ծանկերը կը ձեռէր ախ-փախեր քաշելով, մինչ Արմենակ դոռաց անոր երեսին իր շունեցած ձախին ամբողջ ուժովը, որ ետքէն խեղդուկ ճիչի սպառում գտաւ:

— Լուեցէ՛ք, ջաղուններ. լաւ դիտէք աղբիկ եւ աղբերնիկ արիշին վրայ

սրտիկը պատիւ կը սեպէք. ես ձեր եօթը սրտը ինչ բնեմ, — և չկարենալով աւելին բռնել, վաղեց գէպի յուսացարան, սը ջուրին յանձնեց մազձին մնացեալ կէտը: Իր յինչարով յուսացալիս կարծէք ջնջեց փոթորիկին հեռքը: Երբ վերադարձաւ ընդունարան, հան յառթիւն կը տիրէր. մաշքը և քոյրերը քաշուած էին իրենց սենեակները, թողերով Արմենակին յետին պոսթ-կումներուն բաժնեկից կիներ, սը ականջայուր եգած էր խնդրին և անհոյ՝ երկարած անկողինին:

Բանայիին խնդիրը մնացեր էր անյոյժ: Արմենակ չէր կատարուեր Սոնային վրայ, բայց արամագրութեան գեկը կտարած էր ալքըսով: Երկու ամիսը անցած էր և նոր ստունին վարձքը պատրաստ էր. կիներ պէտք չէ մերժէր այս անգամ. ու ծառ մտադրութեամբ ալ մտաւ Սոնային մօտ.

— Կ'բռնէ, թէ գուն ևս տուած բանային, — Արմենակ խորհեցաւ, թէ գտած էր խօսերս ճշգրիտ կերպը: Ծառ էր յորջ:

— Ի՞նչ բանայի, — անկիրք էր Սոնայի պատասխան-հարցումը:

— Մի՛ ծածկեր. ևս ամէն բան իմացայ:

... Եթէ իմացեր ևս, աւելի լուս:

Արմենակ երկար շունչ տաւ.

— Պիտի ստուգեմ իրար ևս սուտը:

Սոնա ձեռքը խօթեց բարձին տակ ու անտարբեր յարեց.

— Ստուգելը գուրբը, քրոջ վրայ:

— Քոյրս կին է իր հաշտին:

Սոնա սկիզբէն ըմբռնած էր մարդուն միտքը. ելաւ ստքի.

— Ես ալ աղջիկ ևմ իմ հաշտին. և ևթէ ձգեմ քեզի, չեմ պղտար:

... Կը պղտա կամ ոչ, չեմ պիտեր. միայն պէտք է, սը ստուգեմ աղջիկ ևս թէ կին...

... Չհամարձակիս, — ճշտց գրեթէ Սոնա ու ձեռքը նեւեց բարձին:

Արմենակ հասաւ-գրկեց ևսեւէն և մեկուսացայ թեւր: Այն ստեղծ լուս պոյքար մը սկսաւ իրենց միջեւ: Կտրովը, պարտուած ըլլալու ամօթը, մինչև որս գրեմագրած բլլալու կիրքը՝ գարձան ընտղը և տակնութիւն, դնուեցան Սոնայի ինքնապաշտպանութեան մէջ և ան սկսաւ խածոտել մարմինը կաշիանդող մարդուն ձեռքը, թեւր և ինչ սը ինկաւ ակաւնեւուն տակ. ստքերով կը հարուածէր, կը սեպուէր իրերս միջև, միշտ իր անկումին արդեթակոյ յենակներ սրտնելով: Ի վերջույ, պիտի յաղթանակէր, երբ Արմենակ, յիշերով քրոջ խօսքը, — թէ ամուսնութեան ասաջին գիշերը բուսնցքի հարուած մը տարով ծածրակին՝ ամուսինը խրած էր իր աղջկնութիւնը — ասանց անգրապանալու հեռեւանքին՝ արմուկով մըճեց Սոնայի գանդին յետնամտը...

Ոչ մէկ ձայն. Արմենակ զլաց, սը գիշերին մէջ պոյքարոյ մարմինը մէկէն, ալքատարիկի նման ծանրացաւ ու կախուեցաւ թեւերէն. ամէն դիմադրութիւն կանց ասած էր. կանչեց՝ «Սոնա՛, Սոնա՛, ի՞նչ կղար...»: Վախէն ընկճուեցաւ. սակայն ալ վախը զպացում կամ յուզում չեղաւ իր մօտ — քոյրը, սը իրեն տուած էր խորհուրդը հարուածելուն՝ ինքը ևնթական կ'աղքէր, ուրեմն մահուան հարց չկար — Արմենակ չէր պատրաստուած նըման անակնկալի. իր ասաջին ու վերջին մտածումը եղաւ դեռեղել Սոնային մարմինը անկողինին վրայ. անոր մէջ կը շնչէր ու կ'աղքէր կեանքը. չէր կրնար անդրադառնայ, թէ ոյր կեանքը շատ էր թուլ և անպաշտպան: Անգամ մը, սը Սոնա անշարժ երկարած էր անկողինին վրայ, թեւերը թուլ, ստքերը մերկ ու իրարմէ գտաւած, Արմենակին մէջ խօսեցաւ միայն անզգամ

կիրքը, որ անասնական բնագոյին հետ չի շփոթուիր, երբ բանականութիւնը կը խուսափի մարդ հակէն :

Արմենակ անբաժն անասունն էր այդ պահուն. գրկեց Սոնային մարմինը ու բնաբարեց դայն . . .

Այնուհետեւ իրարանցումը ինկաւ սունին մէջ, կէս գիշերին : Արմենակ հաքէն շատ ճիւղ թափած էր Սոնան ուշքի բերելու . իր փորձերը ապարդիւն անցած էին : Սոնան կը մնար բռնաբարուած գիրքին մէջ անշարժ, փրփրաբերան, մարմնուն կոպերով, վախապղնցիկ . . . : Արթնցան անեցլիները, իրար անցան եւ սակայն խելքերինն հորանցուցած էին եւ ամէն միջոց, ձեռքի տակ՝ օգուտ մը չէր տուած :

— Տղայ՝ աղջիկը բան մը չունէր, ի՞նչ բրիր խեղճին, — կը պօռչըտար մայրը, անբան, գլուխը կախ, ամօթապարս Արմենակի երեսին :

Մեծ ջոյրը քաշեց ձեռքէն, ցնցեց գլինք .

— Ի՞նչ ես կանդամ խայլանի նման, չերթա՞ս բժիշկի ետեւէն, աղջիկը կը մեռնի կոր : Հայտէ՛, վաղէ շո՛ւտ, հասիր, կը մեռնի կոր, կը մեռնի կոր, — հրմշակեց, քշեց եղբայրը գէպի փոսոց, մտցուց կտաքին մէջ, — քէ՛ :

Ատոցիկ շուքի պէս հետեւած էր գոյգլին, նետուեցաւ ինքն այ կտաքին մէջ, — երթամ Արեւիկին լուր տամ, — արդարացաւ : Եւ երբ կէս բրած էին ճամբան, Արմենակ նետեց մաղձը քրոջ երեսին .

— —Քեզմէ եղաւ ամէնը. ստախօ՛ս :

Բժիշկը հասաւ ժամանակին. գալէն առաջ հարցուփորձած էր Արմենակը : Տեսաւ անկողինին վրայ երկնցած հրեշտակաարից Սոնան, հմայուեցաւ անոր գեղով, մեղքցաւ գեռափութեանը ու փորձեց անկարելին կարելի դարձնել .

— Կեանքը մողէ կախուած էր. հինգ վայրկեան ուշ՝ գործ պիտի չուներնայի ես հոս : Հասանք եւ վստանըլ անցուցինք : Խիստ ուշապէր դանուեցէք, չխօսիք հետը . մէկը թող սպասէ սնարին վերեւ . ինծի լուր կու տաք, եթէ հարկ տեսնուի :

— Տոքթոր, վստանդ կա՞յ :

Սոնա սասուտուն բացաւ աչքերը, կոպերուն տակ կը տեսնուէր արցունքի սառած բարակ խու մը, որ ջուր դարձաւ ու հոսեցաւ ականակիւննորէն : Փնտուեց նայուածքով ծանօթ դէմք մը . չկա՞ր . ո՞ր էր ինք . ովքե՞ր էին գլինք շրջապատուցիները : Արմենակ յանցաւորի գէմքով ծոնցաւ վրան .

— Սոնա :

Սոնային նայուածքը սասեցաւ անոր գէմքին .

— Ստուգե՛լ կ'ուզէիք, — լսաւ ու գոցեց աչքերը : Երթունքներն էին շարունակուողը, — մինչեւ կեանքիս վերջը պիտի տեսմ քեզ . . . : Օ՛Ք, գլուխս . . . իբր . . . գլուխս . . . Տարան . . . :

Ռուժրեք կը պայթէին :

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ԱՆՏԻՐՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՎԱՅՐԻ ԾԱՌԵՐՈՒ ՄԷՋ

Խեղճ Ֆատիլէ
 Հովան քեւեթուն մէջ լուծուեցաւ գիշեր մը,
 Զրկուած,
 Տանջուած,
 Ուշակարոյս,
 Յաւերուն մէջ սիրոյ:
 Մինչ մատախուղը կը տարածուէր բլուրներուն
 Ու դաշտերուն վլայ մանկութեան,
 Խեղճ Ֆատիլէ
 Վերջին անգամ ծառերուն տակ նստած հեծեց:
 Մէքը բիծ մը եղաւ իր երազներու հորիզոնին վրայ,
 Մէքը երազի պէս մնաց սրտի հորիզոնին անեղծ,
 Մէքը քարքում մըն էր,
 Յախշտակութիւն մը,
 Փոփառւ էր մըն էր դաշտերու ստուերներուն մէջ:

Այսօր կարծրացած էմ սիրոյ ախրութեան դիմաց,
 Տարիանիքի անօգուտեան,
 Կարեկցանիքի քշուտութեան:
 Մակայն
 Այն օրը դաշտերուն մէջ էլք Ֆատիլէն էր պաակած
 Մարգարտածաղիկներու եւ վայրի յասմիկներու հետ,
 Արեան աւազանի մը մէջ,
 Ձեռները տարածած երկիւնքին, եւ ծառերը մեղմօրէն
 Կը կեղուէին տերեւները վալթի եւ վիշտի,
 Որովհետեւ Ֆատիլէն երիտասարդ էր, կենսալի
 Եւ մեռած:

Մինչեւ իսկ եղեգնատունկը կը վախճայ մահէն:
 Երբ ալիքները անխանգերձ կը մօտեանան ծովեզերքին,
 Եւ մուսլ տրեւը կ'իջնէ հորիզոնէն
 Ու յաւասրեկ տերեւներ կը սպասեն աշման ձեռքին:

Բայց գարնան պայծառ է երկիւնքը, անպերր՝ քերեւ,
 Թիքեռնիկներ կը ցանցեն միջոցը երանգներով

Եւ այնուհետ

Մեռած է Ֆատիլէն արեան հապաղիքի մը մէջ :

Եւ դեռ տասը տարու,

Կանգնած՝ ցարասիի շուքին տակ

Կը լսէի տերեւները, որոնք կու լային,

Եւ խոտերուն մէջէն հովը կը շէշէր,

Քանի որ Ֆատիլէ կը տարբազարուէր

Իր երէկուան երազանքի պատանհներուն մէջ :

Սաղացին զգուշութեամբ բարձր խոտերու ընդմէջէն,

Խրաւանջիւրիկն ձեռքին մէջ՝ դաշոյն .

Եւ երբ ան պատկած էր ցարասիին տակ,

Վազորդայնի հրնուսլիք անուրջներուն մէջ,

Անոնք փսփսացին .

«Ֆատիլէ, ճի՞շդ է, քո՛յր» :

Ան պատասխան չուուաւ, բայց կայծ մը իր աչքերէն պտտաց .

«Այո, այո, այո,

Ճշմարիտ է եւ աւելին՝

Կը սիրեմ» :

«Ճի՞շդ է, Ֆատիլէ, քոյր, ըսէ՛ վերջին անգամ, ճի՞շդ է» :

Յանկարծ շրքները դողդոջացին եւ վարսերը տատանեցան հովուն մէջ

Եւ երբ փէշը սկսաւ պարել հալիկն հետ՝

Փսփսացին քարքիչները .

«Այո, այո, այո . . .» :

Յետոյ

Դաշոյն մը

Յետոյ երկրորդը,

Ապա ուրիշ մը

Եւ չորրորդը միտնուեցաւ, կապոյտ շապիկն էր եւ մոխրագոյն փէշը,

Երկնակապոյտը՝ մոխրացած տարիքի մը մէջ :

«Այս մէկը մեր ծնողներուն պատիւը փրկելու»,

«Այս մէկը՝ փրկելու սնունդ մեր գերդաստանին»,

«Այս մէկը՝ մեր դասակարգին համար»,

«Այս մէկը՝ մեր ցեղին . . .»

Խեղճ Ֆատիլէ

Զրկուած,

Տանջուած,

Խեղակապոյտ պարեց ամպերուն մէջ,

Ձեռքերը՝ օդի շունչէն փոսր մը բռնելով :

Մինչ մթուրիւնը ինկաւ,

Եւ բլուրներ՝ խոսցած ակիւններու պէս լողացին դէպի առաջ,

Եւ հիւղերը ընկղմեցան :

Անոր աչքերը տակաւին սէրը կ'երգէին

Եւ մագերթ կը ծածանէին մշուշին մէջ,
 Ան,
 Մէրը անմեղանակ եւ յաւիտենական:
 Յետոյ
 Մթուփինը հաստատուեցաւ,
 Խռտերը լուռ մնացին,
 Որպէսզի իրենց Ֆատիլէն
 Պատիւի եւ սրեան աւագանին մէջ
 Մեռնէր իր երազի կենդանութիւնը գրկած...

ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ՄԱՏՈՆՆԱ

Խորհրդաւոր Մատոննա մարգագետիններու,
 Ընծայէ՛ ուշքդ ինծի,
 Ժպիտ մը շնորհէ
 Խոնարհալուր, մրմուսցոյ հոգիս:
 Թող բառերն այս եւ վերածեմ տեսիլքի,
 Եւ տեսիլքը՝ գիծերու, եւ գիծերը՝ երգի,
 Երկնելու փառքդ:
 Թող ստինքներդ յարդին միշտ,
 Թող կուպերդ չխոնարհին,
 Թող սրունքներուդ ծփծփումը
 Եւ աչքերուդ կապոյտը խիտ
 Տեսնեն միայն յաւերժական երջանկութեան լոյսեր:
 Թող համբուրեմ ոտերդ եւ կորութիւններդ շրթներուդ,
 Թող ցնցուզեմ բունիդ մէջ պղպջակներ օդի:
 Թող որ, թոյլ սուր, օ՛ր, հանդերու խորհրդաւոր Մատոննա,
 Թափառիլ խոնարհ իմաստներէդ, բացաստաններէդ
 Եւ բոլորուդ ստուերներէն:
 Թող լուսցուլիմ արցունքներուդ մէջ,
 Վրիժառուն ըլլամ երկիւղներուդ համայն,
 Ըլլամ եւ յանցապարտ, պատուանդանը ըլլաս տարիներուս գալիք:
 Ամէն առաւօտ արեւածագիկներ թող թեզ պահումեն,
 Երբ նիրհես՝ պարեն աշխակները բոլոր,
 Թող սիրոյս հունտերը վերածուին ժպիտի,
 Որպէսզի նաեւ եւ պատուարուիմ այդ ժպիտիդ մէջ:
 Եւ երբ այս մրմնջացոյ հոգիս
 Սփռուի հովուն մէջ, որ թեզ այնքա՛ն կը սիրէ,
 Արձագանգէ աչքերուդ աստղերուն մէջ, եւ անոնցմէ անդին,
 Ուր լայնահուն անջրպետն է.
 Մտքիս խորութիւններէն մինչեւ գիծերու,
 Գիծերէն՝ երգերու, երգերէն՝ երազանքի,
 Բեզգի համար եւ ինչ ցեղիդ մէջ կարեւոր բնակելու:

Օ, հանդերու խորհրդաւոր Մատաննա,
Վայրկեան մը գէր- այդ հայուածժոյ ինքնասիակ
Գի՛ր աչքերուս մետաքին մէջ:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԳ

Ես որ եկած եմ ժամանակի բուսկներէն տարտամ,
Կալուած ժայռեր, ցանցնուած հող, ջուրերու մէջ
Թարախուած մարմին, սրբուած հովով, հողին վրայ սուրբ,
Խենթ եմ ես:

Ես խենթ եմ, այո, անշուշտ խենթ եմ ես. ինքնասիւռ
Ինչպէս աշնան գիշերուան քամի: Վայրկեան մը
Երջանկութեան կատարն եմ, յետոյ յատակը յուսահատութեան,
Ես խենթ եմ:

Կ'աղաչեմ, որ չարեամարեւէք, չծալէք հոգիս,
Որ մեր դաշտերուն մէջ է, վայրի վարդենիներուն մօտ,
Շաշաններու կողին, հարնջենիներու կարն ծառերուն ճով:
Ես այս բամպակի պէս կակուղ աչքերով
Տեսած եմ սարդեր, որոնք երկինքը կը հիւսեն, օճեր
Անպերու մէջ սողացող: Վեց երգեր երգած եմ ծայրէ ծայր
Եւ ապա՝ դիտած դաշտերս, որոնք կը չարնային:
Արեանս մէջ կը կրեմ նախկին միլիոններս, եւ որպէսզի
Օգը բարմանայ եւ մտածումներս քեւածեն,
Թո՛ւքեր կը խնամեն երգը եօթներորդ: Ազատ ըլլալու երգը,
Եւ սիրուելու եւ պատկանելու այն հողին,
Որ զիս կերպաւորեց դիմացի բրուտին մատներուն մէջ,
Ես խենթ եմ:

Մեր հանդերու հեղազուաներով եւ գալարշիներով շրջապատուած
Պիտի էջեմ ամառ գիշեր մը, երբ լուսինը լման է,
Վերի աստղերը պիտի հոգան մինչեւ ուղեւորումիս վերջին կայանը
Եւ նոր համբորդութեան մը սկիզբը:
Թէպէտ աչքերս ձեր բոլոր նախկին երազներուն կը դաւեն,
Եւ ափերս կը դողան ցնծութեան եւ ատելութեան ծանրութեան սակ,
Ես պաղ եմ, ես սառն եմ, երիտասարդ եմ եւ ատելի ձեր,
Քան սպիտակները բլրան կատարին, քրքիջը առուններու,
Եւ վերագարձող ծիծառներու ծլնզոցը:
Ես կը պատկանիմ ժայռերուն, ջուրերուն, հովերուն,
Կը պատկանիմ երգի մը, բո՛ւսնէի մը, կարօտի՛.
Խենթ մըն եմ, սակայն

Պիտի երգեմ ձեզի համար եօթներորդ երգս, որպէսզի լսէք
Եւ դուք, որ վախնալ շատ կը սիրէք՝ վախնալ այս հին ձայնէն,
Որ կ'ոտնայ նորէն հողի բնդերէնէն,

Հողի ընդերքներէն՝ իբրեւ բասի շոգի:

ՃԻԶԻ ՆՄԱՆ ՓՍՓՍՈՒՔՈՎ

Ճիչերով եւ փափսուքներով պիտի առաջնորդեն Քեզ
 յուսահատութեան խորաչափերէն,
 Ոսկի եւ արծաթ պիտի ցնցուդեն իւրանիումի հետ, վարսերուդ վրայ :
 Քեզ հազածող երգեր պիտի հասնին յուրքեան մէջ
 տխուր ստաւօտուն կիրակիներու,
 Երբսք քափառիս վարդաժիտուն եւ անփշապատ մարգերուն վրայ :
 Ճիչերով եւ փափսուքներով պիտի առաջնորդուիս երազանքի մտացումին,
 Մանուածապատ արահետներ, որոնք կ'անցնին միգաստուեր,
 մահագուշակ վտակներով,
 Վերք՝ ձորերու կատարներ եւ կիրներ լեռնակատարներու,
 Վարք՝ երկինքը, ծովերու վրայ շառագոյն, եւ հարցականօրէն չոր :
 Ճիչերով եւ փափսուքներով պիտի սպասես բախտի անխիւն,
 որ յանկերգէ,
 Սայրերուն՝ որ մազլցին դէպի բարձունքի այն հունտերուն,
 որոնք պէտք է ցանուին նարէն,
 Մթութեան՝ որ ցրուէ բոյրերու տերեւներ, կաթեցնէ
 սերմերը հին բախտի .
 Պիտի սպասես ժամանակը, որ ազարտէ անջրպետը խարուսիկ,
 Ուր կ'իյնաս դուն, խորհրդաւոր շեղջակոյտերու մէջ .
 լուռ, ինքնաբեկ փռչի :

Անդրէնէ Քարգմանեց
 ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Ն. Տ Ե Ր Ս Ա Ր Գ Ի Ս Ե Ա Ն

Փ Ո Ղ Ո Ց Ը

Փողոցը ջերմ էր, փոշոտ, հին: Իրենց դաղաթիւներով իրար գրկող ծառեր, սրոնք տեսակ մը հրատույր եւ խորհրդատուութիւն ունէին ու կը պաշտպանէին փողոցէն դուրս եկող, թեթեւցած եւ բիւրեղացած հրճուանքներ մատնող անցորդները:

Մարդիկ երկար մտածեցին անտեսուած փողոցին բարեկարգման մասին եւ իւրաքանչիւր բարենորոգում հկաւ բոնաբարեկու անոր արատութիւնը:

Նրկինքը ծածկուած էր ամպերով եւ ամբոն տաքութիւնը ամպոտ երկինքին տակ խեղդող ներկայութիւն մը կը ստեղծէր:

Մարդիկ հաւաքուած էին զիտելու անպաշտպան փողոցին դէմ սարքըւած դուր: Ծառերը՝ խրոխտ, դեղեցիկ, իրենց չքնող դլուխները կայքնի հարուածներուն յանձնելով՝ յաջորդաբար գետին կ'իյնային: Մանուկները կը զուարճանային գետին տապալած ծառերուն ճիւղերով, կը պաշտպանէին հոն բոյն շինող շտարած թուշուները: Ծերեր, քարերու վրայ հանդգած, կուլային իրենց անցեալի փլուզումը: Նրիտատարդներ անոր երէկի թարմ տերեւներուն մէջ թաքնուած կը տեսնէին իրենց սիրոյ առաջին յայգերը, եւ բուրբ տակուլութեամբ կը դիտէին հեռոջհեռէ մերկացող փողոցը:

Այդ օր փողոցը կորսնցուց իր բանաստեղծականութիւնը եւ դարձաւ հասարակ, բայց, քորացած ներկայութիւն մը: Իրեն հետ ցնդեցաւ նաեւ գրաւչութիւնը փողոցային երջանկութեան:

**

Սենեակին բաց պատուհանին դէմ կանդնած՝ ան կը դիտէր բարձր շէնքերու մէջ խեղդուած փողոցը:

Արդէն տարիները մաշեցուցած էին զինք:

Բաղաքը բարձրանալով սոնակախած էր փողոցը, սրուն գուարթ ու թարմ դէմքը արդէն անյիշատակելի իրողութեան մը վերածուած էր:

Բարէ անաարբերութիւն սնուցուած էր ամէն կողմ: Ան եկած եւ բաժնած էր հոգիները: Փսքը խցիկներու վերածուած էին տարածութիւնները, սուսնճնացած էր ամէն սք, սուսնճնացած էր ամէն գոյգ, սուսնճնացած էր ամէն ընտանիք, եւ քարերը բարձրանալով սնմիջապէս դժած էին բաժանման սահմանները: Եւ ս'ըբան կը բաժնուէին տարածութիւնները, ա'յնքան կը հեռանային մարդիկ իրարմէ, կը գատնային անջոտ, աղստ, միայնակ

բայ տխուր, որ հեռոցհեռէ կը խորանար անոնց մէջ, եւ հեռոցհեռէ առանձնութիւնը կը կաշկանդէր իրենց ազատութիւնը. անոնք սարսափած էին եւ ազատութենէն, եւ առանձնութենէն, ու սիրով ու արհամարհանքով կը դիտէին քարը, որուն վրայ կը բարձրանար ծանր ու մծղոյն քաղաքակրթութիւնը:

Տարիներ տասջ' օր մը, ինք կարօտով լըած էր հոն, գլխադրաւելով իր դէմ բացուող սրբոց դեղեցկութիւնը, որ կու գար ազատութեան ծոցէն բխող սաք ձայնի մը սէս, յայն հարկաններու վրայ սարածուող անկեղծ երայներ ներշնչելով:

Հիմա միայն քարեր կային խոշտանդուած, շնչահեղձ փողոցին վրայ, ուրիշ ինք մէկն օր բան մը կրանցներով կը հեռանար:

Այսօր սարօրինակ խլրտում մը կար ենթացիտակցութեան խորը, զգայնութեան բարերան վրայ:

Ազատում մը կար հոն: Աճող եւ դէպի յուսահատութիւն ուղղուող սպասում մը: Ինչպէս տմէն օր, այսօր ալ միտակ էր սենեակին մէջ: Գիշերուան մթութեան ու բութեան տփին՝ ան առանձին կը գլխադրաւէր կեանքը, որ կը թուէր բլրով իր վերջին օրը:

Մօտեցու պատուհանին: Քաղաքէն բարձրացող ծուխը ծածկած էր երկինքը տյնպէս թանձր, որ կարծես չկար երկինք, չկար դեպին, ու բարձր շէնքին միջոցով փողոցը կը կապուէր երկինքին, որ միայն ծուխ էր, դորշ ծուխ, որուն մէջէն կարելի էր նշմարել տուներու աղօտ լոյսերը:

Վարը՝ հեռուէն կը նշմարուէր պատին կռթնած ու իրար դրկած դոյզ մը: Ժամանակը ուշ էր: Այս ժամուն հաղիւ թէ գինով մը օրօրուելով քալէր ցերեկուան յոգնութենէն սպառած փողոցին մէջ: Չոյրը անշարժ կեցած էր մայթին վրայ: Մէկը յենած էր պատին, միւսը՝ արեւը ընկերով վրայ հանդէսդրուած՝ կը նայէր անօրոշութեան:

Եթէ ինք երկար մնար պատուհանին մօտ ու շարունակէր դիտել դոյզ դերը, անոնք երթալով պիտի մօտենային, պիտի նոյնանային անոնց ձեռքերը, աչքերը, մարմինները, եւ եթէ իջնէր վար, հասնէր անոնց հողիներուն, հոն պիտի հանդիպէր իրենց աւօրեայ միօրինակութենէն փախչող մարդոց:

Հեռացու պատուհանէն, զարմանալով, թէ ինչու մարդիկ քարեր չէին պատեր փողոցին մէջ, իրարմով վերացած այդ զոյգին շուրջ:

Փոշառ սեղանին վրայ նկարներ կային, հարազատներու մծղունած նրկարներ, թարմ ու մանկունակ գէմքերով գուակներ, Ժպտուն թոռներ: Պատկերներուն մէջ խորանայով կը փորձէր տեսնել անոնց ներկայ կեանքը՝ փողոցներու արագութեան մէջ քաշկառուող իրենց մարմինը, վերելակներու սրացքին մէջ վերթիւյրոց արշաւը, գրասենեակներու ծուխերուն մէջ պայծառանալ փորձող անոնց մտքերը, մարմիններու ջերմութեան մէջ դրսևորւելի փորձող սէքերը, իրենց հօր հեռուօր ներկայութիւնը շալիս ծանր ու ցաւազին զբացումը:

Փորձեց կապ մը ստեղծել իր գուակներուն ու թոռներուն հետ:

Թուղթի կտոր մը, մերկնադրուած հասցէով՝ պահարանի մը մէջ սահած:

Հեռաձայնային արագ պանգահարում մը, ցնցող ու գիւ ձայնի ետին յաւիտենական պտրտութիւն բացող այդ ձայնը:

Փողոցի մերկացումին չափ անհրապոյր ու չոր կապեր էին անոնք, որ

պիտի տանձին զինք զէպի կեանք: Ինք յողեցած էր այլ չոր կապերէն: Հիմա ապրող, մօտիկ սիրոյ մը զիրկընդխառնման կը կարօտէր, երբեմնի այն ջերմ փողոցին պէս շօշափելի գէմք մը պէտք է խլրտար իր գէմ, դուստուրուէր ժպիտով, վաս երջանկութեամբ, փայլոց աչքերով սաստառէր ու անցեալէն տիրչներ փոխանցէր իր ամլացած գէմքին:

Բայց վայրկեանները կը սահէին ու կեանքէն իրեն կը մնար միայն սեղան մը, անկողին մը, տխու մը, անխօս նկարներ եւ, բնդհանուր առմամբ, այս բարձր շէնքին մէջ գանուոյ սենեակը: Իսկ իր ենթակայական աշխարհին զիրկը՝ երէկի հանգրուանները, սրանք այնքան հեռու էին իր առօրեայ աշխարհէն:

Հիմա տեսակ մը բնդհանուր յաղնութիւն կ'երթեւեկէր իր սան մէջ: Յօգնած էր ստանձնութենէն, յոգնած՝ ժամերու գանդազ մաշուովէն, յոգնած՝ յիշատակներէն, յոգնած՝ բջիջներուն ծանրութենէն:

Կը զգար, թէ բան մը կը մօտենար իրեն: Գրան ետին կեցած մահը պիտի թակէր իր դուռը վայրկեան մը ետք:

Կը զգար, թէ բան մը կը խլրտար դուռը: Ծէնքին գէմքը համբարսոյ քամիին հետ ստոստոսոյ մահուան բոյրը կը շրջէր շուրջը ու շունչը հետքհետէ կը տկարանար:

Ներքին պապակ մը ժպտեցաւ իրեն: Ուղեց կենդանանալ վայրկեանի մը համար, փափաքեցաւ, որ մէկը հեռաձայնի իրեն ու շնորհաւորէ մահուան սպասման այս պահը: Չառակ մը, թոնիկ մը, գրացի մը, աստիճաններուն վրայ մըլառող կատուն: Մէկը՝ որ այս ատրածուն ու մարդաշատ երկրագունտէն անջատուելով գայ իր ամայի յարկը, շնչէ ջերմութեամբ եւ, ձեռքէն բռնելով՝ աստջնորդէ զինք զէպի մահուան սեմը:

«Արդեօ՞ք երկրապաշտը պարպուած է մարդոցմէ», մտածեց ու զգացում մը թաւայելով կազմաւորուեցաւ իր մէջ, մարմինէն սահելով անցաւ ձեռքերուն: Արեքը, պրկուելով՝ փերածուեցան բոունցքի: Մնաւ ատերութիւնը, հին, երբեմնի իր ճանչցած փողոցը ոչնչացնող ձեռքերուն հանդէպ, եւ քարին հոնդէպ, որ ծածկեց փողոցի փոշին: Ատելութիւնը՝ զինք բաժնող, սահմանափակող քարին հանդէպ: Իր սէրերէն, յոյզերէն, զգայնութիւններէն ծնած խոր ատելութիւն մը կը խորանար իր մէջ եւ կը կուտակուէր քարին վրայ, դոր կ'ատէր, կ'ատէր հաղիներու հետաւորութիւնը, փողոցի ամայութիւնը:

Նայեցաւ հալոց իր կեանքին, որ երկվայրկեանէն կախուած կը ճօճուէր կեանքի ու մահուան անդունդներուն մէջ:

Վայրկեան մը փակեց աչքերը, ու տհա անոնց մթութեան մէջ պատկեր մը պարզուեցաւ իր գիմաց:

... Կարծեց, թէ ոտքի ելլելով կը զարնէր գիմացի դուռը, կը բանային, բան մը կը փոխար անոնց, կը փօխանցէր քարին պատմութիւնը, անոր բռնազրօտիկ ներկայութիւնը, եւ անեցիկները գուրս կու դային, միասնաբար կը զարնէին մնացեալ դուռները եւ բոլորը կը հետեւէին իրարու: Բազմութիւնը հետզհետէ կ'աւելնար: Անոնք մերկ ոտքեր ունէին եւ իրենց ափերուն մէջ սեղմուած մուրճերով կը հարուածէին շէնքը: Քարերը մէկ առ մէկ կը տապալէին: Սանդուխներէն վար իջնելով անխօս, պիրկ ու խոժոռ դիմադիժներով այդ մարդիկը կը շարժէին իրենց ոտքերը գէպի վար, կը քուէին իրարու եւ տեսակ մը պմուսի կը լեցնէր շէնքը, ոտքերէն ծնած ու տարածուող բմբոստ արմուկ մը, որուն մէջ կը խորատակուէր քարին ճայնը: Վարը՝ անոնք կը շարունակէին հարուածել փողոցը, ուժովն, սրտաբուխ հարուած-

ներսոյ : Կ'ուղէին խորտակել զայն : Ամէն կողմ կը տարածուէր խլրատոյ ու պարսոյ մտրճերու տղմուկը եւ քարերը մէկ առ մէկ կ'իջնային . . . : Մարդոց խլրատումոյ ստեղծուած շփումն ու մօտեցումը գոհունակութեան զգացում մը կը բանար իր զէմքին վրայ : Բաւական յոյժած՝ կը հեռանար ազմուկէն, մինչ ամբոխը կը շարունակէր պարել փողոցին մէջ, քարտկոյտերուն վրայ . . . Անոցին, պատանի մը, զէմքը ձեռքերուն մէջ պարփակած՝ կը դիտէր աւերակ փողոցը . . . : Մերունին մօտեցաւ պատանիին ու շնչատպառ հարցուց .

— Ի՞նչ կ'ընեն :

— Կը մտածեմ, — պատասխանեց պատանին անշարժ :

— Ի՞նչ կը մտածես, — հետաքրքրուեցաւ մտրդը, յիշելոյ իր սեղանին վրայ շարուած հարազատներուն նկարները :

— Կը մտածեմ, թէ ինչպէ՞ս կարելի է վերականգնել փողոցը, — րսաւ տղան ու շարունակեց դիտել աւերակները :

Մտրդը նայեցաւ պատանիին, ապա՝ քարին, եւ զգաց, թէ քարին մէջ մտշելոյ փոքր տղան պիտի հասնէր իրեն, իր ստանձնութեան, իր մահուան : Չզայ, թէ հոգիին բիւրեղացումէն բխած ստեղծութիւնը ծնունդն էր իր ճիւղաւորուած տարիքին : Տեղ մը պիտի դառնար կեանքի շղթան, ու մարդիկ հետաքրքիր աչքերոյ պիտի փորձէին վերականգնել փողոցը . . .

Բացաւ տէքերը : Սենեակին մէջ էր սակաւին : Պատրանք էին աւերակ փողոցը ու պատանին : Նայեցաւ շուրջը, ամէն բան նոյնն էր : Ոտքի ելաւ, վերջնական ահարկ մը նետեց սեղանին վրայ շարուած նկարներուն եւ, զուրա ելլելոյ՝ ծանր քայլերոյ վերջնականապէս հեռացաւ :

Դուրսը՝ մթութիւնը հեռզհեռէ կը բացուէր : Քաղեց մինչեւ մօտակայ կայանը, լայնօրէն շնչեց եւ վերջին անգամ փողոցը դիտելէ ետք ուղղուեցաւ զէպի ամառի անտառը, ու ծառի մը շուքին սպասեց մահուան :

ՆԱԶ ՏԵՐ ՍՍՐԳԻՍԵԱՆ

Ա Յ Ց Ե Լ ՈՒ Թ Ի Ի Ն . . .

Այս գիշեր երկար, երկար խնդացի,
 «Ձեմ գիտեր որս՞ւ, չեմ գիտեր ինչո՞ւ» . . .

Տնակիս մէջ, ուր ծաղկաման մը եին
 մը Լանի մը շիւղ տերեւներ կային,
 Տարիներ յետոյ կանչեցին ինձի . . .

Եկայ

Եւ գգոյշ փեղկերը բացի .
 Հայելին հան էր,
 Ուրկէ հայեացքիս մէջ սուգուած հիմա,
 Կարծես ինձմէ ներս գի՛ւ կը փնտռէիր,
 Վերագտնելու անցեալդ շուայլ,
 Չոր բաշխեցիր դուն, հե՛քիաք առ հե՛քիաք,
 Անօրի մարդոց սոված աչքերուն . . .

Դուրսը մոլեգնած հով մը կը շաչէր,
 «Ձեմ գիտեր ինչո՞ւ, չեմ գիտեր որս՞ւ» . . .


Ո Ր Ո Ն ՈՒ Մ . . .

Էկուս՝ օրերուդ շրթներուն մէջ փակ՝
 Ես լուսնի լոյսով մուրս ունկնդրեցի . . .

Դուրսը՝ սմայի փողոցներուն մէջ,
 Ուռնահեռներուդ աստուղիկն անվերջ
 Կարօտի հագար շրթունք կը բանար . . .

Ու գիշերներուդ շղարշով պատուած՝
 Այրեր ծանրախոհ կը գրուցէին,
 Թէ սեւ աչքերուդ մէջ հագար աչքեր
 Կը վերհիւսէին անցեալս անշուք . . .

Մինչ յուշերուդ մէջ ես շշուկ ու բառ՝
 Կորոնէի յար համը խռովիչ
 Պենկալեան կարմիր, այրող շրթներուդ . . .



ԱՆՍՈՒՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄՆԵՐ...

Ըսած ենք քանի՜ անգամ եւ այժմ գիտէ պիտի կրկինենք դեռ քանի՜ անգամ, որ Հայաստանի սահմաններէն դուրս նախօրէի եւ յա՛տկապէս ափուսքեան հարցեր շօշափող հայրենի ամէն մասնորակուն կը պարզէ յանկարծ իր մասին կողմուած սպաւորութիւններէն բոլորովին տարբեր նկարագիր մը: Ներքը դժուարահաճութեան փաստեր սուած մէկը մէկէ՛ն կը դառնայ սանձաղերձ դիւրահաճ, սոկաւափօսը՝ շատարան, չափի զգացում ունեցողը՝ չափազանց աստատձեռն, խիտ թիւններու հետամուտը՝ հաճոյակաւար, խտտապահանջը՝ հլուրամեծար...

Եւ կամ ճիշդ հակառակը:

Տեղ մը լրջութեան փաստեր սուած անձը այս կողմ դարձած ատեն խոխոյն անլրջութիւններ դուրս կու տայ, խոհականութեամբ համբաւուած դէմքը կը ճապաղի յանկարծ ու պարկեշտ կարծուածը անպարկեշտ ելոյթով մը մէկէն կ'արատաւորէ իր անունը:

Միևուրի կողմը դարձադներուն մօտ նկատուած այս յանկարծական դիմափոխութեան հետեւանքով է անշուշտ, որ սահմանէն դուրս դառնողներու հասցէներուն հայրենի մամուլին մէջ շտալլուած է՛ւ զայքը, է՛ւ անսանձ բանտարկութիւնները ոչ մէկ կշիռ կը ներկայացնեն հայ մարդուն համար:

Չարմանալի երևույթ մըն է ասիկա, որ դարձանուելու փոխարէն՝ նոյն խօթութեամբ կրկնուեցաւ անցնող երեք-չորս տասնամեակներուն, այս կողմը նախօր բոլոր դրիչ շարժողներուն մօտ, մեծահասակներէն մինչև նորահասները, Ստեփան Թախչեանէն մինչև Ստեփան Կուրաթիկեան:

Ստեփան Կուրաթիկեան:

Վերը ուրուազձուած տխարներուն ամէնէն հանդամանաւոր ներկայացուցիչը:

Միևուրի դրականութեան, դէմքերուն ու հարցերուն անդրադարձած ատեն՝ մարդ կը դդուչանայ էջ մը կարգալ իրմէ, անխուսափելի դասականութեամբ հոն թոյլ արուած կամակոր, կողմնակալ, կո՛յր ելոյթներէն մէկուն կամ միւսին առիթով տհաճելի ստիպողութեան մը տակ վերստին չմըտնելու համար:

Յաճախ դիմացած ենք իր ելոյթներով զբաղելու փորձութեան: Այս անգամ չկրցանք, որովհետեւ այս անգամ հարցը անլրջութիւններ դնահասակու եւ անլրջօրէն աջ ու ձախ սրբներ արձակելու հերթականութեան չի

վերաբերի՞ր, կը վերաբերի սրբաթիւններու հանդէպ ցուցաբերուած անսուրբ վերաբերումի մը:

Այս տողերուն առիթ աուսըր յաշարական իր մէկ յօդուածն է, «Բուժքիշի նգնաւորի մօտ», ըստ տեսած՝ «Սովետական գրականութիւն» ամսադրի բնթացիկ տարուան Փետրուարի համարին մէջ:

Պուքըէշի ճղեւաւորը Յ. Ճ. Սիրունին է, սրուն հեռ ու յարկին տակ 1971ին տեղի ունեցած զրոյցով լեցուած է մեծ մասը յօդուածին, սարսափելի յօդուած մը, իր բովանդակած աղաւաղումներուն առատութեամբ եւ անգիտական բնոյթով թերեւս աննախընթաց մեր մամուլի պատմութեան մէջ:

Կուբաիկեան կարճ յոտաջարանով մը կը սկսի իր գրութիւնը եւ կ'ընդգծէ.

«Յ. Ճ. Սիրունու պատմածները գրի եմ աւել 1971ի նոյեմբեր-դեկտեմբերի մ արեւմտահայերէն եւ թողնում եմ անփոփոխ: Նա փախեանուել է 1972ին»:

Հսկառակ անոր, որ հայրենի մամուլին մէջ արեւմտահայերէնով գրուած յօդուածները կամ արատասանուած խօսքերը բնականաբար անսխալ մնալու բախտ չեն ունեցած, ալլ մասին ասանց պոչն կասկած ունենալու սկսանք դարձնել էջերը: Կուբաիկեանի գրութեան մէջ Սիրունիի առաջին նախապատմութիւնը շատ առողջ չթուեցաւ մեզի, իսկ երկրորդին բնոյթը բացարձակօրէն տարրեր էր սրղէն, երկակենցա՛ղ, չորս անգամ միջամտուած արեւելահայերէնի խոնարհումներով.— «Ես փախուաւ տալով ու քաճնուելով փրկուեցի մեծ ապանդէն... «Մեծ ողբերգութեանէն յետոյ, չգիտեմ ինչ գորութեանք, կրկնապատկուեցին, քառապատկուեցին հոգեկան ուժերս... Ի հարկէ, իմ վերածնուած հայրենի հողը...»:

Երեք անգամ չորս տողերու մէջ արեւմտահայերէնին ընդխառնուած չորս խորթութիւններ.— «փրկուեցի», «կրկնապատկուեցին», «քառապատկուեցին», «վերածնուած»:

Ուրիշ օրինակ մը՝ Սիրունիի արեւմտահայերէնը «անփոփոխ» պահած նոյն գրութեանէն.

«Մե՛նք ծուարեցինք արեւարանի մէկ անկիւնը: Վարուժանը ծոցագրպանէն հանեց բուրդ ու մատիս, գլուխը հակեց սեղանին, բոլորովին վերացաւ շրջապատէն եւ կէս ժամ յետոյ ծնուեց «Նաւասարդ»ի հաւատոյ հանգանակը՝ «Նաւասարդեան»ը, որով բացեցինք տարեգիրքը»:

«Մուարեցինք», «ծնուեց», «բացեցինք»:

Կրնայ պատահած բլլալ, որ զրոյցի պահերուն արեւելահայերէնի յատուկ ձևեր խոսնած ըլլայ Սիրունի իր նախապատմութիւններուն, բայց բնաւ տրամաբանական չի թուիր այլ նոյն «պատուասաներով» զարգարել իրեն վերադրուած լեզուին հարապատմութիւնը: Կուբաիկեանի գրչին տակ «անփոփոխ» պահուած Սիրունիի արեւմտահայերէնին մէջ կան քառասունէ աւելի նախապատմութիւններ, որոնք կը պոնուին «երկու աշխարհի սահմանազժում» եւ կը պատկանին լեզուական երբորդ սեռին...:

«Սերնդի մը-որին-բացեց-զրեց-յաջողուեց-ծնուեց-լուցեց», Եւային, Եւային:

Այս կտարկեցութեամբ հարկ չկայ երկար նախապատմութիւններու մէջ-բերումով ցուցաբրել կատարուած բոլոր մեղանշումները:

Ճշգրեց միայն, որ Սիրունին մեղք չունի հոս: Տուեալ յօդուածին մէջ կիրարկուած խառնակութեան հեղինակը յայտնապէս Ստեփան Կուբաիկեանն է, ամէնէն առաջ իր անփոփոխութեամբ, որ աւելի կը հաստատուի յա-

ԶՈՐ — ԶՈՐ — ԶՈՐ — ԶՈՐ...

Երբեմն մտալ կը հանդիպի այնպիսի բաներու, որոնց իրականութեան կրթիք պիտի չուզէր հաւատալ:

Տիրութիւն մը պահաս ունենարու համար պիտի չուզէինք, օրինակ, հաւատալ նուիրական անուճներ յիշատակալ եւ նուիրական բաներու մասին խօսող հետեւեալ նախադասութիւններուն վերաբրական գոյութեան, ինչպէս նաեւ՝ քառասունէն վեր տարիք հաշուող հայրենական հանդէսի մը մէջ կրեցած ըլլալու անոնց գորգարական անգօրութեան:

«Հարագատ ժողովուրդը, — շարունակում է Սիրունին, — զոր առաջին բարձունքները իլից աշխարհի շիրքած աչքերուն առջեւ, կացի պատին սեղ հայրենիք մը կերտելով...»:

Երկրորդ՝

«Ան մէկն էր եղեր հայ գրականութեան այն կարկառուն դէմքերէն, զոր մեծ ազդեցութիւն գործեց 20րդ դարասկիզբի արեւմտահայ գրականութեան վրայ:

Երրորդ՝

«Ինչքեր պատերազմի դաշտէն» ուղեւորական նոթերը, զոր գրի առնելու եւ պատերազմի քոնուքոնի մէջ, Զօհրասի կարասի երգը եղան»:

Չորրորդ՝

«Այս գրողի նիւթէն գուրս եւ ահաւոր այն տարիները, զոր պատմութիւնն արձանագրեց հայաջինջ տարիներ անունով»:

Եթէ այս չորս գործերէն միայն մէկը գրուի ցցած ըլլար, բնական է, ընթացիկ վրէջ մը պիտի համարէինք եղածը ու անցնէինք, բայց երբ նոյն յօդուածին մէջ նոյն սխալը չորս անգամ կը կրկնուի, անկարելի է սանձել հակադրեցութիւնը:

Անհետեւ հարկաւ, որ «Սովետական գրականութիւն» ամսագրի գլխաւոր խմբագիրը որեւէ աղերս չէ ունեցած փորձամ գրականութիւն մը կերտած արեւմտահայերէնին հետ եւ, հետեւաբար, չի գիտեր անոր քերականութիւնը, ուղղական ու հայցական հոլովներուն տարբերութիւնները, կամ՝ յարաբերական դերանունին ու յարաբերեալ անունին փոխյարաբերութեան օրէնքը: Ո՛չ, գիտար է նման չգիտութիւն մը վերադրել իրեն: Մնաց որ, այդ հանդամանքը ի՛նչն է, որ կը ծանրացնէ դործուած մեղքը, բացատրելի՝ ընդհանուր անբարեխղճութեամբ:

Թէ Ստեփան Կուրտիկեան որքան մօտէն հետեւած է սփիւռքահայ դրահանութեան, որով նաեւ արեւմտահայերէնին՝ կը պարզուի Հայաստանի դրահան պատասխանատուներուն գէժ կարգ մը գանդաաններ բովանդակող Գառնիկ Ազգարեանի մէկ յօդուածին առիթով իր ստորագրած գրութեան ստորագրութեանէն եւս:

«Այս տարի լոյս է տեսնելու սփիւռքահայ մօտ 80 գրողների ստեղծագործութիւնների ծաղիկաբալը: Մի՞թէ այս բոլորը արտասահմանի հայ գրողին չեն համագում, որ լաւ գրքերի համար (ոչ միայն գեղարուեստական), լայնօրէն բաց են հայրենի հրատարակչութիւնների դռները եւ սփիւռքահայ գրողը իրեն կարող է գգալ (եւ դա շատ կարեւոր է) միաժամանակ հայրենի գրող՝ հրատարակչական հնարաւարութիւններից օգտուելու տեսակէտից»:

Պատասխանի բնայթ ունեցող Կուրտիկեանի այդ յօդուածը լոյս տեսաւ «Սովետական գրականութիւն» ամսագրի 1966 տարեշրջանի Յուլիսի հա-

ճարին մէջ, բայց ինչպէս հաստատուեցաւ հետագային, «Ափխաֆահայ մօտ 80 գրողների ստեղծագործութիւնների ծաղկափայլը», որ կոչուած էր վկայելու Հայաստանի դուրդուրտ վերաբերումին մասին, լոյս չտեսաւ:

Այդ մասին եղան նաև գանդաւաներ, նախնինքն Ասեփան Կուրափեկանի կազմէ, երկու տարբեր ստիճաներով, իրարմէ հինգ տարիներու տարբերութեամբ, աստճինք՝ 80 գրողներու ժողովածուն հրատարակելու բժրերանոց «Իսաստէն» րնդամէնք մէկ տարի ետք, «Առվեսական գրականութիւն» (1967, թիւ 4) ամսագրին մէջ արձանագրուած, այսպէս՝

«Արանից մօտ ինք տարի առաջ մեր Պետերատը կանգէս բերեց մի լաւ նախաձեռնութիւն՝ հրատարակել ափխաֆահայ գրողների մեծահասար մի սնքոյթոյն: Դա ուրախալի նախաձեռնութիւն էր՝ հայրենի բերեքցոյին, ուսուցիչներին ու աշակերտութեանը ծանօթացնելու համար ափխաֆահայ ուր տանեակ գրողների, սրանց գրքերի առանձին հրատարակութեան դէպքում անհրամեշտ կը լինէր սպասել առնուազն երկու տասնեակ տարի: Տրքնաջան աշխատանքով ժողովածուէ կազմուեց, խմբագրուեց, ահույն ինք տարի է տես չի ծնում, իսկ նորմալ ծնունդը, ինչպէս գիտէք, ինք ամիս է: Վերջերս հարցազրոյցի ժամանակ, րնկեր Համագրտակտեր յայտարարել է, քէ սփխաֆահայ գրողների անբոլոգիան արդէն յանձնուած է տպարան եւ շատ շուտով լոյս կը տեսնի: Այդ յայտարարութիւնը Ամերիկայից միւնչեւ Թրանսիա տպագրուեց սփխաֆահայ մամուլում: Սակայն իրականութիւնն այն է, որ գծբախտ անբոլոգիան դեռ շատ ետու է տպարան մուտք գործելուց եւ մարդիկ կան, որ այժմ գրադուած են սողանցքներ ու արդարացումներ որոնել՝ լոյս բնծայումն արգելակելու համար:

«Այս կարակցութեամբ մի լրացում: Վերջերս ես նամակ ստացայ Մուկուայից՝ պրոֆ. Արշարունուց, ուրախալի լուր էր յայտնում. սփխաֆահայ գրողների անբոլոգիան «Պրոլիւս» հրատարակչութիւնն այդէն ուստերէն քարգմանել եւ ուղարկուել է տպարան ու ժողովածուն լոյս կը տեսնի ուսաջիկայում(*): Մարդ սիրմալ մտածում է, քէ մեր Պետերատի լոյս բնծայելիք հայերէն անբոլոգիան էլ լաւ չէ՞ր լինի Մոսկուա ուղարկել՝ նորմալ ծրուակի համար»:

Վերի մէջբերումը, հակասակ իր րնդարձակութեան, շատ չի պարզեր տննաջան աշխատանքով կազմուած ժողովածուին Կուրափեկանի բերած տրքնանքին բամինք, հետեւարար, արտագրեւք նաև հինգ տարի ետք (1971, թիւ 8) խմբագրուած երկրորդ գանդաւար:

«Մեզ ներելի՞ է, որ անցնող 12 տարուայ բնքացում գրողների միութիւնը չկարողացաւ լոյս աշխարհի կանել սփխաֆահայ գրականութեան անբոլոգիան, որ անհրամեշտութիւն է ե՛ւ Ափխաֆին, ե՛ւ հայրենի բնքերցողներին, մանաւանդ մեր հայրենի հարիւր հագարաւոր աշակերտներին: Ոչ ոք միւնչեւ վերջը չհետաքրքրուեց, քէ ո՞վ արգելակեց ժողովածուի լոյս բնծայումը եւ ինչու: Չէ՞ որ ժողովածուն արդէն տպարան էր ուղարկուել, շարել ու ես, որպէս կազմող եւ խմբագիր, կատարել էի նայնիակ մամուլների վերջին արագրութիւնները: Որպէս տխուր յաշ հիմա ինձ մօտ պահում եմ 40 մամուլանոց անբոլոգիայի բովանդակութեան տպագրուած ցանկը»:

Տպարան յանձնուած, շարուած, տնդամ վերջին արագրութիւնները կատարուած ժողովածուին լոյս բնծայումը արգելող հանդամանքները երբ նախնիկ խմբագիրին ծանօթ չեն, րնու հարկ չկայ ենթադրութիւններու ուծ

(*) Արդէն լոյս է տեսել:

տալ, եւ արդէն մերջին մէջբերումը նորասկզբուած հասարին շրայման թնտութիւնը կատարելու չի միտիր, սրտի՛նեաւ նման միտում մը սննեհալ՝ պիտի նշանակէր յարջի տանկ ձեռնարկ մը, սրուն պարզում թուական նշանը (80 գրոգնէ՛ր) ինչնին կը հաստատակ անոր անյրջութիւնը: Մանօթ ըլլալով Կարաթիկանի անշակին, հասկացողութեան ու թնտարական մղումներուն, դժուար չէ սրտակերպոյնէ, թէ՛ գրականութեան ո՛ր ստուերններուն ու կիսաստուերններուն հաղագրութիւններով խնայում պարմ պէտք էր ըլլար անիկա: Նոյն պատճառով էր, որ տիրութեամբ իմացած էինք միւս յարք, թէ «նորմայ ճնանդոյ» Խոսկուայի մէջ յայտ տեսած է նոյն հասարին սրտերէն թարգմանութիւնը, «Միխայիլայ մուս 80 գրոգների անպմուգրծութիւնների ծագիւմադը»: Այո՛, տիրութեամբ: Եւ ստօթո՛յ: Արտի՛նեաւ Կիւրաք ո՛չ հայրենիքին եւ ոչ այլ, մանաւանդ, օտարներուն ներկայացնելիք 80 գրոգ ունի: Միտալ-Գույտման-Մեմ-Մանուշեան եւ գրականորէն տանց հասակակից մասանդարիները պարզուպէս թիւ են մեր պարտութեան մէջ եւ ոչ թէ սրտի եւ վիրաւորած կ'ըլլանք Կիւրաք, երբ նմաններուն տեղին ու անրոյս «ծագիկներէն» ծագկարոյ կը կազմենը: Բայց յոխնք, որ մեր խաւքը այդ հարցին թնտարեման չի միտիր, այլ կը ձգտի տեղի տեսանելի պարձնէլ գործին հետ Կարաթիկանի անեցած սերտ պղերսը, բայց կ'ուզենք՝ անոր մօտիկութիւնը սրտմտահայ գրականութեան եւ սրտմտահայերէնին եւ, հակադարար, թայլ տուած պիտալի անտութութիւնները՝

—Բայց—գրեց—յաջողուց—ճնանց, եւայն, եւ գոր—գոր—գոր... գո՛ր:

«ՆՈՐ ԱՒԱՐՏԱԾ»...

Խնդրոյ առարկայ յագումին Կարուժանի վերաբերող մասին մէջ կը կարդանք.

«Անգամ մը Սեւակի տանը, վարուժան կարդաց իր նոր աւարտած «Կարմիր հողը» քանաստեղծութիւնը: Հոգեկան այնպիսի խռովով կարդաց, որ Սեւակի գերմանուի կիկը, որ շատ քիչ հայերէն գիտէր, սաստիկ յուզւեց եւ արաստուքը կախուց քարքիչներէն»:

Մերունի նահատակ քանաստեղծին հետ ունեցած իր մտերմութիւնը պատճառ է բուական ընդարձակ ծաւալի մը վրայ, «Հայրենիք» ամսագրին (1925) մէջ, որ ոչ մէկ տկնարկութիւն կայ վերի յատկանշական դրուագին մասին: Երեւի յիշողութենէն վրիպած էր այն օրերուն ու վերջիչեց զայն Օշականի «Համուարտկեր»ի վեցերորդ հասարին (էջ 187) ընթերցումէն ետք, ուր յուշը կենդանացած է հետեւեալ շնորհութեամբ.

«1915ին զինք տեսայ, վերջին անգամ, Ռ. Սեւակի տունը, Բերա: Քաղաքը անհանաչելի էր դարձած: Ու մէկէ աւելի գրողներու մասնակցութեամբ, սեղանի մը զուիսը անիկա քսմակ մը զինի պարպեց մեր գրականութեան: Ու կարդաց իր «Կարմիր հողը»: Չեմ կրեար մտնալ կրակը, որ ձայնն ու դէմքը առած էր իր մէջ. երբ բերթուածը կը յօրինուէր, մեր ամէնուն առջեւ: Ու բուրսն ալ զգացիմէ, բէ հին օրերու ներշնչեալները (inspiré), տեսանողները տարբեր տեսակի արարածներ ըլլալու չէին. քան ա՛ն, որ տես իր գրածը կ'ապրէր մեր առջեւ այդքան անդիմադրելի խռովով մը: Սեւակի կիկն անգամ, գերմանուի մը, որ տունի հայերէն մը հազիւ քարած էր իր ամուսնին սիրոյն, առնուեցաւ բուսերուն այդ կրակէ շայիլի՛ն մէջ ու լացու, վըս-

տան եմ, առանց հասկնալու, քէ այդ բառերուն ընդմէջէն մեմեմ՝ հայերս, ի՛նչ տեսար, ի՛նչ քաղցր, ի՛նչ անհուն բաներ կը ծծէինք: Իր առածը գոյն էր միայն բառերուն»:

Հետաքրքրական է դիմնալ հարկու., որ խոսովիչ այդ պահը փրկած Օշականի արձանագրութեան թերազրանքն՝ Սիրունի վերակազմեց յուշը, թէ առանց անոր օժանդակութեան, բայց այդ չէ կարելորր, յիշողութեան միւս վրէջն է դարձանային: Արդարեւ, քիչ մը սարօրինակ է Սիրունիի բերնէն լսել եւ «Սովետական գրականութիւն» ամսագրի խմբագրին զրչին տակ կարգալ այն անփոյթ խօսքը, բաւ որով՝ 15տկան թուականներուն «Վարուժան կարգաց իր նոր աւարտած «Կարմիր հոգը» բանաստեղծութիւնը»:

Նո՛ր աւարտած . . .

Հայ դրականութեան ա՛նգամ հետունքէն հետեւած ամէն ոք դիտէ, որ 1915ին «նոր աւարտած» դործ չէր «Կարմիր հոգը», ոչ ալ Վարուժանի հետ Սիրունիի հաստատած բարեկամութեան գուղազիպոզ որեւէ տարեշրջանի, ո՛չ 1914ին, ո՛չ 1913ին, ոչ ալ 1912ին, այլ ամէնէն ուշը՝ 1909ին լոյս տեսած «Յեղիմ սիրար» հատորին հետ, նոյնիակ անկէ առաջ, Եւրոպայի երկինքներուն տակ, «հայրենիքէն բերուած բուռ մը հոյին» ստեղծած ցնորական մթնոլորտին մէջ:

Տարիքի բերումով մարդոց սպրումները կը դորանան ու սրամտանութիւնը կ'ազօտի: Սիրունիի սրբազային՝ այս հանգամանքները նկատի չեն առնուած եւ Կուրտիկեան, անոր սպրումներուն ջերմութենէն տարուած՝ բնաւ փոյթ չէ ըրած կասկածելու եւ ստոյլ տեղեկութիւններ հաղորդելու ընթերցողին:

Չմոռնանք, որ շարքային բանաստեղծի մը դիմաց չենք դանուիր, խրնդիրը կը վերաբերի Վարուժանի պէս մեծ բանաստեղծի մը մէկ բանաստեղծութեան, անոր մէկ հրաշակերտին, որուն յղացման, արարման ու հրատարակութեան բոլոր մանրամասնութիւնները կենսական նշանակալ թիւն ունին եւ սպասելի էր, է՛, որ անուսպն դրոյններն ու խմբագիրները անփոյթ չդանուին նման երեւոյթներու նկատմամբ:

«ՇԱՆՔ» ԳՐԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՔԻ ՄԷՋ

Սիրունիի պատմածները դրի առած եւ առանց ստուգման իր խմբագրած «Սովետական գրականութիւն» ամսագրին մէջ փոխադրած Կուրտիկեանի գրութեան մէջ կայ նաեւ Կոստան Չարեանին վերաբերող տեղեկութիւն մը.

«Մեծ ուշադրութեան արժանացան «Քաղին» գրական շաբաթաթերթին մէջ անոր գրած «Քաղիլիբը՝ Ս. Մարկոս եկեղեցին» արուեստագիտական յոդւածը եւ «Շանթ» գրական տարեգրքի մէջ տպագրուած «Տօնը» ֆերքուածը»:

«Մեծ ուշադրութեան արժանացած» Կ. Չարեանի յիշեալ գործերէն ընթերցողը դուր պիտի փնտռէ երկրորդը «Շանթ» տարեգրքի մէջ», որովհետեւ «Շանթ» անունով տարեգրքը գոյութիւն չէ ունեցած սահմանադրութեան տարիներուն, ու եթէ մարդիկ անձանօթ են Պարսամեան եզրայրներու «Շանթ» կիսամտեայ հանգէսին, ապա ուրեմն բնաւ հնարաւորութիւն պիտի չունենան կարդալու Կ. Չարեանի համբաւը սկսած «Տօնը»: Կարդալու եւ փոխանցելու ուրիշի մը.

«Տօ՛նն է՝ օղին մէջ սոսի կայ ցանուա՛ծ, եւ տեսէ՛ք, դաշտին մէջէն քա-
փօրը կը յառաջանայ եւ կողովակիրները ծաղիկներ կը նետեն ու կ'ըսեն.—

Մենք կոյսերն ենք Ուրանորդիէն հիւսուած ծաղկեպսակներով,
Այգեկութի ամիսներուն անյա՛գ խենթութեանց ազդիկներն ենք,
Եօ՛քը լարեր, հնչեցէ՛ք.

Ու տես՛ ախարեալ ցնարքներու կողովները,
Ու տես՛ մեր հոգիներուն ծաղիկներուն պսակները,
Եօ՛քը լարեր, հնչեցէ՛ք»:

*Եթէ Ստեփան Կուրաբիկեան հետաքրքրուած ըլլար իբրեւ հետաքրքրա-
կան տեղեկութիւն ընթերցողին հարցըրած իր նիւթով, պարզ է, որ կը փընա-
նէր ու կը կարգար «Տօնը» եւ այն ատեն երբեք չէր պատահեր «Շանք» կի-
սածսեան «Շանք» տարեգիրքի վերածող թիւրիմացութիւնը: Սակայն ատի-
կա պիտի ըլլար մարդոց հանդէպ պատասխանատուութեան զգացում ու իր
զրիչը յարգելու ունակութիւն ունեցող մարդու զործ, արժանի՛ք մը, որուն
կը սպասուի այլեւս, որ արժէք տայ «Սովետական գրականութիւն» ամսագրի
զլուսար խմբագիրը:*

«1913 Գ Ա Ր Ն Ա Ն Ը»...

*Մերունի կ'ըսէ ու մենք Ստեփան Կուրաբիկեանի զրիչին տակ կը կար-
գանք նաեւ, թէ՛*

«1913ի գարնանը գրական շարժումը Պոլսոյ մէջ մեծապէս աշխտա-
ցաւ գրական երկու օրգաններու ստեղծումով, որոնցմէ մէկը «Մեհեան»
հանդէսն էր, իր գլուխն ունենալով Եւրոպայէն նոր ժամանած Կաստան Զար-
եանը»:

*Ուրեմն՝ «Մեհեան»ը ստեղծուեցաւ 1913ի գարնան, ըստ այս էջին:
Ըստ յաջորդ էջին՝*

*Կ. Զարեան «պաիր արդէն հասած սեպեց իր գրական խօսքն ըսելու,
հիմնադրեց «Մեհեան» ամսագիրը, որ լոյս տեսաւ 1913ի վերջերուն»:*

*Բայց «Մեհեան»ը ո՛չ 1913ի գարնան ստեղծուեցաւ եւ ոչ ալ 1913ի վեր-
ջերուն, այլ՝ մարտին տոտ իր վրայ արձանագրուած թուականին՝ 1 Յուն-
ւար 1914:*

*Կրնայ ըլլալ, որ «Մեհեան»ի յղացման ժամանակը այդ եղանակով ըլլայ եւ
անոր խոհանոցային աշխտասնդները կատարուած ըլլան Մերունիի յիշատա-
կած եղանակներուն, 1913ի գարնան կամ 1913ի վերջերուն, բայց գրականու-
թեան պատմութիւնը նման մանրամասնութիւններ հաշուի չ'առնել, այլ կը
նշէ իրադրութեան թուականը:*

*Բայց իցի՛ւ թէ «Մեհեան»ը միայն կամ երկու ամիս տոտը սկսած ըլ-
լար ըստ տեսնել, այն ատեն հայ գրականութիւնը անկէ հ'ունենալ մեջ կամ
երկու թիւ աւելի, հարստութեան մէկ-մէկ աստիճան, որովհետեւ «Մեհեան»ը
անկիւնադարձային հանդէս էր, իւրաքանչիւր թիւը՝ թի՛ւ, թուական, երե-
ւոյթ, ի վերուստ արուած չափերով արգիւնաբերական գրականութիւն սար-
քող ձեւնարի չէր ու բնաւ չէր նմաներ երեք-չորս հարիւր անգամ հաշուող
գրական միութեանց օրգաններու Երկուսրեակներուն կամ տասնրեկուսրեակ-
ներուն...*



Ն Ա Ի Ա Ս Ա Ր Դ Ե Ա Ն

Հաննա՛րդ Հոյկեան, Նաասարդեան սա տօներուն Արևափառ՝

Ա՛լ վերածնէ փրատակներէն, եւ փառագոյ
Բընարդդ ա՛ռ :

Յանո՛ւն Ուժին, յանո՛ւն Գեղին, սըտիք մեհեանն
Ոստումներում,
Ջանք ճեւէիլ՝ բագնէ բագին համասըփաէ՛
Հուր ու արիւն :

Եւ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակըդ նուռ,
Յետոյ գոհուող քերթողներուն սիրտին վըրայ
Լեցո՛ւր, լեցո՛ւր :

Ձի մեճէ, յամուն Սէրին, Սերմին, քու հին Յեղիդ
Մարմարէն կոյս,
Մե՛նք, Ջրակներդ օգոստափառ, պիտի կերտենք
Նո՛ր Արշալոյս :

ԴԱՆՆԷԼ ՎԱՐՈՒՃԱՆ

25 Օգոստոս 1913

1913ի դարձնան ստեղծուած «գրական երկու օրգաններ»էն մէկը, «Մեհեան»ը՝ աջակէս, իսկ միւսը՝ Վարուժանի եւ Միրունիի խմբադրած «Նաասարդ» աստեղծութիւնն է, որուն մասին ուրիշ բնութիւնը չունինք, եթէ ոչ լուսանկարչական պատճէնով ջնջել 1913ը եւ ուշադրութեան յանձնել արձանագրուող Թուականը :

«... ԳՐԵՑ «ՄՆԱՅՈՐԴԱՅ» ԵՌԱՅԱՏՈՐ ՎԷՊԸ»

Միրունիի հետ Օշականի մասին եղած զրոյցին կարգ մը կէտերուն տնդբարդառնալէ առաջ, սրբադրենք մեծանուն գրողէտին կապած Կուրախիկեանի նախկին Թիւրքմանիսթիւնները, որոնք ըյս տեսան իր խմբադրած ամսաթերթի (1975) Մարտի համարին մէջ :

Կուրախիկեան «Մեծավասակ Օշականը» խորագրած է իր այդ գրութիւնը, ուր ի միջի ալլոց կ'ըսէ .

«Կեանքի վերջին մէկ եւ կէս տասնամեակում Երուսաղէմի մեծախոյզութիւնն կամաւոր բանտարկութեան դատապարտուած (ինչպէս մեր մատենագիրները՝ հնօրեայ վանէրում), Թարգմանչաց վարժարանի ուսուցիչ Յակոբ Օշականը սիւ եւ գիշեր տէնեց, ստեղծագործեց, գրեց պատմութեան, հեքիաթներ, վիպակներ, վէպեր, բատերգութիւններ, գրականագիտական յօդածներ, մատենագիտական-բանասիրական ուսումնասիրութիւններ (Նդիշէ, Փարպեցի, Շնորհալի, Կալլի), ստեղծեց «Հայ գրականութիւն» դասագիրքը, գրեց «Մոպսուրդայ» եռախտոր վէպը, մանաւանդ արեւմտահայ գրականութեան բազմախտոր «Համապատկեր»ը, որ, մինչեւ իսկ ոչ ազգային

չափանիշով, գրականագիտութեան ու գրականութեան պատմութեան գլուխ-գործոց կարելի է համարել»:

Օշականի կեանքին քիչ-չաա հետեւած անձերը անմիջապէս նկատեցին հարկաւ, որ մէջըրեւուած հատուածին մէջ ազմանադրուած են ճշացոյ երկու թիւրիմացու թիւններ: Նոյն՝ Օշական Երուսաղէմի Թարգմանչաց վարժարանին մէջ երբեք ուսուցչութիւն չէ բրած, ուսուցչութիւն բրած է անոր մօտիկը գանուոց ժառանգաւորաց վարժարանի մէջ: Այսօրնը՝ սչինչ:

Սարսափելին միւսն է, «Մնացորդաց»ի գրտաման վայրը Երուսաղէմը համարելու փտտար: Մեր մտմուլին մէջ ահային գրականութիւն մը կայ «Մնացորդաց»ի մտտին եւ հայ գրականութեան հետեւած մարդոց մէջ չկայ թերեւս մէկը, որ չզիանայ, թէ հեղեղային գրողէտին այդ հեղեղային դործը դրուեցաւ Կիպրտտի մէջ, իբրեւ թերթօն լոյս տեսաւ Գահլրէթի «Յուսարեր» օրաթերթի էջերուն եւ հտտորնեւու վերածուեցաւ հան, 1931-1934 թուականներուն, Օշականի Երուսաղէմ հտտտաուելէն տտալ:

Այնքան խիտտ չըլլանք եւ չբսենք, որ տմէն դրիչ շարժոց պէտք է կարգացած ըլլայ «Մնացորդաց»ը, լոյց կը կարձենք, թէ գրական հայ ամտագիրի մը խմբագիրը պարտտար է գիտնալ հայ գրականութեան գլուխ-գործոցներուն դոնէ՛ տտարկայական կենտագրականը, — գրտտման վայրը, տպագրութեան թուականը, ծաւար: Ստեփան Կուրտիկեան, ցաւօք, բժտտինդիբ այդ ոգիտով չէ մտտեցած գործին...

«ՏԱՐԱԲԱԽՏԱԲԱՐ»...

«Մնացորդաց»ի մտտին անտեղեակտութեամբ խոցելի Ստեփան Կուրտիկեանի հագորգումները նուտոց խոցելի չեն նտեւ իրենց շարունակութեան մէջ, նոյն էջին վրայ, երբ յտտակաղէս նիթ կը գտտնայ Օշականի նշտտաւոր միւս շարքը, որ իբրեւ խորողիր կը կրէ «Համապատկեր» անտտնը:

«Եւ իսկաղէս, գրականագէտի մտտից յիտոյ լոյս տեսան կիկզ հտտորներ ու, տարարախտտարար, 1968ից ընկիտտուեց կետագայ հտտորների լոյս ընծայումբ»:

Երկու սխալներ տպրգած են նտեւ այս տեղեկագրութեան մէջ: Ատաղին՝ «Համապատկեր»ի բոյր հտտորները Օշականի մահէն ետք լոյս չտեսան, Օշական դոնէ մէկուսն տպագրական միթթարութիւնը տպրեցաւ ողջուցը, 1945ին, իսկ տպագրուածներուն թիւը հինգին վրայ կանոց չտտու, հտտաւ մինչեւ վեց, վեցերորդը՝ 1968ին, «Համագղղային»ի վահէ Աէթեան տպարանէն:

Այս վերջին ծանօթութեան անծանօթ չէ Կուրտիկեան եւ տրղէն այդ է տպրեցուցիչը: Այոպէս, «Համապատկեր»ի հրտտարակուած հտտորներուն թիւը կիկզին վրայ տտեցնելէ ետք, երկու էջ անդին՝ կը դրէ.

«Համապատկեր»ի ճրդ հտտորում՝ անդրադատնայով ոտու դեմոկրատական գրականութեան մարդախիրական ագրեցութեանը, Օշականը գրել է. «Բայց այդ ագրեցութիւնը անուղղակի կերպով մը անդրադարձ մը ունեցաւ արեւտտահայ գրականութեան վրայ»: Եւ այն:

Քիչ տտալ ըսինք, որ Ստեփան Կուրտիկեան խմբագրած է Սիրունիի խօսքերը՝ տտանց հաչուի տտներու ՏՏտտեայ իր գրուցակիցին լիչոգութեան հաւանական գաւտճանութիւնը, իսկ այն էջին վրայ «Համապատկեր»էն միայն

ևինց հասար հանուպ եւ այս էջին վրայ վեցերորդէն ընթերցումներ կատարող իր պարագան գնահատելու համար ուրիշ բնեյիք չի մնար մեզի, եթէ ոչ կարծել, որ «Սովետական գրականութիւն» ամսագրի գլխաւոր խմբագիրը այլևս ի՞նք կը գտնուի խմբագիր մը ունենալու ստիպարական փրճակի մը մէջ...

«ԳՐԵԼ Է ՆԱ... ԻՐԵՆ ԱՅՅԵԼՈՂՆԵՐԻՑ ՄԷԿԻՆ»...

«Համապատկեր»ի եւ Օշականի «Կեանքիւն պէս» խորագրեալ վերջին վէպին ասիթոյ ասորեր մտայնութեան մը յայտարար նշանը տեսանելի եւ խահահանութեան մը պակասը աւելի շօշափելի դարձնելու համար, աւելորդ պիտի չբոլոր կարգալ Կուրտիկեանի սա պարբերութիւնները.

«Համապատկեր»ի անտիպ մնալը մտանգել է հեղինակին: Սակայն նա եւստատգած է եղել, որ, ի վերջոյ, կը տպագրուեն մտքի եւ հագու մեծ լաբաւով ու հետուքեամբ ստեղծուած գրականութեան պատմութեան հասարակներ:

«Կը հաւատամ, -- գրել է նա, -- քէ այս ժողովուրդին մէջ պիտի գրուերին մարդիկ, որոնք պիտի փրկեն «Համապատկեր»ը իր գերութեան, այլընկրտ իր հակատագրէն, անոր տալով ապրելու իրաւունքը»:

Ու յաջորդ էջին վրայ՝

«1947ին երուսաղէմ իրեն այցելողներինց մէկին Օշականը յայտնել է նաեւ, որ արդէն սկսել է գրել մի նոր վիպաշար՝ «Գեանքի պէս» խորագրով, որ պիտի բաղկանար 10-15 հատորից:

«-- Այս նոր վէպը, -- ասել է նա, -- փորձ մըն է սեւեռելու մեր ժողովուրդին կեանքը 1880էն մինչեւ մեր օրերը, այնպէս, ինչպէս տեսած եւ ապրած եմ ես»:

«Գրել է նա»: Ո՞ր:

«Յայտնել է իրեն այցելողներինց մէկին»: Որո՞ւ:

Պայման չէ հարկաւ, որ բոլորած իւրտքանչիւր խօսքի տեղը մտանաւ նշուի կամ յիշուին բոլոր մէջբերումներուն աղբիւրները: Այդպէս կը վարւին սակայն մարդիկ, երբ առեալ հեղինակութեան դրականութիւնը լայն տարածում գտած է եւ ընթերցող հասարակութեան մտաչելի եւ հաւանական աղբիւրները:

Հայրենի սահմաններէն ներս Օշականի պարագան նոյնը չէ եւ մեծ դրագէտը սիրելի դարձնելու աստղադրանքով պրուած յօդուածները, ա՛յդ իսկ պատճառով՝ բորոյական պարատարութեան տակ կը դոնուին վաւերագրելու հարցրուած բոլոր ծանօթութիւնները: Եւ յետոյ՝ մարդիկ երբ վկայութեան մը արժէք կու տան, արժարժուած հարցին լքութեան սիրոյն ընդհանրապէս կը նշեն նաեւ անոր աղբիւրը, ինչ որ, ներկայ պարագային, Կուրտիկեան մտայնած է կամ մերժած է ընել:

Մեր կարգին՝ չչարաշահենք ուրիշներուն համբերութիւնը ու անմիջապէս ըսենք, որ աղբիւրը անյայտ ձգուած դրութիւնը ապուած է «Յուսարբեր» ամսագրին մէջ, ու Օշականին այցելութիւն առած մէկը՝ Բ. Թաշեանն է: Այս վերջինին ապագրեալ գրույչէն քաղած է Կուրտիկեան վերը մէջբերուած իր տեղեկութիւնները, սա պարբերութիւններէն.

«Սակայն, եւրոպայ իր խոր դասնութեան, բոլորովին անյոյս չէ Օշական: Կը հաւատայ իրաջփին, որ պիտի փրկէ իր վատտակը».

«— Կը հաւատամ, — կ'ըսէ, — քէ այս ժողովարդին մէջ պիտի գտնուին մարդեր (գրողները չունին նկատի), որոնք պիտի ազատեն «Համապատկեր»ը իր գերութենէն, այրուելու իր մակատագրէն, անոր տալով սպրեւու իրաւունքը»:

Ու յաջորդ էջին վրայ՝

«— «Կեանքին պէս»ը շարունակուրիւնն է «Մնացորդաց»ին: Հերոսը նայն մարդն է, որ կ'անցնի յարարական Atmosphereներէ: Եւր վէպը փորձ մըն է սեւեռելու մեր ժողովարդին կեանքը, 1880էն մինչեւ մեր օրերը, այնպէս՝ ինչպէս տեսած ու ասլիած եմ ես»:

« Ա Փ Ս Ո Ս Ո Ր » . . .

Ուրիշ խնդիր մը: Կուրտիկեան նոյն յօդուածին մէջ կ'ողբայ.

«Ախտաւ, որ վերահաս մահը (1948 թ.) կանխեց «Կայ գրականութեան մեծագոյն բնագրատի» (Պարոյր Սեւակ)՝ Յակոբ Օշականի հայրենիքում ասլիելու, հայրենիքում ստեղծագործելու բուն ցանկութիւնը»:

Այսինքն:

Եթէ վերահաս մահը չզարնէր Օշականը եւ հայրենիքի մէջ ասլիելու եւ ստեղծագործելու բուն ցանկութիւնը նոյն ուժգնութեամբ շարունակէր «նչէլ սրտին՝ հոն հաստատուելու հնարաւորութիւն պիտի տրուէ՞ր իրեն:

Կուրտիկեանի խօսքէն կը հասկցուի, որ այս, հայրենիքը պատրաստ էր անմիջապէս, յաջորդ տարի կամ քանի մը տարի ետք դիրկ բանալ մեծատաղանդ գրագէտին:

Նման տրամադրութիւն մը կա՞ր սակայն Օշականի նկատմամբ:

Փաստերը անտեսելով ու ըստ կամս տող տողի վրայ դնելով՝ Հայաստանի խեղճ ընթերցողը խորելու նախածրագրեալ արշաւը նոր երեւոյթ չէ «կարմիր դէմք» ներս ու Կուրտիկեան այդ տխուր բարքերը դարգացնող շարքային անպատասխանատուներուն վերջին շարքայիններէն չէ, դժբախտարար:

«Վերահաս մահուան» օրերուն, Օշականի դէմ հայրենիքի շղթայազերծած խաչակրութիւնը ունի երկար պատմութիւն մը, որուն բոլոր էջերը դժուար է քրքրել այս սիւնակներուն մէջ: Տանք պատիկ օրինակ մը միայն, ամբողջին մասին պատիկ դադարիտ մը տուող Օշականի զառնայի հակազդեցութիւնը, գրուած 1946 Օդոստոս թուակիր նամակի մը մէջ, տպուած՝ «Նայիրի» շարթաթերթի 17րդ տարուան թիւ 44ի էջերուն:

«Յիսուս հատար գործ: 45 տարի աշխատանք՝ տրվեցնելու: Որպէսզի հայրենիքին դաները փակուին իմ ոսկորներումն անգամ: Անա անդարմանելին»:

Հայրենիքը այսպէս վարուեցաւ իր մեծատաղանդ դուկին հետ, պատճառեց անոր վէրքերուն ամէնէն «անգարմանելին», սակորներուն անգամ դուռ զօցելու որոշում տուաւ եւ սչ թէ եզաւ անոր դիրկ բանալու պատրաստ դուրդուրտ մայր մը, ինչպէս կը կարծէ կամ կը ճզնի իր ընթերցողներուն կարծեկ տալ Ստեփան Կուրտիկեան:

«ԿԵԱՆՔԻ ԵՕՔՆԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿՈՒՄ»...

«Մեծատաղանդ Օշականը» անուն Կուրաիկեանի նոյն յօդուածին մէջ կան եւ ուրիշ խախտւած կէտեր, որոնց մասին թերեւս կարելու է ապա քանի մը բացատրութիւններ, ի' մասնաւորի «Օրն օրերուն» սպառնալից քննարկապէս եւ «Պատասխան» խորացրեալ անտիպ թատերախաղին կապակցութեամբ:

Ի գէտ, գրականութեան պատմութեան համար ու նաեւ գրական երկուցթ մը արտաքին ճիշտմաներու հայթայթած սուեւալներով բացատրելու համար յիշեցնենք, որ հիւանդ, հիւժած, ամէն օր ու ժամ մահուան միջնաշրջանին մէջ ապրող գրագէտին գէտ շղթայադերձուած այդ անհուզի խաչակրութեան ուղղակի հետեւանքով էր, որ Օշական իր «Օրն օրերուն» քննարկապէս վերջին մասին փակցուց հատուած մը՝ ի մասին «Մորհրդային» Հայաստանի ու յօրինեց «Պատասխանը» անուն թատերախաղի մը, Պրամեթէոս ծածկանունով: Առաջինը սպուեցաւ գրքոյով մը, 1947ին, իսկ երկրորդին մեքենադրուած մէկ օրինակը ներդաղթող ուսանողի մը հետ գրկեց Աւետիք Իրահակեանին, ի հարկէ, զայն հայրենի մամուլին մէջ սպառնալու անտեսելու բացմանքով:

«Հայրենիքի թշնամի», «Կուսակցութիւն», «Ներդաղթը հարուածող նենգ» եւ նոյն զինանոցներէն ելած նմանօրինակ այլ գրողարտութիւններով պիտակուած, անիրաւօրէն խոցուած ու արիւնած գրագէտին միամիտ հակադրուածութիւններն էին վերջ յիշուած երկու գործերը, «պատասխաններ»՝ գրպարախշներուն անդուստ կռանդը սանձելու համար, լսելեայն բռնելու համար հայրենիքին ու անոր Արտասահմանի արձազանդներուն, թէ իրենց բանասրկութիւններով պատկերացուած մարդը չէ ինք, այլ ինքն է, Օշականը, հայրենապաշտ, հայրենիքին հաշտոյն յիմնական տքնութեամբ յիտուն հատոր երկնամ յոյնատանջ հուզին:

Հայրենիքի ղեկավարներուն թշնամական վերաբերումով ստեղծուած ու մահուան մերձաւորութեամբ դրեթէ ախտադին համեմատութիւններու հասած այդ մտասեւեհումին ծնունդ այդ գործերն է, որ կը շահագործէ Ստեփան Կուրաիկեան, գրելով՝

«Կեանքի եօթներորդ տասնամեակում հսկայական կենսափարձ կուտակած Օշականը վերջնականապէս յանգեց բովանդակ աշխարհի եւ հայ ժողովրդի սովետական փրկութեան փիլիսոփայութեանը: Գաղափարական ու քաղաքական այդ համոզմունքներն ու արմատական եզրայանգումները մախտացրեց կեանքի վերջին տարիներին գրած Կրկու քատերախաղերում, որոնցից մէկը տակաւին մնալ է մտախոյ եւ այժմ գտնուում է «Սովետական գրականութիւն» ամսագրի խմբագրութեան տրամադրութեան տակ»:

Առանց վերի հանդամանքները հաշուի տանելու, եւ անկաս, ինքնիշխան, աշխարհի տոտաղանքներով յազեցած ու լայր իմաստութիւններուն զարնուած մարդու մը երբ կեանքի միայն «վերջին տասնամեակում» նման «յանդումներ» կը տեսնուին, նոյնին քանի կարելի չէ ենթակաները լուրջ համարել եւ գրողի անոնց հանգած բռնաճիւղերով:

Մենք կը կարծենք, որ Փիլիքոյէն հիւժած ու հուզուած խոցուած Օշականի վերջնաշրջանին «թերում»ին մէջ մասնաւոր դեր մը ունեցան նաեւ Երուսաղէմի վանքին օրուան պատրիարքը եւ Հայաստանը «քեներուն տակ մեծ արծիւին» (Ստալինի) տեսնելով ցնծացող վանական բռնատեղծները: Պատրիարքը մերժեց նոյնիսկ պատրիարքարանի նախաձեռնութեամբ յայտա-

բարուած Օշականի յորելեանը տօնել: «Ո՛չ, ո՛չ, դուք կը քր ես կը կրեմ», — կը հասաչէր ան՝ Օշականը ժառանգաւորաց վա՛նէն դուրս շարժելու: Կոչեր բովանդակող բաց նամակներուն հետ ղոց թուղթերու ով գիտէ խորհրդաւոր ու խորհրդային ի՞նչ ճնշումներու տակ...

Ձեռք կրնար կշիռ չտալ այս բայրըն եւ հաշուի չտանել այդ օրերուն խեցեւծիւրի ենթարկուած Օշականի հոգեբանական պահը, երբ կը փորձենք զնահաակ մա՛նուանդ «Օրն օրերուն» քնարախաղին յետսամտին փակցըւած սոցերբ:

«Արտասահմանի հայ գրականութեան գոյատեւումն ու զարգացման համար» (1967), «Լեւինեան գաղափարները եւ արտասահմանի հայ գրականութիւնը» (1970), «Մեծատաղանդ Օշականը» (1975), «Հոկտեմբերը եւ արտասահմանի հայ գրողները» (1977) խորագիրներով լոյս ընծայուած իր յաջորդական յօդուածներուն մէջ, օրեմն աւելի քան տասնամեակէ մը ի վեր՝ Կուրտիկեան կը չարաչահէ Օշականի յիշեալ գործերէն մա՛նուանդ առաջինը, «Օրն օրերուն» քնարախաղը, ծանրանայով բացառապէս անոր վերջին հատուածին վրայ, իսկ երկրորդը, «Պատասխան», սրբան մենք կը յիշենք, միայն մէկ անգամ նիւթ դարձաւ իրեն եւ որ «սկսում է անախպ եւ այժմ գրուելու է «Մոսկուական գրականութիւն» ամսագրի խմբագրութեան տրամադրութեան տակ»:

«Բագմաքիւ հակաութիւններից յետոյ Օշականը եզրայանգեց լեւինեան գաղափարների փրկարար դերին» լսելէ ետք, ու անոր վերջին շրջանի ստեղծագործութիւնները, որով նաեւ «Պատասխան»ը «լեւինեան գաղափարների ներթափանցում»ներով կնքուած տեսնելէ յետոյ, ընթերցողը գծուար պիտի ըմբռնէ, թէ մարդիկ ինչպէ՛ս ամբողջ երեսուն տարի անախպ կը ձգեն «Պատասխան»ը, որ «այժմ գտնուում է «Մոսկուական գրականութիւն» ամսագրի խմբագրութեան տրամադրութեան տակ»:

Կ'իմանանք, որ «Գրական ժառանգութիւն» անունին տակ Հայաստանի մէջ այս տարի Օշականէն լոյս ընծայուած է 606 էջոց հատոր մը, 30 հարգար տպագրանակով:

Մենք այդ հատորը չենք տեսած, բայց դժուար չէ ենթադրել, որ անոր մէջ տեղ դասած են գիւրըն շահատակութիւններու ստիթ տուող խնդրոյ աւարկայ երկու գործերը, «Օրն օրերուն» քնարախաղը եւ «Պատասխան» թատերախաղը, ինչպէս նաեւ խոնարհ տիպարներու կեանքն ու ազրումները պատկերացնող այն գրութիւնները, որոնք Լեւինին երեւումէն բաւակա՞ն առաջ լոյս տեսած բլլարով հանդերձ, ձեռնտու են լեւինեան մեկնարանութիւններու:

Մական ի՛նչ չսփանիչներով ալ կատարուած ըլլայ անոր բովանդակութիւնը կաղմոց կատրներուն ընտրութիւնը եւ որքան ալ դիմագեղծուած ըլլայ ընթերցողին ներկայացուած Օշականը, հրատարակուած հատորով պարզուած երեւոյթը պէտք է համարել մեծատաղանդ գրագէտին յաղթանակը ընդդէմ հայրենիքին ցուցարեւած յիսնամեայ փոքրագութեան, ընդդէմ հայրենիքին ու անոր արտասահմանեան կարմիր ձայնափողերուն շղթայադերձած անհողի գրոհին, որ, այնուամենայնիւ, պիտի մնայ հայ մամուլին մէջ արձանագրուած անջնջելի ամօթներէն մէկը, դուրսի եւ ներսի բոլոր հաշուախնդիրներուն ու հացկատակներուն ի պատիժ:

«ԼՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ»...

Ստեփան Կուրտիկեանի զրի տոած զրոյցին մէջ, Սիրունի կը յայտնէ,
թէ՝

«Այդ տարիներուն է, որ Օշականը գրեց իր կենսաբարախս, համով-հա-
տով պատմութեանը՝ «Տոգսանը», «Մատմագէլ եւա»ն, «Պաղտան», «Տո-
պիճը», «Հօրքուր-Վարդան», «Թիւրքմէնին աղջիկը», «Աղբարիկը», «Երկին-
քէն ինկոզ կինը», «Համբոյրի մը պատմութիւնը», որոնք ժամանակի գրական
կեանքի մէջ ուշագրաւ երեւոյթներ էին եւ խոմարի մարդկանց հոգեկան աշ-
խարհը վարպետորէն կը բացայայտէին: Պատմութեանը այս շարքը լրա-
ցումներով լոյս տեսաւ 1921ին Պոլիս՝ «Խոնարհները» խորագրով ժողովա-
ծուի մէջ, նոր տաղանդ մը բացայայտելով հայ գրականութեան մէջ»:

Ըսել կ'ուզուի, որ վերոյիշեալ ինը պատմութեանը միայն հորեր
աւելցնելով՝ Օշական պատրաստեց «Խոմարիներ»ու 1921ի հրատարակութիւ-
նը: Բայց իրականութիւնը այդ չէ: Երիտասարդ հեղինակը «Խոմարիներ»ու
պոլսական հրատարակութիւնը կազմեց նշուած ինը պատմութեանը ներս
առնելով չորսը միայն, — «Տոպիճը», «Տոգսանը», «Պաղտան», «Երկինքէն
ինկոզ կինը», որոնց միայն աւելցուց վերոյիշեալներէն աւելի ուշ գրուած ու-
րիշ մը, «Ոստան» հանդէսին (1920) մէջ լոյս ընծայած «Խեմը-Սաղմէն»:
Ընդամէնը հինգ կտոր:


Սիրունի-Կուրտիկեան հաղորդումին թերութիւնը մահացու մեղք չէ
հարկաւ, բայց աւելի լաւ չէ՞ր ըլլար արդեօք, եթէ յարգուէր զրական լրա-
տուութեան նախապայմանը, ճշգրտութիւնը:

Հայոց լեզու: «Մեհեան» ամսագիր: «Նաւասարդ» տարեգիրք: Գ. Վա-
րուժան: Կ. Չարեան: Օշական:

Կանխող էջերուն վրայ միշտ ստոնց հետ եզանք եւ միշտ անհաճոյ
պատճառներով, սխալներու, թիւրիմացութիւններու ու աղաւաղումներու
աննախադէպ խառնարանի մը մէջ, ու խոր տխրութեամբ:

Արդարեւ, դժուար է հաշտուիլ այն իրողութեան հետ, որ մեր օրե-
րուն դեռ կրնան դանուիլ զրիչ շարժող մարդիկ, հայերէն դիրք հրատարա-
կած մարդիկ, հայ թերթի մը խմբագրական պաշտօնին կանչուած մարդիկ,
որ այսպէս վարուին մեծ սուրբին արարչագործած սրբութեան հետ, թափ-
թրիածութեան մը, եւ անոր գղտալից քորմերուն մեհենական ջահերուն ու
նաւասարդեան սիրադործութիւններուն հանդէպ ըլլան այսքան անբարե-
խիղճ:

(ՅԱՋՈՐԴՈՎ՝ Օտեոյն-Սիբուրնի, Փանջուրնի-Կալստիկեան)



Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ

ՀԵՆՐԻ ՄՈՒՐ
ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐԸ

Հայկական քանդակագործութիւնը, իր բնոյթով՝ հին, գիյարտական օրերէն սկսեալ, խաչքարերով շարունակուած եւ մինչեւ մեր օրերու Կիւրճեանի «Սալամէ»-ն ու Քոչարի «Սասունցի»-ն, ունի օրկանական կապ մը Հայաստան աշխարհի քարքարոտ բնութեան հետ:

Էապէս մարդուն, հայ մարդու աշխատանքին, բնաւորութեան եւ նոյնիսկ ծննդեան, տոտապանքին եւ մահուան հետ ունի օրկանական ձուլումներ: Հայ մարդուն դերեզմանը, նախադարեան օրերէն սկսեալ, միշտ դարդարուած է յուշարձանով մը՝ անմահութեան Հետ շփուելու մարդկային գիտակցութեամբ: Եւ եթէ հեթանոսական շրջանին կենդանիներն էին (վիշապ, ձուկ) այդ յուշարձաններուն բաղադրիչ գոյաւորութեաները, ապա միջին դարերուն անոնք եղան խաչքարերու platformով քանդակուած պաղատու ծառեր, շեշտը գրուած ըլլալով միշտ պատգններու եւ անբեւեւրու վրայ՝ ինձորի եւ նաւի սեւեռուն bas-reliefներով:

Հայ արուեստներու խորքը ընդհան-

րապէս եղած է կենդանութիւնը, կեանքը, կեանքին կառչելու բնազական ուժը, հողին կապուելու, հողէն անելու եւ հողը պարարտացնելու մարդկային ամէնէն էրախտաշատ կշռոյթը: Եւ մենք տոտապամ մարդեր ըլլալով՝ ղիտցած ենք, կամ թերեւս սորված ենք կեանքի գիտարութեան յարգը:

Մեր օրերուն, արեւմտեան աշխարհի քանդակագործութեան մէջ, հողին ու բնութեան նոյնքան կապուած հողերանութեամբ աչքի կը զարնէ Հենրի Մուր:

Իր ստեղծագործական բնոյթով կարծես արեւելքի է այս հանճարեղ մարդը: Իր քանդակած ծիծերը կը նմանցնէ բլուրներու, որոնք լեռներ են յաճախ, ղինք օրկանապէս զարձուցած են բնութեան հազեպէս շաղկապուած, անկէ սքնունդ աննոյ ու մարդու սովորական սպրումներէն ներշնչուող արուեստագէտ մը:

Հենրի Մուր կէս հայ է կարծես եւ, հետեւաբար, բնական է այն հմայքը, որ կը տածեն հայաստանցի քանդակագործները իրեն հանդէպ:

Հասարակական քանդակագործներուն համար Մուր մօտիկ է իրենց հողերանութեան այնպէս՝ ինչպէս Մայրը իր քանդակած կանայցի հասայիկ բազուկներով եւ հոյն պորտոք կաշած սրունքներով: Բնականաբար, կնոջ մտքինն է, որ առաւել նման է բնութեան, երկրագունակն՝ իր ելուէջներով, ծիծերով ու բարակ իրանին յաջորդող հրաշալի կանգով, հասա գիտանքով ու բարակցող ուղեքով, վերջապէս՝ իր սմբողջ շափային կշտայիկ այրպանութեամբ: Հոս է, որ հարազատ կը գտանան մեզի համար Մուրի քանդակները այնպէս՝ ինչպէս Հա-

յասանի յոններուն ներշնչող առինքնութիւնը, Հաղատի ու Սանահինի դիրքով եւ կամ գարեբուն գիմացած հին վիշապներու քարեղէն քանդակներով:

Այսպիսով, Մուրի ներշնչման ազբւրնները վերջին հաշուով թերեւս կուզան հին մեքսիքական աւանդութիւններէն ու մոնիւմենտալիզմէն, բայց հին Մեքսիքան իր հեթանոսական բնոյթով թերեւս շատ նման էր հայկականին: Շատ հաւանաբար: Եւ մենք կը համարենք հայկական սրամութիւնը, բնութիւնը, եւ Մեծամօրի առաւածները նոյնպէս ենթադրատակցական ազբւրը Մուրի ներշնչման՝ իր գիտակցութենէն անկախ. իր փոքրածաւալ ստեղծադործութիւնները եւ անոնց նկատմամբ սածած մեր հմայքը ապացոյց:

Այս տրամադրութեամբ մենք մեր քանդակագործներուն ներշնչման հողը կը նկատենք հարազատ Մուրի ներաշխարհի ազբւրներուն, կամ հակառակը, կապ մը կը տեսնենք երկուքին ստեղծագործական արտայայտութիւններուն միջև:

Եզրակացնելով՝ կ'ուզենք շեշտած ըլլալ, թէ ինչո՞ւ Մուր աւելի մօտիկ է մեր սրտին, քան նոյնքան հանճարեղ ձիարսմեթիին, Էրչտէյնը եւ նոյնիսկ Չասպինը: Այստեղէն մեկնելով՝ կրնանք զարձեալ եզրակացնել, թէ ինչու Մայրն ու Մարինօ Մարինին աւելի մօտիկ ու հարազատ են մեզի, քան Բուէնն ու Պրանքուզին:

Արուեստի գործը մտահոգութեան մը առարկայացումն է: Մտահոգութիւնը ժամանակակից հարցերու ցոյցումն է մարդու ներաշխարհին մէջ: Իսկ ինչ որ գեղեցիկ է արուեստի գործերուն մէջ, կեանքի սոսրական հարցերուն ներաշխարհային, ներանձնական պատկերացումն է: Եւ ինչպէս Եունիք գիտել կու տար երեսունական թուականներուն՝ արուեստագէտը զինք մտահոգող ինդիքներուն տարով ձեւ ու բովանդակութիւն, ստեղծողորձով կ'ըլլայ նկար մը կամ երաժշտական գործ մը, բանաստեղծութիւն մը: Ընդհանրացուցած կ'ըլլայ ասպ-



ՀԱՆՊԳՁՈՂ, ՄԱՐԻՆԵ

բում մը: Դիտողը իբրև հսկան ու օրհանական կապ տուեալ գործին մէջ՝ կ'ամբողջացնէ դաշն իր ուրոյն ընկալումով: Արուեստը ինքնին գիտողին ու արուեստի գործին միջև եղած կապի թրթրսացումն է, հասանքի մը գոյութիւնը ստեղծագործութենէն ղէպի գիտողը:

Արուեստը, ձեռով մը, մեր օրերու մասուրականութեան փիլիսոփայութիւնն է:

Որեւէ արուեստ կ'ըլլայ ժամանակակից, երբ հապէս մասնագութեան մը արդիւնքն է: Բանի որ այսօրուայ մարդուն որեւէ՛ մասնագութիւնը առաջին հերթին մեր ժամանակի նկարագրէն կը բխի, նոյնիսկ Եթէ ան թուի բացարձակապէս ներաճական: Ժամանակակից մարդու ապրումները այլևս ունին համաշխարհային բնոյթ:

Որեւէ արուեստի գործ ընկալելու, բմբռնելու եւ, հետեւաբար, դնահատելու համար մօտեցման սկզբունքային platform մը պէտք է ունենալ կամ որդեգրել, կանդուն մնալու համար՝ զօրաւոր հոգ մը:

Մեր մօտեցման ձեռք հետեւեալն է: Արուեստի գործին մօտենալ երկու տեսանկիւններէ: Առաջինը՝ նկատի ունենալ արուեստագէտին ապրած ժամանակաշրջանը: Համեմատական դնահատականի վաւեր մրայ՝ տուեալ շրջանի արուեստի շարժումներուն եւ տրամաբանութեան պրիմակին տակ՝ դանել տուեալ գործին համար բազմապատկան տեղ մը:

Երկրորդ՝ արուեստի գործին մօտենալ իբրև տանձին գործակից՝ անտեսելով ժամանակը, հեղինակը եւ հեղինակին տուեալ գործին վերնագրումը նմանապէս:

Այս երկրորդը արուեստի բացարձակ տրամաբանութիւնն է: Կամ՝ բացարձակ արուեստի համեմատական դնահատումը: Օրինակ, տա Վինչիի «ժոպոռա»-ն միջնէ օրս ունի բացարձակ արուեստի բարձրագոյն դնահատականը: Նեֆերթիթին՝ նոյնպէս: Այս պարագային արդէն գործին ընկալումը կը դառնայ ենթակայական, իսկ գործը կը մնայ միշտ



ՄԱՅՐ ԵՒ ՈՐԿԻ

այժմէական: Արուեստագէտը կը նկատուի իր իսկ աշխատանքին գործիքը միայն: Կը կնքէ գործը, իմաստ կը դրոշմէ անոր, բայց իւրաքանչիւր գիտողիս կը մնայ տանձնայատուկ, տարբեր եւ իւրաքանչիւրիս յատուկ աշխարհ մը տեսնել հան (ենթակայական դնահատականը), տարբեր միտք, տարբեր արամագրութիւն: Արուեստագէտը կ'անջատուի իր գործէն եւ պտականելիութեան իմաստը կը վերանայ ստեղծագործութեան վրայէն:

Այս օրերուն դժուար է այսպիսի բացարձակ արուեստի գրոյս-գործողներ գտնելը: Ստորագրութիւնը աւելի հսկան պարձած է, քան գործը ինքնին:

Հենրի Մուր իր գործերուն վերնագիր չէ զրոշմամ՝ մեկնելով նոյն այս սկզբունքին :

«Իմ գործերս, — դրած է ան, — կեանքի նկատմամբ աւելի մեծ նիգ ի գործ դնելու շարժասիրտներ են» :

Մտքազէտ մարդասէր ներաշխարհով մտալ մը, սրուն աչքերուն մէջէն դիտած՝ իւրաքանչիւր գործի մէջ կ'երեւին բողմաթիւ ու բազմազան ապրումներ մէկտեղուած՝ քորի կամ մեռողի ձեւերուն սրւում ուժին մէջ, առանց իմաստի մը սուճմանաբարկութեան : Այլ ապրումները պարզ են ու մարդկային եւ մեր առօրեային առանցքը կը կազմեն : Արդարեւ, Մուրի գործերուն մեծութիւնը, ըստ մեզի, կը կախնայ կեանքի փոքր հարցերուն ընդհանրացման մէջ :


Մուրի քանդակներուն շարքերը՝ իւրաքանչիւրը հարիւրէ աւելի, նոյն թեման ունին, «Մայր եւ որդի» կամ պարզապէս «Կնոջ մարմիններ», սակայն շարքին իւրաքանչիւր գործը ունի տարբեր սրամտաբութիւն :

Չէ քանդակած մայրը եւ որդին, այլ՝ մայր ու որդի : Աւելի որոշակի ու շօշախելի նրիթ կ'ընա՞յ ըլլալ, քան մայրն

ու որդին եւ նոյն տանն առելի վերացահան իմաստ, քան Մուրի մայրերն ու որդիները : Ահա՛ ամէնը : Ընդհանրացման բախանդակութիւնը, իմաստին վերացահանացումը՝ Մուրի գերիբարդաշատկան վերացականութիւնը :

Եւ գեւ ստիկա անոր արուեստին երբորդ յատկանիչն է, բայց կարեւորագոյնը : Աստիներ իր բնկիքն է : Ըսելիք եւ մտահոգութիւնն ունենալու հոգեբանութիւնը, արատաբարուելու ներքին մը դումը, սաղանդին ուժը : Երկրորդը իրեն յատուկ տիեզերական ձեւերը, սրնք առօրեայ կեանքին մէջ են՝ կան : Քառակուսին, կլորը, եռանկիւնը, եռայն, սրանց մուրեան շագկապումով ստեղծուած է սճ մը, որ դարձեալ տիեզերական է, քանի որ նոր է եւ իւրայատուկ՝ Մուրի քանդակները ճանչնալու բանայինները :

Բայց երբորդը, բնկիքը ընդհանրացրնելու ուժը՝ Մուրի տաղանդին էական պայմանն է՝ հանճարի զրոշմը : Չեւեր, սրնք երեսն կու գան ստեղծադործական երկունքի ժամուն՝ ներաշխարհէն, աչքերու փայլքէն : Չեւեր ու ուրուազրծեր, սրնք կը բնորոշեն անոր տաղանդին ուժականութիւնը, ստեղծադործա-



ՎԵ՛ ԿՏՈՂ, ՆՐՈՅԵ՛Ն ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՉԵՒԵՐՈՒ ՀԱՄԱՐ



ՆՐԿԱՐՈՂ ՄԱՐԾԻՆ

կան հմայքը, այժմէականութիւնը եւ արուեստագէտին ենթագիտակցական արքամազրութիւնները՝ մարդուն ու բնութեան նկատմամբ:

ՄՈՒՐԻ ԱՇԽԱՐՀԸ

Մուրի մասհոգութիւնները կեդրոնացած են հողեկտն ու վերացական երեսոյթներու մրայ՝ կիրք, սէր, սեռային ու բնազդական այլեւայլ ժառանգութիւններ: Քանդակագործութիւնը իրրեւթեքնիք մարդու մարմինի խաչարականացման մէջ չի կայանար սնոր համար, այնպէս՝ ինչպէս հին յոյներու մօտ, այլ՝ բնագահատակն, այդ խաչարականացման խախտումին մէջ: Շեշար կը գնէ մարդանհատին բնական, բնազդական էութեան վրայ:

Մուրի բուստեութիւնն ու մարդասիրութիւնը առաւել եւս կը շեշտուին, կը բնորոշուին եւ կը հաստատուին նաեւ կեանքի՝ խաչարականացման խախտում-

մով, սր մարդուն սխալական ըլլալու գրոյթին գրոշմն է:

Մուր կեանքին կը նայի ախպիտի՝ տեսանկիւնէ մը, ուրիշ մարդը կ'երեւի իրար հակասող երկու պատկերներով: Առաջինը՝ մարդը ինքն է այնպէս՝ ինչպէս որ կայ, երկրորդը այն է՝ ինչպէս որ կ'ուզէ ըլլալ, կամ որ կը ձգտի նոյն մարդը՝ իր բոլոր տեսակի բարգոյթիւններով հանդերձ:

Մուրի փիլիսոփայութիւնը քանդակի սահզմազործութեան վերածուած է մարդուն երկրորդ պատկերին հիմքերով:

Այդ ձգտումը մարդու մասճումներուն, կիրքին եւ այլեւայլ արքամազրութիւններուն աշխարհն է, սր իւրաքանչիւր տնհատի մօտ կ'արասայտուի առանձնայատուկ ձեւերով: Մուր այս հակասական գրոյթէն կ'ընտրէ իր քանդակի ձեւերը, սրանք զեղեցիկի լուծում կը ստանան եւ արտայայտական ուժով կը յագենան միայն այն տակն, երբ իւրաքանչիւր գիտող կ'ունենայ իր անձնական, ենթակայական բնկալումը: Այսպի-

սով դիտողը, իր արտադրութեամբ՝ մտա կը կազմէ Մուրի գործերուն ամբողջականութեան: Այստեղէն կը բխի արուեստագէտին այն հասարակ, թէ իր գործերը կեանքի ներսումամբ առաւել ճիշդ ի գործ գնելու շարժառիթներ են:

Իսկապէս ալ, Մուրի գործերուն նախելով՝ ամէն մէկ միտքի ու գրապումի արտայայտութեան մէջ մարդկային հեւք ներգնելու ազնուականութիւնը շեշտուած է: Մարդու մարմինին արհեստագէտներով քանդակելու միտում: Ի հարկէ, մարմինի օգտագործումը նորութիւն չէ քանդակագործութեան մէջ, ասիկա արուեստի աւանդական մտքիւն է: Բայց այսօր, մասնաւորապէս արեւմտեան աշխարհին մէջ՝ քանդակագործութիւնը իր ուղղութիւնը դարձուցած է անարկաներու օգտագործման զբաղ (constructualisme), այնպէս՝ ինչպէս Նէօլիթի շարժանին:

Հենրի Մուր դժբախտաբար բացառութիւնն է:

Հին յուները, փաստօրէն, առաջինն էին, որոնք կեղրոնացան մարդկային

մարմինին առանձնայատկութիւններուն զբաղ: Ինչպէս Պրոտոսինս ու Արիստոտելը կը շեշտէին՝ մարմինը կ'արտայայտէ մարդու հոգին, հետեւաբար, գեղեցիկութիւնը ինքնին կը կայանայ մարմինի չափերու ներդաշնակութեան մէջ: Հետագայ գարեբուն ընթացքին որքան ալ ասորքեր կարծիքներ ու տեսութիւններ երևան եկան գեղեցիկի մասին, յամենայնդէպս, բոլոր գարեբուն համար, արուեստներուն մէջ կարեւորը մնաց մարդու մարմինն ու մարդը՝ ինքը, իր յայտնարով, առաստաղանքներով, կիրքերով ու հաստատմանքներով:


Մեր օրերուն, ըմբռնումները գեղեցիկի մասին եւ իրականին ընտրուածք փոխուած են: Կարելի է բռնել բազմապատկուած են:

Օրինակ, անկեքեք են՝ ՔաՖրայի եւ Քամիլի հասկացողութեամբ:


Անորոշ են՝ Հաբսլիլ եւ Հիւմի բացատրութեամբ:

Իրական ու սրտակի են՝ մարքոսեան բմբռնումներով:

Յամենայնդէպս, բոլոր պարագաներ



ՄԱՅՐ ՈՒ ՈՐՈՒՆ՝ ԵՐԿԱՐԱՆ



ԱՇԽԱՏՈՂ ՆԱԳՈՇԴ՝ ԵՐԿՆՑԱՆ՝ ՄԱՐՄՆԻ ՄԸ ՀԱՄԱՐ

բուն՝ մարդուն մարմինը կը մնայ իրականութեան վերաբարտաբան ամէնէն կարեւոր, ամէնէն մատչելի եւ ամէնէն գեղեցիկ միջոցը:

Մուր իր արուեստին հիմնական շեշտը դնելով մարդկային մարմինին վրայ՝ ստեղծած է հիմնական երկու մոթիւ: Երկուքէն «Մայր ու որդի»ի շարքը իր սրտին միշտ աւելի մօտ մնացած է: Հոսան մայրը չի ներկայացներ լսի իբրեւ մայր եւ երեխան իբրեւ որդի, այլ քանդակած է անոնց ձգտումը մէկը միւսին եւ հակառակը: Մայրական սէրը ներգաշնակուած որդիական սիրոյն: Անքանդակած է այդ կապը, որ հանդիսատեսին կողմէ կ'ընկալուի իւրովի: Ատիկա Մուրի տարերքն է՝ իւրայատուկ եւ

փոփոխական տրամադրութեամբ: Դիտողին կը մնայ ատենել նոյն կապը տարբեր ներդաշնակութեանց մէջ:

Մուր նոյն ասէն նկարիչ է եւ յատկապէս ուրուանկարիչ: Մարդու հոգեբանութեան եւ հին քաղաքակրթութիւններու պատմութեան ուսումնասիրութիւնը Մուրին հնարաւորութիւն աւած են ներդաշնակելու գիմախաղի նրբին տրտալալատութիւնները սոսորական ու պարզ երեւոյց սիլիմարը ձեւերով:

Նկարադրելով մարդկային յատկանիշները՝ Մուր իր քնդարձակ մարդկայնութեամբ կ'ազնուացնէ դիտողին հողին՝ ամբացնելով, բայց չտահմանափակելով անոր զգացումներն ու սպրումները: Մուրի քանդակներուն plastic բը-

նայթր, ուժականութեան տեսակէտէն համեմատելի չէ մեր գորու ոչ մէկ քան-
զակապարծի գործերուն հետ (նոյնիսկ Պրանքուպիի պայթիւլու պատրաստ՝ զըս-
պըստձ ուժականութիւնը) : Մուրի քան-
զակները չտիւրով փոքր են, բայց մեր
մէջ կ'որթնեցնեն մտնիւմենտալի տպաւո-
րութիւն : Թեքնիք մտնումենտալիզմին
ձգտելու ճիւղը ամէնէն շատ յաջողած է
Մուրիի՝ միւսներուն հետ բազդատած :

«Կանացի քիւֆ մարմիններ»ու մոթի-
ւր Մուրիի գիտակցութեան մէջ տպաւո-
րութիւն ձգած է քսանական թուական-
ներուն, երբ ծանօթացած է մեքսիքա-
կան հին քաղաքակրթութեան՝ Մայա պե-
ղի անձրեւի եւ աստուութեան աստուա-
ծուհի՝ Չաք Եսայի երկնցած իրանին,
որուն ստամբարի մասը, միքրո-աստիաս-
տանի պէս, մայաներու գրհասեղանը
հանդիսացած էր ժամանակին :

Այս նիւթը սկիզբները Մուրիի գոր-
ծերուն մէջ խորութիւն չէր գտած, այլ
գրսեւորուած էր իբրև մարմինի plastic
հատկացնութիւն եւ ճկունութիւն : Հե-
տագային ան շեշտը կեզրոնացուց բեր-
րիութեան, առատութեան ու կիրքի
գրսեւորման մէջ : Վերացական դարձնե-
լով կնոջ մարմինին ձեւերը՝ երկրադուն-
տին յատուկ երեւոյթներով գրսեւորելով
զանոնք : Օրինակ, ազջկայ ծիծերն ու
ծունկերը եւ, ասհասարակ, մարմինին
բարձունքները քանդակելով իբրև լեռ-
ներ, բլուրներ ու աստիաստաններ :

**

Մուրի ուսմանտախուսածութիւնը,
զիպաշարի տեսակէտէն, վրիպում պէտք
չէ համարել : Ատիկա բոլոր ժամանակ-
ներու մեծ արուեստագէտներուն ընդհա-
նուր յատկանիշն է, ներքին անհրաժեշ-
տութիւնը՝ իրենց հասունութեան դա-
դաթնակէտին : Յատկապէս մեր ժամա-
նակներուն համար, երբ արուեստի մո-
նումենտալիզմը՝ թեքնիքի տեսակէտէն՝
արուեստագէտներուն գլխաւոր ուսում-

նասիրութիւնն է. շատ շատեր, կեզրո-
նանարով քանի մը նիւթերու վրայ եւ
հետեւագիտութեան ներշնչուելով նոյն
զիպաշարի տրամադրութիւններէն, ա-
նրնոյհետ խորանալով, յաջորդող գործե-
րուն մէջ կը յաջողին ներգնել արտո-
յայտչութեան աստուել ուժ եւ երթարով
կը հասնին նոյն նիւթին աստուել գեղեցիկ
լուծումներուն :

Մուրի ինդիքը այս տեսակէտէն, ա-
նանդական կապ մը գտնելն է հին մեք-
սիքական, հին եգիպտական շրջաններուն
հետ : Այսպիսով, յիսուն սարիւնկու նոյն
նիւթին անրնոյհետ գարգացումներով ան
կրցած է գտնել կապը իր եւ այդ հին
քաղաքակրթութեանց՝ ձեւերու արձա-
զանցող մտնումենտալիզմով, իր հասուն
շրջանի փոքրածաւալ գործերուն մէջ՝
ստանձնապէս :

Չարմանալի չէ սահմանափակու-
ածութեան այս երեւոյթը : Հանճարի պար-
տադրութիւնն է հաւանարար : Արդարեւ,
Միքել Անճելոն ալ, էլ Կրեթոն ալ եւ շատ
ուրիշներ խորքի տեսակէտէն ունեցան
նոյն տարողը, նոյն ենթագիտակցական
մօտեցումը :

«Գեղեցիկի արտայայտութեան ու
գեղեցիկի ուժին միջեւ, — կը գրէ Մուրի,
— կայ իմաստի տարբերութիւն : Առա-
ջինին նպատակն է գգայարաններուն
համայն պատճառելը, իսկ երկրորդը
(Expressive power) ունի հոգեկան կեն-
դանութիւն տալու ուժ. ատիկա ինձի
համար աւելի գգայացունց է եւ խորա-
պէս իմաստալից, քան գգայարաններուն
համայն պատճառելը» :

Այս հարցը կարելի է կապել Մուրիի
կենսագրութեան հետ : Անոր ապրումնե-
րը, միտքի անսահման թռիչքը ու անոր
փանքեզիներուն ընդարձակութիւնը չեն
վրիպած ու տարտղնած զինք : Մտածե-
լակերպը մտանագիտացած է, այսինքն՝
բալիպրի տեսակէտէն չէ ընդարձակուած
այնքան, որքան խորացած է : Նոյն նիւ-
թին կրցած է բազմաթիւ լուծումներ
տալ՝ իւրաքանչիւր նոր գործի մէջ ներ-
զնելով արտայայտչական աստուել ուժ :

Մնաւ 1898ին, Եորքի մէջ՝ Անգլիա :

Պատերազմին պատճառաւ շիրքաւ աւարտել արուեստի գպրոցը: Այցելեց Եւրոպայի արուեստի կարեւորագոյն կեդրոնները՝ Հոտմ, Ֆլորանս, Վենետիկ, Փատուա, Բիլլա, Փարիզ: Մերա յարաբերութիւն մշակեց գեղիցապաշտ եւ վերացական շարժումներուն հետ՝ Անգլիոյ մէջ հանդիսանալով յիշեալ շարժումներուն տառջին արձագանդողներէն՝ Նիկոլայովի եւ Փիլլորի հետ, մասամբ իր արուեստով, թայց յատկապէս իր արամադրութեամբ:

Մաւր չի բնորոշուիր ոչ մէկ գպրոցի սահմաններուն մէջ: Իր արամադրութեան մէջ ունենալով տարբեր ձեւերու եւ չափերու, նիւթի ու պարագութեան տարածական յարաբերութիւններն ու անտահման կարեւորութիւնները՝ ան չհետեւեցաւ որեւէ գպրոցի եւ ստեղծեց իր գապում հոգեբանական մոնումենտալիզմը, ստեղծեց իրը, մեծ ու փոքր ձե-

ւերու ներդաշնակութեան յուցադրամբ պարագութեան մէջ (գաշա, բացօթեայ սրահ, օդի մէջ, բարձունքներու գապութիւր):

Վերջին տարիներուն, իր գործերուն բնորոճակ յուցադրամբ տեղի ունեցաւ Վենետիկի մէջ, քաղաքին նայող բարձունքի մը վրայ՝ տարածութիւնը իրրեւ ֆոն: Այն ալ ի՞նչ տարածութիւն: Վենետիկը՝ իր գասական գեղեցկութեամբ ու կորսուելու խարկանքով: Կոնտրի, ջուրի ու ջրանցքներու, քառակուսի շէնքերու մթնոլորտը՝ երբեմնի աշխարհի ամէնէն աւելի իրական, ամէնէն աւելի նիւթին ու կեանքին կառչած քաղաքը: Այսօր այդ ամէնէն իրական քաղաքը՝ մարդոց միտքերուն մէջ գարձած է վերացական երեւոյթ մը՝ արուեստի գործ մը: Մուրի քանդակներն ալ, այդ իմաստով, ալովէն գարձած են արդիական արուեստին գասական գլուխ-գործոցները:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒՂԵԱՆ



ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍԱՏ

(ԲԱՐԳԻՆ ՓԱՓԱԶԵԱՆ)

Կենտրոնը ընկերային երևույթ մըն է եւ զայն յատկանշող տարրը մտքայն փոխարարներու- թիւնն է, որ կը նշանակէ համակերպիչ նոր պայ- մաններու, զիմպրաւել անտկնկայ ամէն մէկ նոր իրողարձուիին: Յարաբերութիւն կը նշանակէ կամքերու բախում, որ ծնունդ կու տայ հարցա- կաններու եւ տարկանոցներու: Արդարեւ, երբ մտքը կը փորձէ դարձածել իր ողբաւ կամքը, անպայ- մանօրէն կը բախի այլ կամքերու, մերթ բախե- լով ի՛ր իսկ անձին: Այդ բախումին պատճառաւ տարկանոցով եւ տարկանոցը արժամարանական հու- նով զարտացոնելու ու Լզրափակելու դարձու- թեամբ է, որ կ'իրագործուի թատերական իրա- կանութիւնը:

Յուզական տարրերու ներգործութեամբ չէ, որ կը յատճանայ թատերական երանակը, այլ՝ կամքերու բախումով, իսկ տարկանոցը իր սովորա- յուզականութեամբ կը գառնայ այդ բախումին որ- զինքը պարզապէս: Այսպէս, տարկանոցով կացու- թեան մը նկարագրութիւնը կրնայ առ սուսին ս- րուշ յարգանքներ արթնացնել մեր մէջ: Իսկ եթէ պատահի, որ այդ կացութեան մտանում կան կտրուկ մը անձեր, սրտնք աննշողին մղուածով կը պայքարին մտնումն զէմ, զայսովեան համար մրդ- ուղ անոնց պայքարը կը մասնանշէ թատերական բացայայտ յարում: Արդ՝ «քառերականը մարդ- կային կամէին մղած պայքարին մէջ է. կը ձնի գիտակից կամէին եւ անխափն դէմ ցցուած ա- մերուն հակադրուածէն, եւ կը սկսի ա՛յլ րոպէին, երբ այդ հակադրումը իր արտայայտութիւնը կը գտնէ»: Փիտակցութիւնն ու կամքերու բախումը, ստիպին, պէտք է ձգտին որոշ նորատակի մը, մաս- չեկով հանդիսատեսին «բմբումելի» հարդարականու- թեամբ, այսպէս, ոչ մէկ տարկանոց թատերա- կան յիւ բնայթ կընայ անենալ:

«Ըմբռնելի» ըլլալու համար պայման չէ, որ թատերախօսիչն նիւթը վերցուած ըլլայ իրական կեանքէն: Վերացական հարցեր եւս կարելի է թա- արակահանայցնել, սրբամտու, որ անոնց աւտջա- պրումն նորատակի մասշնէի Լզրանակով մը մա- տուցուի հանգիստառիւն:

Յունական սղերքութիւնները կամ Շէյքսպիրե- րան թատերախօսիչը իրենց յոացրով եւ արծար- ծած հարցերուն այժմէականութեամբ, սրբան ալ խոստը համեմատին 20րդ դարու հանդիսատեսնե- րան՝ ժամանակի եւ միջոցի անտեսումով երբ փա- խաղբուրնք զէպի անցեալ, այդ թատերախօսիչը մեր իմացումին հարցըր զիտակցութեամբ կը փա-

խանցեն մեզի իրական, ընդունելի եւ հնարաւոր ապրումի մը վայելքը:

Արդ՝ նիւթի մը ճշմարտանման ըլլալու հար- ցը կախում չունի այդ նիւթին վերացական կամ իրական ըլլալու ընտրութէն, այլ՝ թատերադիրին անպանկէն, փորձաւորութենէն, իմացական հարցը- ատութենէն, սրով՝ ան զէպքերը կը կատարէ հան- գիստառիւն համար ընդունելի եւ համարելի զար- ծուցութեամբ:

Թատերադրական արուեստը, ըստ Բ. Փոփոյ- Լանի, ենթակայ է սրուշ կաշկանդումներու: Իրեն յիճակաւած մէկ կամ երկու ժամուան միջոցին թատերադիրը սրարատուր է թատերական նիւթ մը ամբողջութեամբ ներկայացնել:

Ժամանակի անձկութեան պատճառաւ կարելի չէ ներկայացնել սրեւէ թատերախօս, եթէ դո- յութիւն չունենայ անոր յաջորդական աւտարան- ները ներքաշնակող միութեան ստրբը: Առանց այդ տարրին՝ թատերախօսի տեսարանները կը պար- զեն տարանջատ պատկերացումներ, սրտնց ստեղ- ծած խանոջովի կացութիւնը կը վերածուի հան- գիստառիւն մօտ անմիջական զժգոհանքի:

Հետեւաբար, թատերախօսը պէտքը ունի ա՛յն հիմնական դարձուցութեան, որ իր առաջադրած նիւթին շարժ պիտի համարիմբէ կրեւաթաղկո ներհակ իմաստով յայտնագործուող յարակից զար- ծուցութիւնները:

Ասորեայ կեանքի ընթացքին մարդիկ ո՛չ մի- ա՛յն չեն հետաքրքրուի իրենց այլազան մտածում- ներուն եւ արտայայտութեանց միջեւ. միւթեան կողմը հաստատելու հարցով, այլեւ չեն փնջա- սեր միութեան մը տարբը սերիչներու հետ աննշած իրենց յարաբերութեանց ընթացքին, կ'ընէ «Թա- տերազրութեան արուեստը զորմին հեղինակը: Թէ՛ ամէն անհատ իր ստորեայ զբաղումներուն բերումով կը հանդիպի այնպիսի՝ հակառակին ե- րեւութներու, որոնք ոչ մէկ անցած զժգոհանք կը պատճատեն իրեն: Որքան ալ ներհակ եւ այլազան թուին ներքին թէ արտաքին աշխարհներէ փո- խանցում մտածումներն ա. զէպքերը՝ միեւնոյն անհատին է, որ կը պատահին աննք, թէ՛ նոյն- ինքն անհատն է անոնց միութեան շողախը:

Նոյնն է դասախօսութեան ստրազան: Դա- սախօսը որքան ալ հետնայ իր տառապարած նը- պատակէն՝ կողմնակի չեզումներու եւ մէջբերում- ներու գծով՝ հարկ է, որ սրահ է իր մատուցած նիւթին միութիւնը, սենկիդիքներու մօտ ամէն թիւրիմացութիւն կանխելու մտահոյութեամբ:

Նսնն է և պարագան թատերախաղին, որ բյուրով համարումք այսպան գործողութեանց՝ ներկայացման ընթացքին հանդիսատեսը տեսարար կը հետաքրքրուի այդ գործողութեանց միջև միութեան կողմը հաստատելու գծով:

Գոյութիւն տնի տեսողէա մը, ըստ որուն՝ ներքին միութիւնը ինքնարեւարար կը բացայայտուի, երբ թատերադիրը կ'եզրոնանայ միակ նիւթի մը շուրջ: Բ. Փափաղեան կը նշէ, թէ նման տեսողէա մը չէ կըցած արդիւնարեւ նպատակ մը բերելէ, հօգիտակ տարուած բացմամբ փորձելու: Թէ՛ անհար է բարձր այդ միութիւնը մինչև անպակ էր թատերախաղ մը մատուցուի միակ անձնատրութեան մը կերպարով: Հասարակ էջերուն Արիստոտելին մէջջերուած հետեւեալ տողերը լատիներէն կը բնութագրեն մարդ անհատի խանութեան գոյնը կողմ և այսպան ընտրութիւնը. «... Ընկ մարդու կեանքին մէջ անհատութիւն տարբեր-տարբեր եմ դիպելը, գործ կարելի չէ միութեան մը բերել. ու նաև մէկ եղիլի կեանքին մէջ բազմաբնի դիպելը կամ, որակով եւ ոչ իսկ մէկ գործողութիւն կրնամք համել...»:

Արդ՝ էթէ նկատի ունենանք բացմամբ անձնատրութեանց պարագան, կը զգանք, թէ միութեան հարցը առաւել ևս անխրատորմելի երևոյթ մը կը զատնայ:

Եթէ թատերախաղի մը անձնատրութիւնները միութեան տարբեր չեն, այլ սրբող արատայայտուկան միջոցները թատերադիրին մտածողութեան և զգայնութիւն մը փոխանցելու ձգտումին՝ Բ. Փափաղեան հարց կու տայ, թէ սպա ուրիշ ո՞ր կը կարծուի այդ միութեան շարունակ: «Նիւրի միութիւն» բացատրական ձևերն մէջ, որ բոս իրեն, ուրիշ բան չէ, էթէ ոչ վերացական գաղափար մը, և էթէ՛ զուգափար մը կը գուտ իմացական աւտումով չի կրնար թատերական ըլլալ, նոյնիկ էթէ կրնար թատերախաղի մը կատարող յօրինուի գաղափարի մը շուրջ: Հեղինակը իր տեսողէա կը սահմանէ այն համարումով, թէ գաղափար մը զործողութիւններով միայն կը զբաւորուի: Արդարև, այդ այսպան գործողութիւնները բնահասանար յայտարարի մը վերածող տարբեր է, որ կրնայ իրականացնել թատերախաղին միութիւնը:

Թատերադիրը վէպերը կը համարէ աճապրով գոտարումով, որ խաղուած տղումով պատկերացնէ ու կարգաւորէ իր մտածումը: Թատերախաղին գործողութիւնները և տննող գոտարումն աշխատանքը զբաւորումն են թատերադիրին ի մտի ունեցած նպատակին: Դէպքերը, անձնատրութիւնները և յարակից բոլոր երևոյթիւնները իրենց զարգացման հանդիսանելով և յատարարութեան կարելիութեամբ կը ձգտին միակ գործողութեան, այսպէս կոչուած զագաքնակութիւն, որ պատկումն է նախորդ գործողութիւններուն, և որ «անխուսափելիաւ բան ապրումը կը բերէ հանդիսատեսին»: Բ. Փափաղեանի սահմանումով՝ «գագաքնակութիւնը՝ անհատութիւնը արդիւնք, անխուսափելի և վերջին բախումի այն յոյսն է, որ կը լատար, կը հիմնարկէ բատերադիրին մտածումը ու կը ներկայացնէ ան-

նախի արտայայտութիւնը իր բնութեան իրականութեան»:

Դէպքերու տարբեր գոտարում մը տարբեր գաղափարակէտ կ'առաջնորդէ: Եթէ գաղափարակէտ մը կը պարզէ բնորոշ կացութիւն մը, կը նշանակէ, թէ այդ կացութիւնը հարազատ բնութեան է թատերադիրին մտածումին, տեսողականին և հոյսովն էութեան:

Արդ՝ էթէ թատերախաղի մը այսպան գործողութիւնները դէպքերու և անձնատրութեանց գծով կը ձգտին առաջնորդող գաղափարակէտ գործողութիւնը, այս վերջինը, իր կարգին, կը հանդիսանայ զուննք միութեան ամբողջութեան մը վերածող միութեան շարունակ:

Թատերախաղի մը վախճանին է, որ կը յատարարուի գաղափարակէտը: Այս պատճառով թատերադիրներու մտայնացման առաջին հարցն է աշխատելու որուն իրազորմանը, սակայն, կը կատարուի թատերախաղի աւարտին:

Տրուած ըլլալով, որ թատերադիրը վիտատունի մը վտայնած լայն կարելիութիւնները չունի իր ընդգրկած նիւթը ժամանակի համեմատարար բնորոշակ տարածքի մը վրայ լատարմակէտ՝ անհարկուած է զանկու իր նիւթին գաղափարակէտ-տեսարանը, որուն իրականացման պիտի նրպատեն ևնթողործողութիւնները:

Սակայն գաղափարակէտ-գործողութեան մտայնացքը ինքնին բաւարար չէ՛ զայն անմիջական հազարականութեան վերածելու համար: Այլ պէտք է, որ իր արտայայտական բոլոր ձևերով զանէ բնորոշացած վիճակ մը թատերադիրին մտածողութեան մէջ: Գաղափարակէտ-գործողութեան նաև կապուած պէտք է ըլլան զայն նախորդ գործողութիւնները՝ «պատմաւ և արդիւնքի» ընկալելով կապելով»:

Թատերախաղի մը յատարարութեան պէտք է կատարուի բնական պայմաններու տակ և կատարուի աշխատել, որ յարակից գործողութիւններն ու գաղափարակէտի յայտնարծումը շնորհուն հանդիսատեսին վրայ արուեստական ըլլալու տղարարութիւնը:

Եթէ ենթադրուի թատերադիրին ձրուտող իրենց առաջնութեամբ կը հիմնարկեն գաղափարակէտը, այս վերջինը, իր կարգին, թատերախաղին «փորձաւարն է», կ'ընէ Փափաղեան: Աւելին. թատերադիրին «անխուսափելի իսկ է» և անոր մտածումներուն խաղուած պատկերացումը:

Անշուշտ, գաղափարակէտ-գործողութիւն մը չի պարզեցնում անպայման թատերադիրին բացարձակ կեցումները իր շուրջում նիւթին կապակցութեամբ, ոչ ալ իր հարցարարած մտածումներուն սալ գրական կամ բացատրական արտայայտութիւն:

Թատերախաղ մը կրնայ աւարտել հարցադասնի մը գիծաց: Այս պարագային, նոյնինքն հարցադասն է, որ կը կարգէ թատերադիրին մտածողութեան առանցքը կողմ նիւթը: Գլուխ չէ ենթարկել, թէ հարցադասն կարողանում թատերախաղ մը անորոշ կացութեան մը կ'առաջնորդէ հանդիսատեսը: Այլ մտածել կու տայ, թէ մարդ-

կային յարարերու ի վանկերն ի՞նչ ձեռով կը ճեղ
արդեօք անորչ զիճակ ծը, եւ թէ՛ նման զիճակ
մը անպատասխան հարցոյսն մը սուստայնեցով
ի՞նչ էնթացում թիւններու կրնայ տանել զայն:

Յիշուայ իրարու թիւնը հաստատելէ ետք, Լուի-
ճի Փիլիպոսի «Իւրաքանչիւրիմ՝ իր Պիտրոս-
սարխիւնը» թատերախաղէն կատարուած մէջբե-
րումով՝ Բ. Փափազեան կը նշէ, թէ տնորոշու-
թեամբ վերջացած այն երկը գրական ներգործու-
թիւն մը կը յառաջանի մեր մտքին մէջ, ա՛յն մը-
տածումով, թէ Փիլիպոսի նպատակն է ար-
թիւնը զրոյսը մեր մէջ՝ անձնարարութեանց յա-
րարելութենէն ճնայ հարցականի մը:

Արդարեւ, զարգանալիս կ'ըմբռնենուի սե-
շտորու լիտիլեամբ, երբ թատերադերին տես-
կէանք կը փոխանցուին հոնցիտատեւին իրենց
բնական եւ ընդունելի հաճախումով:

Թատերադրական արուեստը սահմանելու գը-
ծով, Բ. Փափազեան կը քննարկէ «Քասնրակի
այն կարգութիւնը, որուն պատկառնակալ գարգաց-
ման ու արդիւններուն քննարկումն է քասնրա-
խաղը»: Ան կը փորձէ ճշդել, թէ ի՞նչ պայման-
ներու տակ թատերադրը կը յլանայ իր նիւթը եւ
ստեղծագործական ի՞նչ կրանկով զայն կը վերա-
ծէ մնացած արժանիք մը հաստատող թատերա-
կան երկի:

Ան սարակարծիք կը զանուի Պէյբըրի այն
համոզումին, թէ թատերախաղը կրնայ սկսիլ
«որեւէ բանէ»: Ըստ իրեն, դործի մը ստեղծագոր-
ծական ընթացքը պատահականութեան ճղումով ե-
րեւոյթ մը է: Թէ՛ արտաքին դէպքերը ուշադրա-
ի՞նչ յատկութեամբ որ ներկայանան՝ պարզապէս
հնարաւորութիւնը կ'ընծայեն արտայայտութեան
բիւրեղացած վիճակի մը հասցնելու թատերադրի
ներաշխարհին մէջ արդէ՛ն իսկ տաղանտոյ մտա-
ծումին: Թէ՛ ստանց տղ Ներքին աշխարհումին եւ
իր արտայայտութեան հունը որոնող մտածումին՝
ոչ մէկ արտաքին զրոյս կրնայ բախտորոշ իմաստ
մը անենալ:

Ըստ Բ. Փափազեանի, կեանքը յարափոխի
ընթացք մըն է, որուն մշտահաշուով փորձառութեան
ենթակայ է թատերադրը: Ներքին եւ արտաքին
զրոյսները զայն կը պահեն իրենց յարատեւ ձգ-
ողականութեան տակ: Երջտոյտուն եւ մարդոյմէ
ուսաջ եկած արտաբնութիւնները, փորձառութիւն-
ները կը բախին անոր զիտակից եւ անզիտակից
ժղումներուն: Կեանքի գնացքին հետ, փորձառու-
թեանց ճամբով, թատերադրը կը հանդանակէ ո-
րոշ ճշմարտութիւններ, որչ համոզումներ, որոնք
խորքին մէջ ներերանդով մը միայն կը գատարու-
ին հաստատող ճշմարտութիւններէն, համոզում-
ներէն: Այս պայմաններուն տակ, ներքին թէ ար-
տաքին երեւոյթներէ գոյացած հարցականները
կ'ենթարկեն զինք անպատկառ ճնշումի մը, զոր ամէն
զնով կ'ուզէ զրսուրել: Իր ներաշխարհին մէջ
ստեղծուած «պայթուցիկ կայութիւնն է», որ ծը-
նունդ կու տայ այն հիմնական մտածումին, որուն
արտայայտութեան համար անհրաժեշտ է կուսու-
ցել թատերական գործողութիւնը:

Մէջբերելէ ետք Փիլիպոսի «Իւրաքանչիւրիմ»

արուիրուցներ, որոնք հեղինակ մը կը փնտենէ»
թատերախաղին յոտաջարանը, որ մեծանուն թա-
տերադրեր կը բացատրէ այն հարեանք պահերը,
որոնց ներքեւ ան յրացած է իր «Վից անձնառ-
բութիւնները»՝ Բ. Փափազեան կը հաստատէ, թէ
ստեղծագործական ընթացքը ծագում կ'տանէ թա-
տերադրի տաղանտեցոյ զարգացման մը: Թէ՛
արտաքին ազդակները կը նպաստեն թատերադրի
մտքին մէջ արդէն իսկ զայն թիւն անցող ար-
տա-զարգացման մը կարգաւորման հարցալիցին:
Թէ՛ անհրաժեշտը թատերադրի հոգեմտաւոր
աշխարհն է՝ իր իմացական պաշարով եւ ներքին
հարստութեամբ, որ վճռական իմաստ մը կու տայ
թատերադրական գործի մը ձեւարարման աշխա-
տանքին: Արտաքին միեւնոյն վայրերը սարբեր
չպացումներու ճնշող կու տան տարբեր հեղինակ-
ներու մտ: Թէ ինչու՞ էլիքապէթեան ժամանա-
կաշրջանին միայն Եկէրպոլիւրով կրցու իրադր-
ճութի մտալիճակ մը ներկայացնելու արարքը,
«Համէր» մը արարելու երեւոյթը, այս մէկը բա-
ւաղայն կը բնորոշէ վերջիվերջ հաստատումը:

Արմատ-մտածումը կրնայ պատահական ձեւով
գանել իր կազմաւորման հունը: Ասկայն արմատ-
զարգացման «ենթինակիւն անձը ներկայացնող մը-
նայուն տուեալ մըն է», կ'ըսէ Բ. Փափազեան:
Թէ՛ ստեղծագործական արարքն է, որ անձնառ-
ութեանց միջոցաւ կը բացայայտէ տղ «Անա-
յուն տուեալ»ը արմատ-մտածումի ձեւին տակ:

Ըստ էութեան, արմատ-մտածումը վերացա-
կան զարգացման մըն է, զոր կարելի է արտայայ-
տել գործողութիւնով միայն: Եթէ արմատ-գոր-
ծողութիւնը արմատ-մտածումը արտայայտող գոր-
ծողութիւնն է, արմատ-մտածումն է սակայն, որ
ճնունդ կու տայ թատերախաղի գործողութիւն-
ներուն:

Արմատ-գործողութիւնը ինքնին բարար է
թատերախաղը ներկայացնելու ճշմարտանման ձե-
ւով, այլ ոչնչոր է վոյնէլէ օժանդակութիւնը յա-
րակից այլ գործողութիւններու, որոնցմէ իւրա-
բանչիւրը սրտը լայս մը կը սփռէ թատերադրին
շօշափած հարցին վրայ:

«Թատերադրութեան արուեստ»ը գործին հեղի-
նակը կ'ընդլծէ, թէ թատերադրական օրէնքը կը
բացատուի կեանքի օրէնքէն արմատականայն այն
տարբերութեամբ, որով թատերադրը արդիւնքէն
մեկնելով է, որ կը գտնէ հարցի մը սկզբնական
պատճառները եւ կը լծուի ոմանց համարական
աշխատանքին:

Հոմոպոթիկան կամ համակարգումի այս բն-
թացքը անհրաժեշտ է թատերադրութեան: Այլ
ընթացքով է, որ թատերադրը կը զրոյս իր յը-
րացած նիւթին սեպտորման հարցով եւ զայն
մտածնական գործողութեամբ արտայայտելու ճի-
գով: Այս, ան կը ձեւանորդէ ոչ գործողութիւն-
ներու, որոնք, իրենք բարբով՝ «Վիտի բերելի
անձնաբնութիւնն է իրենց արտայայտութեանց
տելի ու ժղիմ անհատականացում»:

Բ. Փափազեան կը քննարկէ նաեւ գործողու-
թեանց ու դէպքերու բնարարութեան հարցը: Նման
բնարարութիւն մը կը պարզանակէ տեսարաններու

միջև. պատճառային կապի, թատերական յարու-
մի, տեսարաններու տարույթի կամ, թատերախա-
ղի անձնատարութեանց թիւին, գործողութեանց
պատմապահան ընթացքին եւ այլ հարցեր:

Ըստ իրեն, թատերաղիբը պէտք է յարմար
ընտրութիւն մը կայացնել զէպերու միջև եւ կա-
քենայ տեսնել այն բարեհաջողութեան կարեւոր
թիւնը, որոնց միջոցաւ թատերական գործ մը կը
բացմուտի վաւերական արժանիքով:

Թէ՛ արուեստագիտ թատերաղիբը չի կրնար
պահանջ զէպերու որոշ շարահարմարութեամբ մե-
ջև. պատմական կար թատերախաղին, այլ պիտի իր
ներաշնչութիւն մէջ պարտութիւն ունեցայ արմատ-
մասած մը յայտնաբերել արմատ-գործողութեամբ
եւ հիմնադրել զէպերու գործողութիւնները՝
պատճառական տեսանկյունով:

Թէ՛ տուեալ զէպի մը ընտրութիւնը արդիւնք
է թատերաղիբին կողմէ կատարուած մտնորոշը-
կիւտ քննութեան: Եւ որքան խտտապահանջ ձեւով
քննորոշէ ան իր նիւթը, նոյնքան եւ կը պաղա-
ւերի իր ստեղծագործական ճիւղը:

Եթէ զէպերու ընտրութեանց նկատմամբ
թատերաղիբը ցոյց չտայ անհրաժեշտ բժանդարու-
թիւնը, պաղապարտ կար նախորդող գործողութիւն-
ները յառաջ իր բերն անորոշութեան մը, որուն
պատճառաւ չի կրնար իրականանալ «անխուսափե-
լի վերջնական կոտորած մը»: Աւելի՛ն. այլ
գործողութիւնները պէտք է համապատասխանեն
տիպարներու նկարագրին եւ շրջապատին հետ տ-
նոնց ունեցած փոխաբարեկրութեանց:

Գործողութեանց եւ զէպերու ընտրութիւնը
կը կատարուի թատերաղիբին երեւոյթաբանութեան
մէջ միայն, եւ թէ՛ նման ընտրութեան մը յաջո-
ղութիւնը կախույ է թատերաղիբին տաղանդէն եւ
փորձառութիւնէն:

Թատերաղիբին մտահոգութիւնն է գործողու-
թեանց պատճառական տեսանկյունով զարգացնել
արմատ-մտածումը եւ պայն հասցնել պաղապար-
տիւնին: Այս ընթացքին մէջ ան չի կրնար թատե-
րախաղը սկսիլ որեւէ կէտէ կամ որեւէ պահու:
Բեմական պարտաւորութիւնները պայն կը ստիպեն,
որ ինքնաբեր ընտրէ մեկնման կէտը, որ ինչպէս
կը սահմանէ Բ. Փափաղեան՝ «կմիկիմ ծայրն է,
որ կարելի պիտի զարմնէ յաջորդող բոլոր գործո-
ղութիւններում յաջորդականութիւնով ու կտրու-
ցումով»: Բնական պարզագոյն տուեալով, մեկնման
կէտը թատերախաղի մը գործողութիւններուն ըս-
կիցը հանդիսացող գործողութիւն մըն է: Անոր
սեղանագրութիւնը կարելի է կատարել թատերախաղի
կրտսն կամ առաջին իսկ տեսարանով: Մեկնման
կէտը կը յատկանշուի այն իրողութեամբ, թէ թա-
տերաղիբին արժարժան կան նիւթն է անկիւս եւ
այլ նիւթը գործողացող գործողութիւնը: Թատե-
րախաղի ներքին ուժղնութիւնը կախում ունի գո-
ղաբանակէտի հետ անոր վայելում համեմատարար
սերտ առնչութիւնէն:

Հեղինակը կը նշէ, թէ մեկնման կէտով կը
ճիւղաւորուին թատերախաղի հետագայ գործո-
ղութիւնները, ինչ որ կը զփութարացնէ թատերա-
ղիբին ուշխառանքը՝ զայն իրողութեան պէտքով:

Թէ՛ թատերախաղի յատկանշալի յայտնա-
բերող գործողութեանց տաղանդն օգտին է մեկնման
կէտը, եւ թէ՛ որքան մտաբանայ անկիւս թատե-
րաղիբին կողմէ նպատակադրուած «անխուսափե-
լի անհրաժեշտութեան մը զգայնութեան» եւ այդ ըզ-
պանութիւնը մտածնաւորող պատճառին՝ նոյնքան
պարզ կ'ըլլայ թատերախաղը:

Մեկնման կէտի ընտրութեան կապակցու-
թեամբ հեղինակը կը թուէ երեք ձեւի ընտրու-
թիւններ, որոնցմէ իւրաքանչիւրը կը յայտնադրու-
մէ կատարողական ուշխառանքին վերաբերող յա-
տուկ թեմանք մը:

Այսպէս, մեկնման կէտը կրնայ սկսիլ տող-
նաղի մը ճիւղը կրտսն: Նման ընտրութեան մը
նախատեղադրն էն իրական թատերախաղերը:

Այլ ձեւի ընտրութիւն մը կ'առաջադրուի ոչ
թէ տաղանդի մը մեկնման կէտով, այլ սուր տող-
նաղը աստիճանական զարգացումով իմաստաու-
րող մեկնակէտով, ինչպէս է հոգեվիճակ մը պարտ-
կերացնող Լ. Շանթի թատերախաղերուն պարա-
պան:

Վերջնապէս, մեկնման կէտը կրնայ սկսիլ տող-
նաղին հետ. կէտէ մը, որով թատերախաղը կը
կատարուի կարգ մը իրողութիւններու շարակր-
մով, զանոնք հետագային յայտնադրուելու առա-
ջադրութեամբ:

Արդարեւ, որեւէ թատերախաղ վերոյիշեալ ե-
րեք ձեւերէն որո՛ւն ալ հետեւի, անհրաժեշտ է,
որ «եղբայրքի ու կառուցումի բնականութեան»
տեսանկյունով երախառնը իր ամբողջական կա-
ռուցին եւ մեկնման կէտին պայմանադրական յա-
րարեութիւնը:

Անորոշումայով նիւթի ցուցահանման անհը-
րաժեշտութեան՝ Բ. Փափաղեան կը նշէ, թէ թա-
տերաղիբը պարտաւոր է առաջին քանի մը տե-
տարաններով տալ նախնական ծանօթութիւն անձ-
նատարութեանց, ժամանակի եւ վայրի կապակցու-
թեամբ, որպէսզի հանդիսատեսը չմտայ բացար-
ձակ անորոշութեան մէջ: Թէ՛ նոյնիսկ թատերա-
ղիբին կողմէ զիտամնաւոր կերպով կատարուած
որոշ վերադասութիւններ, նիւթի կարգ մը ծալքե-
րուն նկատմամբ, հարկ է, որ կրնն ժամանակաւոր
ընթացքի եւ ջարդարեւոյն յարմարագոյն աւելթով:

Նիւթի ցուցահանումը երկուս պէտք է բերէ
տեսնաւոր զարգացած մը՝ տիպարներու հոգե-
բանական վիճակներու տարբերութեամբ եւ կատար-
ուի այնպիսի ձեւով, որ թատերախաղին յաջոր-
դական գործողութիւնները չթողան հանդիսատե-
սին վրայ արուեստականօրէն ներմուծուած ըլլա-
լու սպասարութիւնը:

Ցուցահանման տեսարանին մէջ հիմնականը
նորատեսակէտն է, որուն տեղադրումէն կախույ
է զարգացումը հետագայ գործողութեանց, որոնք
պիտի առաջնորդեն նիւթը՝ թատերախաղին գո-
ղաբանակէտ-գործողութեան:

Նիւթի ցուցահանումը թատերաղիբը կուշկան-
ցող պարտաւորութիւն մըն է եւ թատերախաղի
նորա թատերական մտքը: Այս պատճառաւ, թա-
տերաղիբներ կը վերածնն հնարար շարժով ձեռ-
բարդատուիլ այդ փորձարարներէն եւ անցնել էակա-

նին՝ արժամ-մասնումի ներկայացման: Եթէ անոնք հարկ եղած տուրքը չմատուցանեն ցուցահանման պարտադիր աշխատանքին՝ դուրս տուժէ թատերախաղը՝ ստեղծուած անհրահան կացութեանց անդրադարձով:

Յուրահանման տեսարանները բլրալով թատերախաղին «բանաբազուրեան արուեստ»ը աշխատանքութեան հեղինակը կը բացայայտէ, թէ աննոցմէ իւրաքանչիւրը կը կազմէ ինքնին ամբողջութիւն մը իր նիւթին ցուցահանումով, յառաջիակացքով, ենթադրութեան վեճով ու ենթադրութեան կառուցումով:

Սոհամեղով թատերախաղի տեսարաններու եւ մասնակի գործողութեանց կառուցողական բնոյթը՝ «Թատերապարտիս արուեստ»ը աշխատանքութեան հեղինակը կը բացայայտէ, թէ աննոցմէ իւրաքանչիւրը կը կազմէ ինքնին ամբողջութիւն մը իր նիւթին ցուցահանումով, յառաջիակացքով, ենթադրութեան վեճով ու ենթադրութեան կառուցումով: Իրենց կառուցումը եւ այլ տուեալներով անձնատուրութիւնները նայողն կը կողմին տանձին ամբողջութիւն: Այդ անձնատուրութեանց միջեւ տառաջացող հակադրութեամբ, հանդիպումներով եւ իրազօծուածութեամբ է, որ կ'իրագործուի գաղափարահան-գործողութիւնը:

Թատերախաղի տեսարանները օրդան ալ պարզին տանձին ամբողջութիւն եւ դեղեցիկ բնութեամբ մը վաշկէրը, այնուամենայնիւ, աննոց արժէքը կը սահմանուի թատերախաղին ամբողջական կառուցումի իրենց բերած նպատակով:

Անհարկելով այն հարցին, թէ ի՞նչ է թատերական յառաջիակացքը, հեղինակը կ'ընդգծէ այն տարբերութիւնը, որ դոյուլթիւն սենի ղէպքերու յաջորդական ընթացքին եւ զործողութեանց զարգացման ընթացքին միջեւ: Մինչ ղէպքերու ընթացքը ժամանակի թաւաքով կը հասնի թատերախաղի վերջնական հանգրուանին՝ զործողութեանց ընթացքը պատճառական տուեալներու հիմնաւորմամբ կը յանդի թատերախաղին անխուսափելի եղբայրացութեան:

Կեանքի ընթացքին եւ բեմին վրայ սրտասոց ղէպքերը նայր շին, կը պնդէ հեղինակը: Առաջին պարագային, մարդիկ կը դիմադրուեն այլազան կացութիւններ, ակնատես կ'ըլլան այլազան վիճակներու, որոնց ի տես կ'ընդլիկին, կը սուղնային, մտնուելով յաճախ վճռական պահու մը, որուն արամբանական ելքը ծանօթ չէ իրենց:

Մինչդեռ, բեմին վրայ կառարանող ղէպքի մը ելքը, մինչեւ իսկ իր յետին մանրամասնութեամբ, ծանօթ է թատերախաղին միայն, որ որչ նպատակով մը կառուցած է այդ ղէպքը:

Թատերախաղի անձնատուրութիւնները բառ կամ մը չէ, որ կը գործեն բեմին վրայ, այլ բառ թատերախաղին մտայնացման եւ անոր տառաջադրած նպատակին:

Այդ անձնատուրութիւնները իրենց ցանկութիւններով եւ հակադարձութիւններով կ'ազդեն իրենց շրջապատին եւ կ'ազդուին անկէ: Փոխադարձ ազդեցութեամբ է, որ տառք կու գայ փոխախաղի մը՝ նոր իրագործութեան մը յայտնաբերումով, որ ո՛չ միայն կ'ազդէ անձնատուրութեանց եւ ղէպքերու վրայ, այլև կը յառաջացնէ զործողու-

թեանց յաջորդականութիւնը:

Արգարեւ, զործողութեանց յաջորդականութիւնը կը վերածուի յառաջիակացքի, երբ անհրահ կը զարգացնէ նիւթը եւ դայն կը հասցնէ երբորակէ՛ յաճումի՛ պատճառական տուեալներով:

Կեանքը եւ բեմը յառահանող տարբերութիւնը կը կայանայ խոսուածի եւ ցրուածի իրողութեանց մէջ, կ'ըսէ հեղինակը: Թէ՛ կեանքի ընթացքին միշտ չէ, որ կը կեդրոնանաք որչ հարցի մը շուրջ: Թէ՛ բերեկացած գիրքը բացումով մը շինք տրամադրուիք միշտ մեղ ղիմակայող կացութեանց հանդէպ: Այլ՝ տարբեր օր մը, տարբեր պահու մը ընթացքին կը տարուինք նաեւ համակերպութեան զարգացմէ: Նայր չէ թատերախաղի պայտագային: Հաս ամէն բան անորինուած է թատերախաղին կողմէ եւ անձնատուրութեանց աննոցքը, պատնէթիւնները եւ հայելիվճակները բացայայտող զործողութիւնները կեդրոնացում պահանջող արուեստներով վերածուած են խոսուած պատկերացումի: Կեանքն է, որ իր խոսուած տրամադրութիւնը կը գտնէ թատերական զործողութեամբ:

Բառ հեղինակին, թատերախաղի մը յառաջիակացքը կ'իրագործուի ենթադրութեանց ճշտումով եւ պայթիւնին ստեղծած ընդլայնումով: Եւ որպէսզի այդ յառաջիակացքը մտնէ իր բնական հունը, պայթիւնով առաջ մղուած ղէպքերու յաջորդականութիւնը պէտք է սահմանուի կայուն վիճակի: Որովհետեւ, թատերական յառաջիակացքը ղէպքերու եւ զործողութեանց կրկնութիւնն է, այլ իրարմէ բխող կացութիւններ եւ կամբերու միջեւ բախումներ, որոնք ստիճանական փոփոխում թատերախաղը կը հասցնեն իր վախճանին:

Բ. Փառաղեան կը կեդրոնանայ նաեւ թատերախաղին ներս նոր ասարեքը ներմուծելու անհրաժեշտութեան վրայ: Թատերախաղը հնարատուութիւնը շուրջ պատճառական բոլոր արուեստներ մէկ շունչով ներկայացնելու հանդիսատեսին, հետնաբար, անհրաժեշտ է, որ ան ներմուծէ կարգ մը տարբեր, որոնք պիտի նպաստեն իր կողմէ նախադրուած թատերախաղին կառուցողական ուղեկիւնին:

Այդ ներմուծումին անհրաժեշտութիւնը կը պայտայի, երբ թատերախաղը փորձէ իրարու կապակցել այլազան իտանուածքներով անձնատուրութիւններ, որոնց հանդիպումը նորութիւն մը կը յառաջացնէ թատերախաղին համար: Արեւի՛ն. ո՛չ միայն նիւթի յառաջիակացքի պարագային անհրաժեշտ է նոր տարբերութեան ներմուծումը, այլև անմէկ մէկ անձնատուրութեան «յատուկ ղէպքերուն եւ աննոց արարքներուն պատճառակալ տուեալներու յարարակալմութեան շղթան կառուցելու համար»:

Այդ ղէպքի կառուցելու իր աշխատանքին մէջ թատերախաղը կը դիմէ որչ ընդհատումներու, որպէսզի հնար բլրայ թատերականացնել տուեալ անձնատուրութեան կողքին ա՛յլ անձնատուրութեանց արարքները:

Ներմուծուած իւրաքանչիւր նոր տեսարան եւ թէ չհիմնատուրութիւն սրեւէ պատճառական կապակ-

ցութեամբ՝ կը դառնայ արուեստական, գրկուե-
լով բնական ազգամբ մը պայտնութենէն:

Թատերախաղը կը սուսէ երբ ներմուծում
սարբը չի կրնար տուել կայսութեանց միջեւ ա-
ռաջ բերել սկնկալուած կաղակցութիւնը:

Եւ որովհետեւ Թատերախաղը գէղբի մը իր-
ատցումը պատկերացումն է, Թատերաղբը չի
կրնար գոյն ներկայացնել շարունակական ձևով:
Նիթի է ժամանակի նկատումով՝ սն կը կտաս-
բէ որչա՛ք գուամներ եւ ընդհատումներ:

Շարունակութեան ընդհատումի սարբական
ձևը վարպետի օգտագործումն է: Միջնարդի
գերբ կը սահմանուի ո՛չ միայն գործողութեան
ընթացքը ընդհատելու, այլև՝ հանդիսատեսին
յոյնութիւնը փարատելու մտահոգութեամբ:

Լուսեր մարելու միջոցը այլ ձև մըն է ընդ-
հատումի, որով Թատերախաղը կը բացուի նոր
տեսարանի մը վրայ:

Երբոր գ միջոցը՝ դարձող բեմի պարագան է,
որ արգէն հանրամասն ձև մըն է ներկայ հան-
դիսատեսներէն շատերուն համար:

Վերոյիշեալ միջոցներէն սնկախ, Բ. Փափագ-
եան կը նշէ այլ ձևի շարունակութեան ընդհա-
տում մը, որ չի տեղադրուիր ժամանակի է. վայ-
րի փոփոխութիւն մը յառաջացնելու մտածումով,
ոչ ալ կը թերադրուի հանդիսատեսին յոյնութիւ-
նը փարատելու. նկատումէն, այլ՝ պայմանաւորե-
լու գործողութեան մը ուժգնութեան ատրիանա-
չափը, որովհայտ Թատերաղբի մասշտաբ մը եւ
ստաջողրած նպատակը իրենց համապատասխան
տղուսութիւնը գործեն հանդիսատեսին վրայ:
Նման ընդհատում կ'իրագործուի ոչ թէ թէքնիք
միջոցներով, այլ՝ Թատերաղբի ստեղծագործ ձե-
րով, երբ տուել տեսարան մը փոփոխութեան
կենթարկուի այլ անձնագործութեան մը մուտքով
կամ երբ անձի մը իրաւակցութիւնը կ'ընդհատուի
այլ անձի մը արտայայտութեամբ:

Այս ատրիանութեամբ յատկանշական է Համէլէ-
թի մեխափոսութիւնը, զոր Շէյքսպիր կ'ընդհա-
տէ Օֆելիայի երեսմով՝ ձիւղ այն կէտին, կը
յիշեցնէ Բ. Փափագեան, օւրիչ անգին յոյնցու-
ցիչ պիտի թուէր: Այս ընդհատումը կը բերէ իրեն
հետ յուզական տարբ մը՝ ա՛յն իմաստով, որ Օ-
ֆելիայի գաղցր սիրոյն մէջ զղուի օւժգնութիւն
մը կը ստանայ անձնատպանութեան խոհեղով տար-
ած Համէլէթի հոգեփոխութիւնը, որ կը զրօնու-
րի յուսելու նպատակը ամուսնութեան հետանը-
նկարի մը կարելիութեան: Այլապէս, հանդիսա-
տեսը տարբեր տպաստութեան սակ պիտի մնար,
երբ այդ մեխափոսութիւնը ընդհատուէր պալա-
տական մը մուտքով:

«Թատերախաղի մը որակը՝ գործողութեանց
ընդհատումներու եւ անցումներու կամար ըն-
տրուած միջոցներուն արակն է», կ'ըսէ հեղինակը:

Արդարեւ, իւրաքանչիւր ընդհատումէ ետք,
հարկ է ապահովել շարունակութեան պահպանու-
մը: Իրարմէ անջատ տեսարաններով կարելի չէ
ձևաք ձգել ամբողջական Թատերախաղ մը:

Թատերախաղը ինքն է, որ պիտի բացայայտէ
ինչպիսիք: Անձնագործութիւնները ո՛չ միայն գործ-

ողութեանց միջոցաւ պիտի գործողանան իրենց ախ-
պարը, այլև պիտի նպատենն ա՛յլ անձնագոր-
ծեանց կերպարներուն կոտորածն աշխատանքին:
Անձնագործութիւնները, գէղբերը, այլապէս տես-
րաններն ու գործողութիւնները պէտք է պահեն
որչա՛ք կաղակցութիւն մը իրարու միջեւ, որպէս
հարմարութիւնը բնական հանդիսատեսին բը-
րանելու Թատերախաղի նիթը իր ամբողջական
իմաստով: Այլապէս, ստանց կաղակցումներու եւ
իրարմէ բխող կայսութեանց հանդիսատեսը
կրնայ տուել պայտն ստանալ անհեթեթ մտածո-
ղութեան մը սպաւորութիւնը:

Ընդգծելէ ետք շարունակութեան պահպանման
վերաբերեալ կարգ մը գիտարութիւններ, հեղի-
նակը կը հաստատէ, թէ տեսարաններ միջեւ
կաղակցումներու ընթացքին անհրաժեշտ հարցը
անցումներու պարագան է: Թէ՛ անցումները ո՛չ
միայն կը զիրարան տարբեր տեսարանները ընդ-
հատելու եւ զիջելու Թատերաղբին աշխատան-
քը, այլև կը նպատենն նոր տարբեր ներմուծե-
լու անոր ձիւղին, որով՝ նորայայտ գործողութիւն
մը կը լծորդուի Թատերախաղի միտմայլ ամբող-
ջութեան:

Բ. Փափագեան շեշտը կը դնէ իրարութեան
վրայ, թէ գործողութեան գործողութիւն սնցում-
ները օրտահանուան երեւոյթներ չեն: Թէ՛ Թատե-
րախաղի ամբողջ ստորածքին տեսարաններու հե-
տըզեակ աճող թիւին՝ պատահաւ. հանդիսատեսին
ուշադրութիւնը կը ցրուի, կը տարածուի: Հե-
տեւարար, հարկ է գոյն տեսարար յարուած վի-
ճակի մէջ պահել: Թատերախաղին յաջողութիւնը
կը պայմանաւորուի Թատերական լարումով, որ,
բայտ հեղինակին, կը նշանակէ՝ «առաջացնել ու-
շաղլարեանց կեղքանցում, հետաքրքրութեանց
լարում, պահել այդ լարումին ուժը, սովորել,
սակցնել, հասցնել գլխի անտանիլի ատրիանի
մը եւ համ, սրկումի այդ ամենաբարձր ատրիա-
նիլ վրայ՝ լուծել գոյն»:

Թատերական լարումը իրադրուելու համար
անհրաժեշտ է, որ Թատերախաղին նիթը ունե-
նայ իր համապատասխան կըտոյթը, զոր Թատե-
րաղբը կը գործողանց գործողութեանց միջեւ ան-
ցումներու միջոցաւ:

Հետեւելով Թատերախաղի գործողութեանց
Թատաղբին՝ հանդիսատեսը կը հասնի արձակի բո-
ղէի մը, որ կը յառաջանայ սպասում մը իր մէջ:
Ան կը սպասէ տեսարանի մը յայտնութեան, որ
գէղբերու պատահական ստեղծելով կը դառ-
նայ անխոստիելի երեւոյթ: Այ մէջ Թատերաղբը
կրնայ տեսնել այսպէս կոչուած պարտադիր տե-
սարանը, որուն իրադրումը պարտադիր աշխո-
տանք մը կ'ենթադրէ: Անոր անտեսումով կրնայ
յառաջանալ որչա՛ք հիասթափութիւն հանդիսատե-
սին մօտ, ինչ որ կ'արժեպրէ Թատերախաղը:

Բ. Փափագեան կ'օրտածանորէն նաեւ Թատե-
րախաղի մը կոտորածը, նշելով, թէ որեւէ գաղա-
փար, սրբան ալ զօրեղ թուի անիկա, չի կրնար
վերածուիլ զրականութեան, եթէ Թատերաղբը
չկարենայ դա՛ն օրտայայտել լիզուական իւրայա-
տակ ճարտարութեամբ:

Թէ՛ թատերադիրին արտաբերած բաներուն եւ խօսքերուն բանաստեղծական երա՛նդն է միտն, որ կրնայ յատաճացնել սուրբումբի մը պայտուփիւնը:

Թէ՛ թատերոյն բլլալով միակ կողմը թատերախօսողին եւ հանդիսատեսին միջև՝ թատերական խօսակցութիւնը պէտք է գրուի գեւրամտաշէրի լեզուով:

Թէ՛ երեւակայութիւնը նախապայման է սրեւէ դրական ստեղծող սրտն թեան եւ, մասնաւորաբար, թատերադիրին երեւակայական շնորհը կը ձգտի կեանքը կենդանի պատկերացումով փոխողբել բեմ եւ պոյն ներկայացնել հանդիսատեսին:

Թէ՛ թատերախօսիչ մը անձնատարութիւնները հիմնական արժէք մը չունին, այլ կը ծնին՝ մարմնաւորելու համար թատերադիրին արժատ-մտածումը:

Ստանանկէ ետք «յատաճացած թատրոն»ի բլլանքը եւ սոյն շարժումը իրազրծող յատաճարհ գրողներու (Փիլիսոսանկէս, Իոնեսքօ, Պեքէթ, Անտայ, Աստրի, Մանթելլըան եւ Քամիւ) թատերադրական բնութեամբ՝ Բ. Փափաղեան կը բանաստեղծէ յատուկ տարազ մը, բոս սրտն, սեւէ թատերադիր ինչ ձեւով ալ փորձէ գրել, իր կասուցածը սկստք է բլլայ բմրանելի բան մը: Թէ՛ թատերադրութիւնը իր արտայայտութիւնը կը գտնէ բեմի միջոցաւ, եւ թէ՛ կեանքի հարվոյթի ձեւ կրելով հանդերձ սրտ փոփոխութիւններ՝ պարտ մնալ նոյնը: Որովհետեւ՝ «արժէքը փոփոխութեանց մէջ չէ, նորութեանց մէջ չէ, այլ՝ արուեստին: Եթէ բան մը պիտի մնայ քատերագիրէն, պիտի մնայ արուեստի մեծութեան շնորհիւ»:

«Թատերագրութեան արուեստ»ը հատորին վերջին մասով Բ. Փափաղեան կ'անդրադասնայ սոյն հարցին, թէ ս'ր կը կոչանայ մնայուն արժանիքներու շախմատը:

Ան կը թուէ պարագան սոյն բողմոթիս գործերուն, որոնք եթէ յատկանշական են հանդիսատեսին մօտ մեքոպարաւարիկ տրամադրութիւններ ստեղծելու տուեալներով կամ իսր գոհունակութիւն մը ապիկու տաճաղըութեամբ՝ անոնց թատերադրական շահեկանութիւնը, ստկայն, չի կրնար անցնիլ ասանտեակէ մը սնդին:

Ան կը թուէ նաեւ պարագան սոյն գործերուն, որոնք համամարդկային տարբեր արժարժեղութեան բողմոթով իսկ եւ համայնական ճշմարտութեան բողմոթով կարելիութեանց նպատակով՝ ս'չ միայն կը մօտանան իրենց ժամանակակից դարուն, այլ եւ բոլոր գաղերու գիտակցութեան: «Համլէք» պերմտիստ վկայութիւնն է այս երեսնութիւն:

Հեղինակը հարց կու տայ, թէ ինչու «Համլէք» մինչեւ իսկ այսօր կ'ըմբոստանաի սոյն նոյն գրաւչութեամբ, ինչ շահադրութեամբ, որ կ'ըն-

կայուէր էլիգաղթեան դարաշրջանի հանդիսատեսին կողմէ: Սոյն հարցին լուծումը հեղինակը կը հաստատէ սոյն իրողութեամբ, թէ «Համլէք»ի կերպարին մէջ սրեւէ դարու հանդիսատես կը գտնէ մօտ մը իր էութենէն, կեանքէն եւ անձնական փորձաւորութեամբ յայտնաբերած արտայայտելի: «Համլէք» մարդկային կեանքի տմբողջական կերպարն է, նկարագրային թէ՛ բարդ եւ թէ յատակ յատկանիշերով, եւ մարմնացումը՝ մարդու ներտախարհային կացութիւնը բնորոշող տողնոյն: Մնայուն արժանիք մը վկայող գործեր են միւսմոյն անոնք, որոնց դրսուտը պատշաճները կը սլարդեն բողհանրական ճշմարտութիւններ: Միայն անոնք, որ դիտեն անհասական ցար հասարական տողնոյն մը վերածելու դողունիքը, եւ մարդկայինը՝ համամարդկային իմացումի փոխակերպելու ճանապարհը: «Թատերախօսիչ մը կ'ուղիներ իր արժարժումը կարգելու մէջ ու անոնց միջոցով կը հասնի համամարդկային եզրերու, — կ'ըսէ Բ. Փափաղեան, — իսկ մարդկայինը, մինչեւ անգամ համամարդկայինի տանող մարդկայինը, կարելի է ներկայացնել միայն մարդկային կեանքով, կեանքի պատառիկներ ցոյց տալով»:

«Թատերագրութեան արուեստ»ը հատորը շրջանորէ իր արժարժումը բողմոթիս հարցերուն շահեկանութեան՝ կը հանդիսանայ սրկող սղեցոյց մը ո'չ միայն թատերադիրներու եւ բեմողբիչներու, այլեւ՝ թատրոնով շահադրիս բոլոր հանդիսատեսներուն համար: Թատերասէր իւրացանչեղ անհատ սոյն հատորով հողորդ կը մնայ սոյն շահեկան տուեալներուն, որոնք լուսողոյն կը բնութագրեն թատերադրական արուեստը:

Արդորեւ, իսհական երանդ մը կայ սոյն հատորին մէջ, հողերանի մը խորթախանց ախտաճանաչումը, «կեանքի պատառիկներ ցոյց տուլ» բնկերպանի մը մեկնարանական աշխատանքը, մարդասիրական երակ մը եւ, վերջապէս, թատերադրական իրազրծումներու շահմանաթի բնտողտի մը սրտեսու տէքը:

Բարերար դեր մը վերապահուած է սոյն հատորին, որուն բնթերցումով թատերադրական բմրանողութեան նոր հորիզոն մը կը բացուի ընթերցողի մտքին: Անոր թերադրականութեան տակ սղարդ ամէն անհատ անթիջական անհրաժեղութիւնը կը զգայ վերատեսութեան կեթարիկու: Թատրոնի մասին իր տարազած մտածումներն ու բմրանումները եւ կը սկսի նոր տեսանկիւնէ մը մօտենալ թատերադրական հարցերուն: Հոս է արդէն Բ. Փափաղեանի «Թատերագրութեան արուեստ»ը հատորին հիմնական արժանիքը, որ ակողմական բնոյթ ունենալով հանդերձ, յատկանշական է գործնապաշտ արդիւնք մը ձեռք ձգելու լուսկարտով...



Կուզէի, որ ինձ նման գրէիք: Շատ կ'ուզէի: Ձեզ համար եօթը բալլազ եմ գրել: Մի բալլազի վերնագիրն է «Խեղկատակ»: Նշանակում է... (առանքէն բառ): Ե՛ս եմ: — Խեղկատակ: Ոչինչ չաւ է: Նշանակում է՝ սուս է: Լէյլի, Լէյլի: Լաւ Լէյլի: Լէյլի:

ՉԱՐԵՆՑ

Եղիշէ Զարեհցին նուիրում մեր բացատրէին դուրս մնացած, այլ անոր յրացուցիչ վերջին նիւթերն են սուս-նաւարներու խեղկանակ Լէյլիին կացեւագրում նամակները, որոնց հետ ու չափ հետադարձական է յամաստեղծու-նիին նկարը, որ պէտք է դրուի մօտիկը Աստղիկ Ղոնդախչեանին, Կարինէ Քոթաննեանին, Լիւսի Փարսեանին, Արմենիկ Տէր Ասատաճարեանին եւ Արմենակի Տիգրանեանին, որոնք տարբեր չափերով, բայց անպայման քանատեղծական գրգիւս մը բնծայեցին Զարեհցին ու արդիւնաւորեցին անոր գրիչը...

Լէյլիին ուղղում նամակներուն միւս երեսը մաս կը կազմէ Հայաստանի հանրապետութեան անկումէն գրեթէ անմիջապէս ետք շնչած կամ շնչա-հեղձ եղած «Կարմիր պոետ»ին առօրեային, որ սնշուշտ պիտի չվրիպի օր մը անոր գիտական կենսագրութիւնը կազմելու ձեռնարկող մտաւորականներուն ուշադրութեանէ...

ԽԵՂԿԱՏԱԿ

Ու գիմու պէս էս կազին
Յարկ կը բախուի նրանց մութ
Ու մահաւտ յտակին:
«Մրախճանք», բայց Լիւս:

Կ'ուզէ՞ք ... Երգեմ՝
Ձեզ համար,
Հիմա:
Այնպէս երգեմ, որ զգար —
Ի՛նչ որ կ'ուզէք, կ'ուզէք — սէք,
Կ'ուզէք — մահ:
Ես երգում եմ, որ յուզեմ.
Տալիս եմ կրպ լուսէ
Ո՛ւմ որ կ'ուզէք, թէկուց շա
Լինի պոետիկը վերջին.
Դուք չի՞ գալիս ձեզ միթէ
Այս քնքշութիւնը —
Արջի:

Ես երգում եմ սկսածայ:
Ի՛նչ էլ երգեմ, կ'ուզէք — սէք,
Կ'ուզէք — մահ —
Բայց չե՛մ կեղծում ես երբեք:
Լսէ՛ք երգերս —
Ահա —
Լսէ՛ք երգերս, բայց թէ —
Ձեարբէք:
Ես չեմ սօղում, որ հարբէք:
Լաւ չէ, դիտէ՞ք, երբ որ մի
Անհո՛ւն կարտա գառնում է քաղցր
Քամի...

Ձէ՞ք հասկանում:
Ի դո՛ւր, ի դո՛ւր: Դուք պէ՛տք է որ
Հասկանաք:
Քոչե՞ղ է պէտք, սակայն ո՞ր:
Ձէ՞ք հասկանում, ես կ'ուզեմ,
Որ իմ երգերը
Լուսէ —
Ձեզ թուզի թուան ու թանաք:
Ձէ՞ք հասկանում... — Դուք պէ՛տք է որ
Հասկանաք:

Ուրիշ — ոչինչ:
Ու հիմա —
Նո՛յն է նորից, ես երգում եմ — սկսածայ:
Ի՛նչ էլ երգեմ, կ'ուզէք — սէք,
Կ'ուզէք — մահ:

Ես — Խեղկատակ եմ հիմա...

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

Ե. ՉԱՐԵՆՑԻ

Ն ա մ ա կ ն ե ր ք

Լ Է յ լ ի ի ն

Լէյլի ջան,

Ինչպէս ինն բարեկամի — գրում եմ էս նամակը Ձեզ, քանի որ ես հարազատ չունեմ էստեղ (եւ ո՛չ մի տեղ) եւ չեմ իմանում, թէ ինչու Կուէ էղպէս մի օրուայ մէջ ինձ էղքան հարազատացա՛մ: Վերջի(ն) ժամանակներս տխուր եմ, շատ եմ տխուր, անխառն եմ դարձել. ո՛չ գրել է լինում մի բան, ոչ էլ սպրել. ես ո՛չ մի անգամ էսքան չէի ձանձրացել աշխարհից, — էսպէս է, ջան: Գինին ու կոնսակն էլ որ էջացել է — աւելի է վատ, ատելի անասնելի: Մէկ էլ — գործը. Լուս. ժող. Կոմիսարիատում ինձ տուել են Արուեստի բաժնը. արուեստը լաւ բան է, դէ, բայց ազատ ժամանակն ու քէֆը աւելի են լաւ մեծակ մարդու համար: Ես դեռ անցեալ տարի էդ անտէր մեծակործեան մասին մի փոքր գազել էի գրե(լ), էս է:

«Կարմիրը են զալեքի լոյսերը ու մուգ են. —

Կարմիր են, կրակէ, — բայց, ախ, անամո՛ք են:

Եւ ո՞վ կը կանչի նրանց, որ կհանքում այս

Մենակ են, տխուր են, տխուր ու անօ՛ղ են...

Նուսն է սրտիս մէջ ծանօթ մի մորմոք հին.

Լոյսերը հեռո՛ւ են, անխո՛յթ են, անհո՛ղ են...»:

...Էստեղից էլ պարզ է, որ ինձ կարող է ոգեւորել միմիայն քանդումը, ամբոյսների աւերը, իսկ «շինարար աշխատանք»ը ինձ էնքան էլ չի գրադեցնում: Ախ, մի բան ես կ'ուզէի հիմա. կ'ուզէի Հրայ երկիր, կամ (*սուսերէն բաս*) երթամ — ծով ու արագ տեսնեմ, կամ, ինչպէս էն լուսեղէն Տէրեանն է ասում.—

«Ըւ անտասկ իմ եղբօր հետ, ցանկապատի տակ

Կ'ուզէի ես մեռնել անբախտ ու անյիշատակ»:

Լաւ է էդպէս, Լէյլի. Դուք էլ է՛ք լաւ. աշխարհն էլ է լաւ. բոլորն էլ են լաւ, իսկ ամէնքից լաւ՝ անյիշատակ մեռելուն է, ջան, ինչպէս ասում է ժողովուրդը — «շան պէս սատկելը»:

Անիմաստ նամակ եմ գրում, Լէյլի ջան, կորել եմ, խելս էլ եմ կորցրել, գլուխս էլ. գտնէ ինձ Մոսկով գրկէիմ, ասէիմ՝ Չարեանց, ել գնա՛ Մոսկով, էնտեղ քեզ մի քսա ջուր կը սանֆ, մի կտոր էլ հաց. սպրի(ր) մինչեւ մեռնես: Տեսնում եմ, որ նամակս դատնում է գանգառի նամակ. ոչինչ, էս էլ է լաւ, Լէյլի:

Գիտէ՛ք ինչ, Լէյլի, լաւ կ'անէ՛ք, որ գա՛ն էտտեղ. եկէ՛ք վերցրէ՛ք Արուստի բաժինը. էդ Ձեր գործն է, եւ Դուք էդ գործը լաւ կ'անէ՛ք, ես էլ կ'օգտուեմ հանգամանքից — կ'երթամ Մոսկով: Պիտի ասեմ Լէյլի, որ Ձեր էն նամակը ես չստացայ, կորաւ ու կորաւ, սըրտիս էլ ցաւ եղաւ, որ էդ նամակը կորաւ: Հիմի նամակ գրէ՛ք, ես շատ կ'ուզեի Ձեզանից մի խօսք իմանամ, որովհետեւ Ձեր խօսքը ինձ կը փրկի. Դուք կամք ու ազդեցութիւն ունէ՛ք ինձ վրայ, ես վախ ունեմ Ձեզանից — էս էլ է լաւ, Լէյլի, որ մարդ վախ ունի, սիրած ազդեցութիւն, քն նամակի հետ 3 հատ բալլադ եմ ուղարկում, էն ժամանակ եմ գրած, վերջիններն են, իսկ գրանցից յետոյ ես ոչ մէկ տող չեմ գրել հալա, եւ չգիտեմ պիտի կարողանա՞մ գրել, քէ ոչ:

Ընդունեցէ՛ք ամենասնկեղծ բարեւներս, յարգանքներս —

Ձեր՝ ԻԳԻՇԷ ԶԱՐԵՆՅ

(1)921, 10 1, (Ներսէս)

Մերեւի Լէյլի,

Ամենախորին յարգանքներս եւ ամենալաւ բարեւներս:

Նամակաբերս կիմս է. ամուսնացել եմ: Լաւ ուզելի է. իբրևորում եմ սիրէ՛ք եւ ընդունէ՛ք:

Ի՞նչ է՛ք անում. եկան ասին, որ ուզեցել է՛ք ինձ նամակ գրել — չէ՛ք գրել: Լաւ չի. բարեկամին ինչո՞ւ էդպէս շուտ մոռանայ: Դէ ես, գիտէ՛ք որ, յարգում եւ սիրում եմ Ձեզ: Շատ եմ յարգում: Միշտ յիշում եմ ու տխրում: Իսկ Դուք: Դէ, ինչ արած: Հօ չի կարելի կանանց մեղադրել. կանայք միշտ շուտ են մոռանում: Էդպէս է նրանց հակատին գրած: Ճակատին գրածը չես ջնջի:

Քայց հօ բարեկամական տխրութիւնն էլ — յարգանքը դէպի լաւը, լուսաւորը՝ չես ջնջի սրտից: Էն էլ — պետի սրտից: Ինչ արած: (*Ռուսերէն բառեր*). Լէյլի, Լէյլի: Լաւ Լէյլի: Լէյլի:

Կ'ուզեի, որ ինձ նամակ գրէի՛ք: Շատ կ'ուզեի: Ձեզ եամար եօրը բալլադ եմ գրել: Մի բալլադի վերնագիրն է — «Խեղկատակ»: Նշանակում է — (*ուսուրէն բառ*) Ե՛ս եմ: — Խեղկատակ: Ոչինչ լաւ է: Նշանակում է՛ աստ է: Լէյլի, Լէյլի, Լաւ Լէյլի: Լէյլի:

Ի՞նչ է՛ք անում: Ես հիմա ամուսնացել եմ — էլ չեմ իմում:

Քայց որ կինս եկաւ — տխուր կը լինի: Նա լաւ ազգիկ է, Լէյլի: Կասէֆ՝ ինձ ի՞նչ: Հենց էնպէս: Նամակ գրէֆ: Չմտածեմ:

Համբուրում եմ Ձեր ձեռքերը
ԶԱՐԵՆՑ

(1)921, 18 VI, Երեւան

Ք. Տ. Հա, մտացայ ասեմ. Արշալիր Խոնդկարեանի մօտ կան իմ ձեռագրերը. երկու գիրք է. մէկը՝ «Ողջակերպուող կրօն», միւրը՝ «Հմայլ պրօֆիլը»: Խոնդրում եմ վերցնէի նրանից եւ տալ կնոջս: Շատ եմ խնդրում: Կամ ասէֆ իրեն, որ կնոջս տայ: Յետոյ — յիշո՞ւմ էֆ — խոստացե՛լ էիք ինձ բանաստեղծութիւն գրել... յիշեցի Համասնի լէյտենանտ Գլանի փետուրները: Երկու փետուր: Գուցէ օրիորդ է եղել լէյտենանտ Գլանին փետուրներ ուղարկողը: Հեռու — անձանօր ազգիկ:

Վատ եմ տրամադրուած, այսինքն — սենտիմենտալ: — (Ռուսերէն բասեր):

Հիմա ես տրիպտիկներ եմ գրում: Տրիպտիկներ — Արեւիկ: Լէյլի, լաւ Լէյլի: Ախ, ինչքան կարօտել եմ Ձեզ — Լէյլի—Լէյլի—լաւ Լէյլի—Լէյլի:

ԶԱՐԵՆՑ

Սիրելի Լէյլի,

Այս անգամ արգէն այնքան կարօտով եմ գրում. կարօտ — (ռուսերէն բաս), «սիրելի Լէյլի», որ կարծես գրում եմ Արեւիկ, Աշխարհին ու Մարդուն — այսինքն նրանց, որ սիրում եմ ամէնից աւելի եւ սիրում եմ այնպէս, ինչպէս մանկութիւնն են սիրում:

Լէյլի ջան, Լէյլի. Լէյլի. լաւ Լէյլի: Այնքան կարօտել եմ Քեզ, Լէյլի: Ասում են ինձ. կար մի հին աշխարհ, անունը — Նայիրի: Իմն էր այդ աշխարհը — Նայիրին: Արեւ էր — լոյս, կապոյտ, հեռու: Մրգեր կային՝ խաղող, ինչքան շատ, — բատիստ դեղձեր. դեղձեր՝ շրթունքների նման թաւ, աղջկայ այտերի նման դեղձեր — հիւանդ աղջկայ նման դեղձեր, սեխը — ոսկեկոնֆ Շամիրամ — ախ, ինչ յիմար անասուններն են նկարիչները, որ մրգեր նկարելիս գրում են «Natur mort» — մեռած են իրենք, եւ ոչ թէ մրգերն են «մեռեալ»: Ուզում եմ շոգ—շոգ—շոգ լինի, Լէյլի, երկինք լինի — կապոյտ, ինչպէս պողպատի, կամ ծովի փայլը, — մրգեր լինեն — շատ, հասուն, գոյնզգոյն — եւ լինի Լէյլին — Լէյլու աչքերը լինեն եւ ժպիտը խայթող (շոգ արեւի նման):

Այսպէս եմ մտածում ես՝ հանրակացարանի մի անկիւնում ըն-

կած, հանրակացարան, որտեղ սպասում են քան հոգի. կինս պառկել է «մահնակալի վրայ» — ինչի՞ մասին է մտածում, Լէյլի. նա լաւ ազգիկ է, Լէյլի. ես նրան այնքան եմ սիրում, ինչքան Շամիրամը Արային: Եւ երեւակայիր, Լէյլի՛. քաներեք տարեկան ամուսնանալ, լինել պոետ, ֆանտագոր, սիրող — եւ յանկարծ ընկնել հանրակացարան, որտեղ պառկելու տեղ անգամ չկայ, — կիսափայտ — կիսահիւանդ. իսկ ձմեռը: — Իսկ կինս — Արփիկը — Լէյլի: Լէյլի, լաւ Լէյլի, Լէյլի: Լէյլի:

Ես յիմար դրութեան մէջ եմ ընկել, Լէյլի: Սկայ, որ մտնեմ համալսարան — բայց ընկայ մի հանրակացարան... որովհետեւ Պետական համալսարանը հանրակացարան չունի եւ սնունդ չի տալիս: Իսկ ես — ոչ մի կողմիկ չունեմ: Զգիտեմ — ի՞նչ անեմ: Դարից հազարերորդ անգամ մտածում եմ մեր հայրենի դէմքերի սեւութեան մասին, ինչքան սեւ են, գորշ են, ծանր են մերանք, Լէյլի... Իմ դրութիւնը հիմա աւելի քան անել է. մի կողմից գրաւում է Մուկուսն, ուզում ես կրթուել, գրել, մեծ, մեծ, մեծ մտքեր ես յղանում, եսկայական պլաններ, — միւս կողմից... հանրակացարան, կինս — ֆաղցած, ոչ մի ծանօթ դէմք... Հայաստան վերադառնալ ես չեմ ուզում, մնալ այստեղ — չեմ կարող. ի՞նչ անել... Երեւակայիր, Լէյլի, այնքան անել դրութիւն, որ ես վերցրել եւ մի նախկ եմ գրել... ո՞ւմ... Մակնցեանին!! Մի մարդու, որին ամէնից քիչ կ'ուզեցայի գրել. բայց... գրեցի, որովհետեւ սիրում եմ կնոջս, եւ կինս ֆաղցած է. գիտե՞ս ինչ է նշանակում, երբ կիրք ֆաղցած է (*ուստերէն բառեր*): Դրանք իրատուն չունեն ինձ ֆաղցած թողնելու, Լէյլի — եւ

Մնաս բարով, Լէյլի: Սիրտս արագ է խփում. էլ չեմ ուզում գրել: Շատ—շատ—շատ կարօտով իմ հանրակացարանի մութից մինչեւ կովկաս պարգում եմ շրթունքներս, որ համբուրեմ Լէյլիին —

ԶԱՐԵՆՑ

Խնդրում եմ նախկ գրես: Շատ եմ ուզում: Հասցէս — (*ուստերէն*) յանձնել Զ-ին:

Լէյլի, կ'ուզեի գրել, թէ ի՞նչն է ամէնից աւելի իմ վրայ ազդում ու սխրութիւն պատճառում... Ռուս արդի գրականութիւնը: Այն մեծ, հզօր, հսկայ գրականութիւնը հիմա դարձել է — փոքր, անշնորհք, սղոմիւ. մի կողմից — ինչ որ անշնորհք — անբովանդակ (*ուստերէն*) որոնց մէջ մի ընդունակ մարդ կայ (*ուստերէն*), միւս կողմից — պրովետարական գրողներ, որոնց մէջ ո՛չ մի ընդունակ մարդ չկայ... բայց ցան այն է, որ նոյնիսկ դրանց երեկոյթները եւ չեմ կարող յանախել, որովհետեւ... մուսփի սոմսը արժէ 1000 ռ. !!! Մի անգամ գնացի. մտածում էի, այդ մարդիկ գիտե՞ն, որ եթէ ես նրանց մէջ լինեի՛ իրենք կ'ունեցային իսկական պրովետարա-

կան պոետս: Երբ մարդ ոչինչ չունի — չի խանգարի ունենալ մի հըս-
կայ մեծամտութիւն !!!

Նորից բարեւներ եւ նորից — սպասում եմ նամակի .

Քո՛ ՉԱՐԵՆՅ

(1)921, 21 VIII, Մոսկուա
Բարեւներ կնոջիցս

Սիրելի Լէյլի,

Եիստ ցաւում եմ, որ գլուխ չեկաւ քո քարգմանութիւնը, եւ
այս հանգամանքը վերագրում եմ քո անիրաւտ երկչոտութեանը: Ես
առանձնապէս ուզում էի, որ քո անունը վերստին շողշողար մեր գլա-
կան երկնահամարում: Այսպէս քե՛ այնպէս՝ դեռ ուշ չէ եւ դու, ե-
քե՛ միայն ուզեմաս աշխատել այդ ուղղութեամբ, Պետկրատ ընդա-
ռաջ կը գայ գերագանց ուրախութեամբ եւ պատրաստակամութեամբ:

Ինչ վերաբերում է չարաբաստիկ հեռագրին՝ հաւատացած ե-
ղիք, ո՛վ Լէյլի Մեջլումովնա, որ այդ արուել է առանց իմ գիտու-
թեան, երբ ընդհանուր առումով ստուգել եմ պայմանագրերը եւ նը-
ման հեռագրեր ուղարկել բոլոր ժամկէտը խախտողներին: Ինչե՛ւէ:
Գէորգն ասում է, որ հեռագիրը քեզ վրայ քողել է վատ տպաւորու-
թիւն: Իրաւացի ես: Սակայն իրաւացի է, իր հերքիւն, նաեւ հիմ-
նարկը, քանզի դու կարող էիր գտնէ տեղեկացնել մեզ, որ աշխատու-
թիւնը կ'ուշանայ, եւ մենք կարող էինք (ք) ժամկէտը երկարացնել: —
Թողնենք սակայն այս ամէնը, տանք մոռացութեան, — եւ քող քոյլ
տրուի ինձ երագել, որ դու այնուամենայնիւ մի գեղեցիկ օր կրկին
կը փայլատակես մեր գրական հորիզոնում եւ չես մնայ քանիքա-
քաֆոյց, ինչպէս մնում ես մինչեւ հիմա:

Ընդունիր սրտագին ողջոյններս, ո՛վ Լէյլի, ողջ լեր եւ եղիք
սրտով պայծառ ու բարի:

Գալու եմ Մոսկուա, քե՛ երբ չգիտեմ, բայց գալու եմ անպայ-
ման: Եւ կը խօսենք այնժամ ամէն ինչի մասին սրտառուջ եւ ան-
յիշաչար:

Քո՛ Ե. ՉԱՐԵՆՅ

29 X, 1933, Երեւան



ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳԱՆՁԵՐ

Այսուհետև այս ամսին տակ պիտի ներկայացուցին այն գիրքերը, որոնք, մեր գեղեցկացուցիչ ներքին սնունդներու քե խմայական կեանքի արթնացման համար աղքատացին ու բարաստացին արժեք ունին եւ անկրածելու են ընթացող բոլոր խաւերուն:

Ու անոնց նախընտրած էջերը պիտի ըլլան յիշեցումի էջեր, հետո՛ւ ուսումնասիրութեան կամ գրախօսականի փաստաթուղթի կենտրոն:

Ասիկա առաջ, ետեւ եզրակարգով ներկայացուցան Ռուբեն Զարգարեանի եւ Սիւրենիոսի «Անքարնեան մրցանակ»-ի հրատարակութիւնները: Այս անգամ ընթացողին ուշադրութեան կը յանձնենք հայրենի մատարական Ռաֆայել Իշխանեանի «Հայ գրբի պատմութիւն» շարքին առաջին հատորը:

1977ին, Երևանի «Հայաստան» հրատարակչութիւնը յայտ բնօրինակ ծանօթ մատարական Ռաֆայել Իշխանեանի «Հայ գրբի պատմութիւն» աշխատութեան առաջին հատորը:

Հեղինակը օգտագործած է աստուծակ տարիներու ընթացքին կուտակած բանասիրական եւ մատենագիտական իր փաստերը, սակայն ան չէ դժուարացած այդ փաստերուն ամփոփումը կատարելով, այլ, ինչպէս կը յիշէ նախաբանին մէջ, շուրջ քսան տարիներու ընթացքին մասնաւոր ուսումնասիրութեան ենթարկած է հայ գիրքը ու անոր ազդեցութեան պատմութիւնը, ի յայտ բերելով մատենագիտութեան ցարգ անծանօթ աստեղակ մը հնաժողովը:

Սոյն առեւտրային հարստացած՝ Ռ. Իշխանեանի աշխատասիրութիւնը քննական նոր աշխատութիւն մըն է հայ գիրքի պատմութեան օգտին:

Հինգ հատոր ըլլալու մեծ ծրագիրով մը ձամբայ կրած այս աշխատանքին առաջին հատորը կ'ընդգրկէ հայ ազգայնութեան պատմութեան առաջին երկու հարիւրամեակները, այսինքն՝ 16-17րդ դարերը եւ կը տարածուի շուրջ 500 էջերու վրայ, ուր պիտի ներկայանա տակ:

Առաջին դրուին տակ՝ Ռ. Իշխանեան կը պարզէ ազգայնութեան հետ հայերուն ունեցած վաղ արձնութիւնը:

Շարժական ստաւրով գիրքերը բազմազան իր թեմայերի հետ (1430-1440) հանդիսացած է քաղաքակրթութեան նոր դարաշրջանի մը սկզբը:

Այդ թուականին ընդամենը վեց աստիճանակ ետք՝ 1512ին, ազգայնական մամուլը մուտք դարձած է Հայաստան: Այս արագ թափանցումին մէջ մեծ դեր խաղացած են հայ վաճառականները, մասնաւորաբար Աստու Հայը:

Երկրորդ բաժինին մէջ, հեղինակը հարց կը դնէ, թէ արդեօք 15րդ դարուն հայերէն որեւէ ազգայնութիւն կ'աւճէ է: Իր կատարած մասնաւոր սրնումներուն արդիւնքը եղած է սոյն, որ յիշեալ դարուն հրատարակուած հայերէն գիրք չէ յայտնաբերուած:

Երրորդ դրուիլը ամէնէն ծաւալունն է եւ կը կեդրոնանայ հայ ազգայնութեան հիմնադիր Յակոբ Մեղակապետի կենսագրական մանրամասնութիւններուն եւ ազգայնական նախաձեռնութիւն-

ներսն վրայ, խիստ շահեկան տեղեկութիւններ հազարակազմ հայ հնարոյն գերքերէն «Աղբարէ»ի, «Ռւբրարակիւմ»ի, «Պարգաւտոււմար»ի, «Տաղարան»ի ու «Պատարագասեւոր»ի մասին, ճշգրտով անոնց տպագրական յաջորդականութիւնը անփոփոխ փաստաթղթերով:

Ապա՝ Իշխանեան կ'անդրադառնայ հայ մշտկույթի պատմութեան մէջ Յակոբ Մեղապարտի տպագրական գործունէութեան արժէքին, բնագրածելով, որ 16րդ դարուն պէս մասուր ամլութեան ժամանակաշրջանի մը հայ տպագրութեան սկզբնաւորումը եղած է նոյն դարուն մշակութային խոշորագոյն իրադարձութիւնը:

Չորրորդ եւ հինգերորդ գլուխները նուիրած են Արղար Դպիր Թոխաթեցիի, Քոխաթեցիի որդի Սուլթանշահին եւ Յովհաննէս Տերզնցիի կենսադրական զիծերուն եւ տպագրական գործունէութեան:

Վեցերորդ գլուխին տակ Իշխանեան կը խօսի այլալեզու գիրքերու մէջ երեցած 16րդ դարու հայերէն տպագրութիւններուն, ինչպէս նաեւ հայալեզուական առաջին հրատարակութիւններուն մասին:

Եօթներորդ գլուխը նուիրուած է 17րդ դարու հայ տպագրութեան, որ կ'անդրադառնայ Հոսմի, Իլովի, Նոր Զուգայի եւ Կոստանդնուպոլսոյ մէջ հիմնուած տպարաններուն, ինչպէս նաեւ Յովհաննէս Զուգայեցիի եւ Յովհաննէս Անկիւրացիի տպագրական գործունէութեան: Ապա՝ ամփոփ կերպով կը ներկայացնէ եւրոպական տպարաններէն լոյս ընծայուած հայատառ հրատարակութիւնները:

Իր «Հայ գրէի պատմութիւն» աշխատութեան վերջին գլուխը Իշխանեան նուիրած է Ռուսիան տպարանի գործունէութեան:

Այս տպարանին հիմնադրումով, կ'ընդգծէ հեղինակը, կը սկսի հայ հին գիրքի պատմութեան երկրորդ շրջանը: Սոյն բաժինին մէջ կը պատկերացունի մամթեքաւոր մէջ հիմնուած հայկական տպարանին գործունէութիւնը, Ռուսիան կրկանողի հրատարակչական գործը, հայերէն Աստուածաշունչի առաջին հրատարակութեան պատմութիւնը, անոր առաւելուն ու պատկերներուն ընարութեան աշխատանքները եւ ամթեքաւորումեան այլ հրատարակութեանց շահեկան մանրամասնութիւնները:

Իշխանեան հաս կը պատկերացնէ նաեւ Լիվոնի եւ, մասնաւորաբար՝ Մարտիի մէջ ծաւալած Ռուսիան տպարանին աշխատանքները, կը ներկայացնէ Յովհաննէս Հոլովը՝ իբրեւ 17րդ դարու հայկական դրահրատարակչութեան ետանդուն գործիչ, ինչպէս եւ կ'անդրադառնայ աշխարհաբար տալին տպագիր զիրքին ու, հետքին աւարտին՝ ժամանակագրական կարգով կը ներկայացնէ անուանացանկը Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգիսի տպարաններէն լոյս ընծայուած գործերուն:

Իր քաղած տեղեկութիւնները փաստական տուեալներու վրայ հիմնաւորելով, արամբարանական հետեւորութիւններով եւ քննարկուած նութիւններուն լուսանկարչական պատճէնները սւշադրութեան ընծայելով՝ Թաֆայէլ Իշխանեան «Հայ գրէի պատմութիւն» շարքին այս տալին հասարակ հայ մշակույթի գանձարանին կ'ընծայէ թանկարժէք աշխատութիւն մը:



ՔԱԹՈՒԻՆ ՐԷՅՆ



Այս տարի, Փարիզի Աթուք հրատարակչատունը Ֆրանսերէն լեզուով հրատարակեց անգլիացի բանաստեղծուհի և ներհան մատուցական Գաբրիէլ Րէյնի յուշերը՝ «Մնաք բարով, երջանիկ մարգեր» անունին սակ, Տիան աը Մարկըրի և Ֆրանսուա Չավիէ Ժոժարի միացեալ թարգմանութեամբ:

Տիան աը Մարկըրի հատորին գրած է ընդարձակ յատաձարան մը, ուր առաջին անգամ ըլլալով Ֆրանսացի ընթերցողին կը ներկայացուի անգլիացի հռոմէական ոյս բանաստեղծուհին:

«Մէկը անգլիացի մեծագոյն բանաստեղծներէն, մէկը բնագոյն լատացոյն միտքերէն՝ Քարթին Րէյն, վերջապէս կը դադրի մեզի համար անծանօթ մը ըլլալէ»:

Քաթլին Րէյն զարդ հրատարակած է բանաստեղծական ութ հատորներ, ստաջինը՝ «Քար եւ ծաղիկ», 1943ին, և վերջինը՝ «Օվաղ դիմանկարը», 1977ին:

Մտեղծարարական խորհուրդը հասկնալու բուն մեղմին սակ՝ ան խոր ուսումնասիրութեան ենթարկած է ուրիշներու վնասուածները, աւ ոյզ խորաթափանց ուսումնասիրութիւններ ստորագրելով՝ Քուլըրիճի, Եիթոի, Սէն-Ճոն Փերոսի և, մանաւանդ՝ Ուիլիամ Պլէբի մասին:

Քաթլին Րէյն չէ մասնակցած գրական և ընկերային և ո՛չ մէկ խմբաւարումի և այն ստեղծերը մարդիկ այնքան շատ կը խօսէին կեսը ա-

յոտադրութեան մասին, ան շեշտը կը դնէր մարդկային ադատադրութեան անհրաժեշտութեան վերայ: Ան մինչև անգամ աւելի առաջ գնաց, հաշտեցնելով ընթերցողը ո՛յն գաղափարին հետ, որ մէ հեղահան խոյս կու տային ամէնքը, — ըլլալու դժուարութեան:

**

Գրելու համար
Բոլորը, գորս այս վայրկեանին կը պարփակեմ,
Անապատը պէտք է թափեմ
Ժամացոյցին մէջ աւազի,
Ծովը անցնեմ
Ժամացոյցին մէջ ջուրի.
Հատիկ առ հատիկ, կաթիլ առ կաթիլ,
Ներծծեմ անհետք ու անչափելի
Համբ ծովերը եւ աւազները:

Այս բոլորը, որովհետեւ
Երկրին օրերն ու գիշերները կը ժայթփին վրաս,
Մակընթաց ծովերն ու աւազները մէջէս կը սահին,
Իսկ ես միայն երկու ձեռքեր
Ու սիրտ մը ունիմ
Անապատը ու ծովը բռնելու համար:

Անոնց ո՞ր մասը կրնամ պահպանել:
Ինձմէ կը փախչին ու կը խուսափին:
Մակընթաց ջուրեր գիւս դուրս կը նետեն
Եւ անապատը
Ուռներուս տակ կը սահի:

ՔԱԹՈՒԻՆ ՐԷՅՆ

ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ...

Վերջերս, Փարիզի Կալիմար հրատարակչութիւնը լոյս ընծայեց Մայլը Արլէն Կրտսերի «Դէպի Արարատ» անուն դարձը, որ Ֆրանսայի մատուցական շրջանակներուն մէջ ևս արժանացաւ բարձր գնահատութեան:

Ինչպէս ծանօթ է, ինքնութեան մը վնասուածութիւն նուերուած Մայլը Արլէն Կրտսերի այս հատորը առաջին անգամ լոյս տեսաւ Միացեալ Նահանգներուն մէջ, 1975ին, և խանդավառօրէն սղջունուեցաւ մամուլին կողմէ, ի՛ մասնաւորի «Նիւ Եորք Թայմզ պուք ռըվիլ», «Նիւուզ ուիք», «Թայմ» և «Ինքըրմէշնըսի Կրտսերի քրիպիլ» անուն թերթերու էջերուն: «Թայմ» շարաթաթերթը սա բողերով կ'արձանագրէր իր խանդավառութիւնը:

«Դէպի Արարատ» գործին մէջ Մայլը Արլէն Կրտսեր իր ազգի կը դնէ մոռցուած ժողովուրդ մը վերագտնելու խնդիրը, գոր լուծելու համար ան կ'ստարած է անթերի հետազոտութիւն մը:



ՄԱՅՔԻ ԱՐԼԷՆ ԿՐՏՍԵՐ

...Պատգ է եւ ոգեշունչ Մայլի Արլէնի գրիչը, որուն տակ կը կենդանանայ խրափանչիւր տող եւ ուր, տասնեակ սարիքներու լուսքեմէն հետք՝ մարդասպանութեան գոհերը իրեց խօսքը կ'ըսեն»:

«Գեղի Արարատ» հատորին կողմնաբեկ հրատարակութիւնը նոյն ջերմ ընդունելութիւնը գրատու նաեւ Քչանտակուն մամուլին մէջ, որուն մեծատարած անդամներէն «Էլ Մոնտ»ի սիւնակներուն ժերմար Շալիս կը գրէ, թէ՛

«Անկէկա ամերիկեան վերջին տարիներու գրականութեան լուսագոյն գիրքերէն մէկն է: ... Հրատարակուելով գեղի ազգային ակումբները կատարած վերադարձի մը պատմութիւնը բնող «Արմտաներ» վէպէն առաջ, Մայլի Արլէն կրտսերի շարժող հատորը հանդիսացող «Գեղի Արարատ»-ը գլուխ-գործոց մըն է: Ինքնակենսագրական այս գիրքը, որ լի է պատմական տարրերով, չի կրնար անտարբեր ձգել բոլոր անոնք, որոնք համակուած են հետազոտելիք անցեալ մը ունենալու գագացումով»:

ԱՐՇԻԼ ԿՈՐԻԻ

Յատմելոյ Նոյեմբերի 16ին, Նուրբերի թանդարանին մէջ բացուեց պիտի կատարուի Արշիլ Կորիի վերադանուած սրմանակարներուն, զորս հալոյցի նկարիչը պատրաստած էր Շուրբի

օդակայանին համար, 1936-37 տարիներուն: Յուսարութիւնը տեղի կ'ունենայ «Անորմ որմնանկարներ» անուան տակ:

Որմանակարները, որոնք վերադանուեցան 1973ին, կրտսած կը նկատուէին երեսուն տարիներէ ի վեր: Անոնք թաքնուած էին օդակայանի կառավարման շէնքին մէջ, ներկի 14 խաւերու տակ:

Տասը երեսուցամ հասնող շարքէն, աւարտած՝ 1937ին, միայն երկու հաս վերադրած են:

Այս երկուքը այն միակ որմանակարներն են, որոնք կը վերադրին արուեստագէտին սրմանը կարներու հարուստ շարքէն:

Իր սրբեզոյական մասէն տառ, 1948ին, Կորիի կեդրոնական գէմք մըն էր Նիւ Յորքի արուեստագէտներու զորոյն մէջ եւ զօրաւոր ազդեցութիւն ունեցաւ վերացական արտայայտչապաշտութեան զարգացման վրայ: Նուրբի որմանակարներու շարքին մէջ, ան սուտանակներու իրական մասերը եւ անոնց զորմանութիւնը փոխակերպած է վերացական ձեւերու:

Կորիի կրտսած որմանակարներու ինտրատուէին սկսաւ արուեստարտն Րութ Պատմըն: Նիւ Յորքի եւ Նիւ Ճըրզիի Փորթ Օթորիթիի ինտատուէի խմբակ մը յաջողեցաւ յայտնաբերել որմանակարները, որոնք այնուհետեւ վերցուեցան օդակայանի նախկին վերջակայանի պատերէն, եւ վերանորոգուեցան՝ Արուեստի Պահպանութեան Ազգային Ֆնտի եւ Փորթ Օթորիթիի կողմէ կառմ մասնաւոր յատկացումով:

Յուսարութեան իրբեւ հիւր տնօրէն տիկին Պատմըն բնարած է Կորիէն նկարներ, ուսումնասիրական փորձ-նկարներ եւ գծադրութիւններ: Անոնցմէ շատերը ղեռեւս ցուցադրուած չեն: Տիկին Պատմըն հաւաքած է նաեւ վաւերագրային լուսանկարներ, որոնք պիտի բացատրեն որմանակարներուն պատմական հիմունքները:

ԹՐՔԱԿԱՆ ՈՒՒՍՔԻ

Փարիզի «Գեղնգէն լիքերը» կրտստայ հանդէսին մէջ, վերի խորագրին տակ, Լօր Մարի Լափուսի կարճ գրախօսական մը ստորագրած է՝ ի մտին թուրք վեպայիւր Չէթըն Ալթանի «Նիւսի» անուն 248 էջոց հատորին, զոր Քրտաներէնի թարգմանած է ուրիշ Քրտանուհի մը՝ Ժիւլի Փայլէսի:

Վէպին դիտաւոր հերոսը կը կոչուի Անիծեալ Շունը եւ զորմանութիւնը տեղի կ'ունենայ Սթամպուլի մէջ: Անիծեալ Շունին հետ ընթերցողը մանկու գայ Սթամպուլի մէկ ծայրէն միւսը, «Բայց, — կ'ըսէ զրախօս Քրտանուհին, — մեմէ շատ ենու եմք այն պատկերացումներէն, զորս ունէին սրբաւտեան մարդերը Վասփարի հրաշալիքներուն մասին: Չէրքն Այրան կը բողազերծէ միւս Սքամ-

պուր, քշուառութեան, չարչարամէի ու հնչումի Սքամպուրք:

Անիծեալ Շտեր, ինչդէս նաև զէպին միտ հերոսները յաճախ կը ձեռքազարտին, լինչի կ'ենթարկուին ամէնզը եւ միշտ, սրտհետեւ անոնք ոչ կ'ըսեն, իւրաքանչիւրը իրեն յատուկ ձեւով մը:

«Ուիւմի՞ն, ըստ գրութեան, կը խորհրդանշէ ճշուածութիւնը՝ զբամի եւ չարչարանքի ու խորհի մէջ:



«ԲԱՏԱՐՁԱԿ Ի ՈՄՆԱԹԻՉՄԸ»

«Յիկապոս» թերթին Սեպտեմբեր 17 թուակիր համարէն կ'իմանանք, որ Քանդակ Աէն-Պրի այս Հեղինակներին հրատարակութեան պիտի տայ ուսումնասիրութիւն մը, որ խորագրուած է՝ «Բատարձակ ումանքիզմը»: Այդ համարէն, որ կոչուած է բլլալու նոր շարժումի մը նախանակը, հեղինակը թերթին տրամադրած է պարիկ հատուած մը, որուն վերջին տողերուն վրայ կատարուած են առ հաստատումները:—

«Այսօր ումանքիզմը կը ջնանայ մեր ապագային վրայ, անկիս նինջն է մեր հերկային, համգիւտը՝ անցեալ օրերու, սրանք պիտի գան: Գնդեցիկ վաղորդակի մը լայսի շարքը, աշխարհը՝ գիշերուան մը:

«Նքէ ումանքիզմը գոյութիւն սնեցած չըլլար, սրդի ժամանակներու Բազաւական մարդիկը ի՞նչ պիտի կարենային առաջարկել: Ոչինչ, ապահովարար: Իրաւանչիւր քեմա, սրուն կրքիւնութիւնը կը լսեն օրուան ամբողջ տեսողութեան՝ ումանքիզմի, բնութեան վերադասնալու: պարզ արժէքները եւ յարգամէր շքեպատին հանդէպ, ազատարիւնը՝ սերոյ կայտերուն, ճաշակը՝ բոշ գերագոյնի մը, բնիզմուսած անատապաշտութեան մը, առանց դադարի ոգիտընուած անհուկան վերքուտի մը, բախտը՝ իւթափի մը, տաքաշխարհիկ խեղալ մը, ըմբաստութիւն մը՝ բնդդիւ մեկնական Բազաւակքութեան հաստատումներ են ումանքիզմի հաշույն: Ջարմանայի չէ կասեկ նայակէս, որ դարը բացառակօրէն ումանքիզմի դարձած է թէ՛ պատկերներու ճաշակին մէջ, զոր ինք կը փնտռէ իր համոյէին համար, թէ՛ անձնատրութիւններուն մէջ, գորս ինք կ'արտապրէ իր օգտին համար, եւ թէ՛ յիզուին մէջ, զոր կը գործածէ իր հեշտամէին համար:

«Յոմանքիզմը ամենոր է, հո՛ւ եւ իրմա՛, Բայց դժուար է գայն ստեմանել միշտցին մէջ եւ գար է տեպատրել ժամանակին մէջ: Վասնզի յոլոր մեծ շարժումներուն պէս, սրանք կը բխին խորէն եւ կը պարեն մակերեսին վրայ, ումանքիզմը եւս ճնու ումանքիզմէն առաջ եւ սիւտիկ ապրի իր մահն հաւ՛:

«ԳՈՒԿԱԿ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍ» — Գ.



«Գուրակ Արշիպեղագոս»ի առաջին համարին հրատարակութեան շորս տարի ետք, զանի մը ամիս առաջ Ամենիկայի մէջ անդիւրէն յեզուով յաշտ սեռու շարքին երբորդ եւ վերջին համարը, որ բոս թերթեալ վկայութեան, յայտնա մեծ հատարբարութեամբ կարգադրուեցաւ միլիոնաւոր ընթերցողներու կողմէ:

Քննադատները եւս չիչոյան գապէլ իրենց գործածնքը կարճեղջիւրի գործարարած վրէժխօսի ճիգին ի տես:

«Թայմ» շարժաթղթի գրականներէն մէկը, Փիլիք Փրեւորա, կը գրէ.

«Առանց սրեւ կատկածի կարելի է բոլ, որ գրականութեան պատմութեան մէջ դեռ ծանօթ չէ տըմեկեղինեան զիցագնեբարութեան պէս ուրիշ գիրք մը: Ենդիրը ո՛չ միայն ունոր գրական օրձակիմներուն մէջ է, այլեւ՝ ծաւալին, որ կը վկայէ հսկայ ուժի մը մասին: ...Անոր ծաւալը, անգլեթեմի քարգամուսած երեք հատարք միարմ կը պալուսակէ: Վտարարպէս երկու հազար էջ»:

Գրախօսը, ժամանոր ընդդումձով մը՝ Մարժեկեղինի վերջին համարէն մէջերում է այն խօսքերը, որոնք ուղղուած են սրեւտեան ընթերցողին.

«Միայն այն ստեմ զուէ բուրբ կը հասկրնաւ նշմարտութիւնը, երբ ձեր ձեռքերը ետ ու նրամակի սակ տեմա՛մը կը միբնուիք մեր աշխարհագրութիւն մէջ»:

ԼԻՐԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍՈՒՀՄԱՆ 27 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՅՍՈՒ 5 Լ. ՈՍԿԻ

پاكين

مجلة شهرية ، أدبية وفنية علمية
مدیر المسؤول
السید ارتین کارنیک قزاقچیان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱՍԱՆՈՒԹԵԱՆ
ՆԻ ԱՐՈՒԵՍՏԻ

ՆՍՐԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳՅԱՆ

Հեռագրային՝ 296898